ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

7

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

7-րդ դասարանի դասագիրք

Մաս 2

Խմբագրությամբ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Բ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ և

պրոֆ. Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ

ԵՐԵՎԱՆ
ՄԱՆՄԱՐ
MANMAR
2019

ՏԳ 373.167.1: 941(479.25) (075.3)
ԳՄԴ 63.3 (2Հ) գ72
Հ 282

Հ 282 Հայոց պատմություն (Միջին դարեր):
7-րդ դասարանի դասագիրք: Մաս 2 /Բ. Հարությունյան,
Հ. Սարգարյան, Ա. Շահնազարյան, Վլ. Բարխուդարյան, Ի. Ղարիբյան,
Պ. Հովհաննիսյան/ – Եր., «ՄԱՆՄԱՐ», 2014. - 96 էջ:

Դասագրքի հեղինակներ՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Բ. Հ. Հարությունյան** – ներածություն, թեմա՝ 1, 2, 5

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Հ. Գ. Սարգարյան** – թեմա՝ 3, 4 (§ 1, 2), 8, 9

Պատմ. գիտ. թեկն., դոցենտ **Ա. Ի. Շահնազարյան** – թեմա՝ 4 (§ 3), 7, 12

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Վլ. Բ. Բարխուդարյան** – թեմա՝ 6

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Ի. Գ. Ղարիբյան** – թեմա՝ 10, 11 (§ 1, 2)

Պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր **Պ. Հ. Հովհաննիսյան** – թեմա՝ 11 (§ 3)

Դասագրքի մեթոդական աշխատանքներին մասնակցել են
Ա. Գյուլբուդաղյանը, Ք. Յախշյանը, Ա. Շահնազարյանը և
Վ. Պարսամյանը:

ISBN 978-9939-62-111-1

ՀՏԳ 373.167.1: 941(479.25) (075.3)
ԳՄԴ 63.3 (2Հ) գ72

© Հարությունյան Բ., Սարգարյան Հ., Շահնազարյան Ա.,
Բարխուդարյան Վլ., Ղարիբյան Ի., Հովհաննիսյան Պ., 2014
© «ՄԱՆՄԱՐ», 2014
© ԴՏՀՏՇՀ, 2014

4. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՄՆԱՏՈՒՄԸ

Ենթակա թագավորությունների առաջացումը: Հայոց Սմբատ I թագավորը, թագ տալով վրաց իշխան Ատրներսեհին և Հայոց Արևելից կողմերի իշխան Համամին, ավատատիրական անջատողական ձգտումների համար պարարտ հող նախապատրաստեց: Ճիշտ է, նրանք ենթարկվում էին Սմբատ I-ին, որն իրեն կոչում էր ***«Տիեզերակալ, թագավոր Հայոց և Վրաց»***: Ինչպես տեսանք, Արծրունիների գլխավորությամբ 908թ. թագավորության վերածվեց նաև Վասպուրականը: Աշոտ II-ի հաջորդները լուրջ քայլեր ձեռնարկեցին՝ ուժեղացնելու կենտրոնական իշխանությունը: Սակայն նրանք հանդիպեցին ոչ միայն իշխանական դասի համառ դիմադրությանը, այլև արտաքին ուժերի դիվանագիտական կամ զինված միջամտությանը:

Տնտեսական կյանքի զարգացումը երկրի ուժեղ իշխանություններում ձևավորեց տնտեսական կենտրոններ: Դա կենտրոնական իշխանությունից անջատվելու ձգտումների նախադրյալներ ստեղծեց: Անջատողական այդ փորձերը խրախուսվում էին Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության կողմից: Նրանցից առաջինը չէր հաշտվում Հայաստանը կորցնելու փաստի հետ: Բյուզանդիան իր հերթին հայկական տարածքները կայսրությանը միացնելու քաղաքականություն էր վարում: Նա հետևողականորեն ու խորամանկ քայլերով իրականացնում էր իր ծրագրերը: Նրա այդ քաղաքականությունը խարխլում էր հայկական պետության միասնությունն ու հզորությունը:

Բագրատունի զահակալներն ամեն ինչ անում էին կենտրոնաձիգ իշխանությունն ուժեղացնելու համար: Սկզբնապես նրանք հասան նկատելի հաջողությունների, սակայն ավատատիրական անջատողական ձգտումներն ավելի ուժեղ գտնվեցին: X դ. սկզբներից Հայաստանում ձևավորվեցին լայն ինքնավարություն ունեցող մի քանի տեղական թագավորություններ և իշխանություններ:

Վասպուրականի թագավորությունը: Հիշյալ իշխանություններից ամենաընդարձակը և ամենազորեղը Վասպուրականի Արծրունյաց իշխանությունն էր, որը 908թ. Գագիկ Արծրունու կողմից թագավորություն հռչակվեց: Ընդգրկում էր Վանա և Կապուտան (Ուրմիո) լճերի միջև ընկած ընդարձակ տարածքը: Վասպուրականով էր անցնում քարավանային միջազգային առևտրի հարավային ուղին: Այդ ուղու վրա առաջացել էին առևտրական խոշոր կենտրոններ՝ Վանը, Սալմաստը, Բերկրին, Արճեշը, Մանազկերտը և այլն:

Գագիկ Արծրունին ընդունեց Բագրատունյաց գահակալի գերիշխանությունը, որը հաճախ ձևական բնույթ էր կրում:

Վանա լիճը և շրջակայքը

Գագիկ Արծրունու և նրա հաջորդների օրոք Վասպուրականի թագավորությունը տնտեսական և մշակութային մեծ վերելք ապրեց: Վասպուրականով մեկ լայն շինարարություն ծավալվեց: ***Աղթամար կղզին*** արհեստականորեն մեծացվեց: Այնտեղ թագավորը կառուցեց ***Սբ Խաչ*** եկեղեցին, քաղաք ու արքունական պալատներ: Հետագայում լճի ջրերի բարձրացման հետևանքով քաղաքն անցավ ջրի տակ:

XI դ. սկզբին այս թագավորությունն ուներ 8 քաղաք, 72 բերդ, 115 վանք և 4000-ից ավելի գյուղեր: Սոտավոր հաշվարկով այն ունեցել է շուրջ 1 միլիոն բնակիչ:

Վանանդի (Կարսի) թագավորությունը: Կարսում ***Մուշեղ Բագրատունու*** թագավոր հռչակվելով՝ 963թ. ձևավորվեց ***Վանանդի*** կամ ***Կարսի*** թագավորությունը, որը սերտ քաղաքական և տնտեսական հարաբերությունների մեջ էր Անիի Բագրատունյաց թագավորության հետ: Գոյատևելով մեկ դար (963-1065թթ.)՝ կարևոր դեր կատարեց Հայոց տերության կազմում: Աշոտ III թագավորը ճանաչեց Մուշեղի գահակալությունը՝ պայմանով, որ նա ընդունի իր գերագույն իշխանությունը: Դրանով ստեղծվեց Բագրատունյաց երկրորդ թագավորությունը:

Բագրատունյաց արքաներ Գուրգենը և Սմբատ II-ը (բարձրաքանդակ, Սանահինի վանք)

Մուշեղի հաջորդ Աբասն իր երկարամյա թագավորության ընթացքում պահպանեց հավատարմությունը Անիի շահնշահերի հանդեպ: Նա մեծ ուշադրություն դարձրեց թագավորության ռազմական ուժը մեծացնելու վրա: Աբասի լավ զինված հեծյալ և հետևակ զորաբանակները հաջողությամբ մասնակցեցին արաբական ամիրայությունների դեմ մղված պատերազմներին:

Տաշիր-Զորագետի կամ Լոռու թագավորությունը: Բագրատունիների արքայատոհմի մի ճյուղն էլ թագավորություն հիմնեց Տաշիր-Զորագետում (Լոռիում): Տաշիրի կառավարիչ, Աշոտ III-ի որդի Գուրգենը Սմբատ II թագավորից արքայական տիտղոս ստացավ և 982թ. հիմք դրեց Տաշիր-Զորագետի թագավորությանը, որը Գուրգենի ***Կյուրիկե*** տեղական անվան պատճառով ստացավ ***Կյուրիկյան թագավորություն*** անվանումը: Այս թագավորությունը ևս ճանաչում էր Բագրատունյաց կենտրոնական իշխանությունը:

Տաշիր-Զորագետի թագավորությունը առևտրական սերտ կապեր է ունեցել Անիի, Դվինի, Տփղիսի (Թիֆլիս) և այլ քաղաքների հետ՝ ակտիվորեն մասնակցելով միջազգային տարանցիկ առևտրին:

Կյուրիկյանների թագավորությունն իր հզորության գագաթնակետին հասավ Գուրգենի որդի ***Դավիթ Անհողինի*** գահակալության շրջանում (989-1048թթ.): Նա մեծապես ընդարձակեց թագավորության տարածքն արևելքում՝ ի հաշիվ Ուտիքի, և հյուսիսում՝ ***Տփղիսի ամիրայության:*** Թագավորության մայրաքաղաքն էր ***Լոռե բերդաքաղաքը***, որի ավերակները պահպանվել են Ստեփանավան քաղաքի հարևանությամբ:

Սյունիքի թագավորությունը: 987թ. իրեն թագավոր հռչակեց նաև Սյունիքի իշխան ***Սմբատը:*** Նա նույնպես ճանաչեց Բագրատունիների Հայոց տերության գերագույն իշխանությունը: Այս թագավորությունը երկար կյանք ունեցավ և գոյատևեց շուրջ երկու դար: Սկզբում թագավորության կենտրոնը ***Սյունի ավանն*** էր (այժմ՝ ***Սիսիան***): Սակայն, ավելի ուշ, թագավորության հյուսիսային գավառներն Անիի կենտրոնական թագավորությանը միացվելուց հետո մայրաքաղաքը տեղափոխվեց ***Կապան,*** որը գտնվում էր ռազմավարական նշանակություն ունեցող առևտրական ճանապարհների վրա:

Սյունիքն առևտրական ուղիներով կապված էր Անիի թագավորության, Աղվանքի և Ատրպատականի տնտեսական ու վարչական կենտրոնների հետ:

Թագավորությունը մեծ ծաղկում ապրեց ***Վասակ*** թագավորի օրոք: Զնաչած իր համեմատաբար ոչ մեծ տարածքին՝ XII դ. ուներ 43 ամրոց, 48 վանք և 1000-ից ավելի գյուղ: Քաղաքային կյանքը թույլ էր զարգացած: Հիշատակվում է միայն ***Կապանը:***

Ենթակա թագավորությունների հանդես գալով Հայոց ընդհանրական գահակալների տիրույթները կենտրոնացվեցին միայն մայրաքաղաք Անիի շրջակա գավառներում: Այդ տարածքը՝ Բագրատունիների կենտրոնական թագավորությունը, երկրի մայրաքաղաքի անունով կոչվում էր ***Անիի թագավորություն:***

Տաթևի վանքը (X դ.)

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք էին Բագրատունյաց թագավորության տրոհման պատճառները:
2. Ինչ թագավորություններ ձևավորվեցին Հայոց տերության կազմում:
3. Բագրատունյաց արքայատոհմի կրտսեր ճյուղերն ի՞նչ թագավորություններ հիմնեցին:
4. Ինչպե՞ս էր կոչվում հայ Բագրատունիների կենտրոնական թագավորությունը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• Վասպուրականի թագավորություն • Վանանդի (Կարսի) թագավորություն • Տաշիր-Զորագետի (Լոռու) թագավորություն • Սյունիքի թագավորություն • Գագիկ Արծրունի՝ Վասպուրականի թագավոր • Մուշեղ և Աբաս Բագրատունիներ՝ Կարսի թագավորներ • Գուրգեն (Կյուրիկե)՝ Լոռու թագավոր • Դավիթ Անհողին՝ Լոռու թագավոր • Սմբատ՝ Սյունյաց թագավոր • Սյունի (Սիսիան) • Կապան

5. ԱՆԻԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Բագրատունյաց թագավորության թուլացումը: Գագիկ I-ը Հայոց տերության վերջին հզոր թագավորն էր: Նրա մահից անմիջապես հետո անջատողական ձգտումներն զգալ տվեցին անգամ Անիի թագավորական ընտանիքում: Արքայական իշխանության համար Գագիկ I-ի որդիների միջև պայքարը վերաճեց զինված ընդհարման, որին միջամտեցին հարևան պետությունները: Ի վերջո, հայոց սպարապետ ***Վահրամ Պահլավունու*** և վրաց թագավորի միջամտությամբ եղբայրները հաշտվեցին: Ավագ որդին՝ ***Հովհաննես-Սմբատը***, որին պաշտպանում էր պալատական վերնախավը, ժառանգեց գահը՝ ստանալով Անի քաղաքը, Շիրակը և հարևան գավառները: Նրա կրտսեր եղբայր, եռանդուն և ռազմիկ ***Աշոտ IV-ին*** բաժին ընկան Անիի թագավորության հարավային և արևելյան շրջանները: Հովհաննես-Սմբատի մահվանից հետո Աշոտը ժառանգելու էր նրա տիրույթները: Փաստորեն՝ Անիի թագավորությունը մասնատվեց, իսկ նրան ենթակա թագավորությունները գործնականում անկախ դարձան:

Ստեղծված դրությունից անմիջապես օգտվեց Բյուզանդիան: Շուտով նա գրավեց ***Տայքը:*** Տայքը վերադարձնելու փորձը ձախողվեց: 1022թ. վրաց թագավորությունը ստիպված էր Տրապիզոնում հաշտության բանակցություններ սկսել բյուզանդացիների հետ: Անիի թագավորության կողմից բանակցություններին մասնակցեց Հայոց ***Պետրոս Գետադարձ*** կաթողիկոսը: Նա պատկանում էր բյուզանդամետ հոսանքին: Եվ երբ բյուզանդական ***Վասիլ II կայսրը*** պահանջեց, որ Անիի թագավորությունը հանձնվի կայսրությանը, Հովհաննես-Սմբատը համաձայնեց: Նա ստորագրեց մի խայտառակ կտակ, որով իր

տիրույթներն իր մահից հետո պետք է անցնեին Բյուզանդիային: Դրանով Հայոց թագավորությունը հայտնվեց կործանման եզրին:

Բյուզանդիան մինչ այդ Հայաստանում հասել էր նշանակալից հաջողությունների: 968թ. իրեն էր միացրել ***Տարոնը***, շատ չանցած՝ նաև ***Մանազկերտը***, 1001թ.՝ ***Տայքը***, իսկ 1021թ.՝ ***Վասպուրականի թագավորությունը:*** Վասպուրականի ***Սենեքերիմ*** թագավորը, նեղվելով սելջուկ-թյուրքերից, ստիպված համաձայնել էր իր տիրույթների փոխարեն հողեր ստանալ Սեբաստիա քաղաքի շրջակայքում: Թագավորի հետ Սեբաստիա գաղթեցին նրա 14 հազար զինակիցներն իրենց ընտանիքների հետ: Բյուզանդացիները չկարողացան ընկճել միայն ***Սասունի իշխանությանը:***

Պայքար Անիի թագավորության պահպանման համար: Հովհաննես-Սմբատի՝ Անին բյուզանդացիներին հանձնելու լուրը Հայաստան հասավ ուշացումով, իսկ Պետրոս Գետադարձ կաթողիկոսը երկար ժամանակ չհանդգնեց երկիր վերադառնալ: Այդ պատճառով էլ եղբայրների միջև նոր բախում տեղի չունեցավ: Այս կացությունը շարունակվեց մինչև 1041թ., երբ մահացավ Աշոտը, իսկ այնուհետև՝ Հովհաննես-Սմբատը: Նրանց մահից հետո բյուզանդամետ ուժերը՝ հանձինս Անի վերադարձած Պետրոս Գետադարձի և թագավորի խնամակալ ***Վեստ Սարգիս իշխանի,*** խիստ ակտիվացան:

Բյուզանդիայի կայսր Վասիլ II-ի դրամ

Բյուզանդական կայսրն Անին գրավելու համար անմիջապես մեծ բանակ ուղարկեց Հայաստան: Քաղաքի պաշտպանության և պետության պահպանման համար ոտքի ելավ Անիի ամբողջ բնակչությունը: Պաշտպանությունը գլխավորեց սպարապետ ***Վահրամ Պահլավունին:*** Անեցիներն ասում էին. ***«Մենք ամենքս պարտասպ ենք մեռնելու, բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին, որոնք պարտապարտ կերպով եկել են մեր դեմ և կամենում են հափշտակել մեր երկիրը»:*** Քաղաքի պաշտպանների թիվը 30 հազար էր: Նրանք, դուրս գալով քաղաքից, ալեզարդ սպարապետի գլխավորությամբ մեծ ջարդ տվեցին բյուզանդական զորքին, որը փախուստի դիմեց: Այդ հաղթանակից հետո թագավոր հռչակվեց Աշոտ IV-ի տասնվեցամյա որդի ***Գագիկ II-ը*** (1042-1045թթ.): Դա պետությունն ամրապնդելու նպատակով կատարված կարևոր և անհրաժեշտ քայլ էր: Պատանի թագավորը ճնշեց անհնազանդ իշխանների ելույթները և ձերբակալեց Վեստ Սարգսին: Նա հանդես բերեց պետական և զինվորական գործչի անուրանալի հատկություններ: Հետ վերցնելով արքունի գանձերը Վեստ Սարգսից՝ նա ամրապնդեց իր դիրքերը:

Անհաջողությամբ ավարտվեցին նաև Անին գրավելու բյուզանդացիների հետագա արշավանքները: Բյուզանդական զորամասերը խուճապահար փախչում էին անեցիների հարվածների ներքո: Տեսնելով, որ ուժով հաջողության հասնել չի կարողանում, Բյուզանդիան փոխեց իր քաղաքականությունը:

Զարմանալիորեն անխոհեմ քաղաքականություն սկսեց վարել Գագիկ II թագավորը: Հավատալով Վեստ Սարգսի հավաստիացումներին՝ նրան ազատ արձակեց և մտերմացավ Պետրոս Գետադարձ կաթողիկոսի հետ:

Գագիկ II

Անիի թագավորության անկումը: Կայսրը, իբր թե վիճելի հարցերը լուծելու համար, Գագիկ II-ին հրավիրեց Կոստանդնուպոլիս: Սպարապետ Վահրամ Պահլավունին, նշանավոր գիտնական ու քաղաքական գործիչ Գրիգոր ***Մագիստրոս Պահլավունին*** և նրանց կողմնակիցները դեմ էին Հայոց թագավորի Կոստանդնուպոլիս գնալուն: Սկզբում նրանց հորդորով Գագիկը հրաժարվեց հրավերից՝ հասկանալով, որ կայսրը խարդախ նպատակներ է հետապնդում: Պատանի թագավորն ալեզարդ սպարապետի հետ ամուր կանգնած էր հայկական պետությունը պաշտպանելու դիրքերում: Սակայն, շատ չանցած, նա տեղի տվեց կաթողիկոսի ու Վեստ Սարգսի համառ հորդորներին և 1044թ. մեկնեց Բյուզանդիայի մայրաքաղաք: Բանակցությունների փոխարեն նրանից պահանջեցին Անին իր շրջակայքով, ինչը Գագիկ II-ը խիզախորեն մերժեց: Նա կայսրին ամոթանք տվեց հետևյալ խոսքերով. ***«Հայոց կան կերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ կա Հայոց երկիրը: Դու ինձ խաբեությամբ ես բերել Կոստանդնուպոլիս»:*** Դրանից հետո կայսրը նրան կալանավորեց և թույլ չտվեց Հայաստան վերադառնալ: Կրկին Անի ուղարկված բյուզանդական զորքերը դարձյալ պարտվեցին: Սակայն հաղթանակն անարդյունք եղավ, քանի որ արքունիքում աշխուժացել էին բյուզանդամետ ուժերը, թուլացել, ջլատվել էր բնակչության դիմադրական կորովը: Կաթողիկոսի հորդորներով քաղաքն առանց կռվի հանձնվեց բյուզանդացիներին: Հայաստանի Բագրատունյաց կենտրոնական թագավորությունն ընկավ: Դա մեծ հարված էր հայոց պետականությանը, քանի որ երկար դարեր հայ ժողովուրդը չկարողացավ բուն Հայաստանում վերականգնել իր անկախ պետականությունը:

Շարունակեցին իրենց գոյությունը պահպանել ***Կարսի, Տաշիր-Զորագեղի*** և ***Սյունիքի*** թագավորությունները: Սակայն դրանք թույլ էին և ի վիճակի չէին գլխավորելու համահայկական պետություն ստեղծելու շարժումը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ աստիճանաբար թուլացավ Բագրատունյաց թագավորությունը:
2. Ինչ միջոցների էր դիմում Բյուզանդիան Հայաստանը գրավելու համար:
3. Ձեր կարծիքով՝ որո՞նք էին Անիի թագավորության անկման պատճառները:
4. Ինչո՞ւ Գագիկ II-ը համաձայնեց մեկնել բանակցությունների Կոստանդնուպոլիս:

5. Ինչ կարևոր իրադարձություններ են արձանագրում 885, 922, 914-928, 998, 990–1020 և 1045 թվականները:
6. Կազմե՛ք ժամանակագրական աղյուսակ «Բագրատունյաց Հայաստանի գահակալները» թեմայով: Հնարավորության դեպքում, բացի դասագրքից, օգտագործեք նաև լրացուցիչ նյութեր:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• Հովհաննես-Սմբատ և Աշոտ IV՝ Անիի Բագրատունյաց թագավորներ • Հայոց կաթողիկոս Պետրոս Գետադարձ • Վասիլ II՝ բյուզանդական կայսր • Դավիթ Կյուրոպաղատ՝ Տայքի կառավարիչ • Վահրամ Պահլավունի • Սենեքերիմ՝ Վասպուրականի թագավոր • Վեստ Սարգիս իշխան • Գագիկ II՝ Անիի Բագրատունյաց վերջին թագավոր • Գրիգոր Մագիստրոս՝ քաղաքական գործիչ և գիտնական

6. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ: ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Երկրագործական աշխատանքներ

Տնտեսության վերելքը: Երկրի բարեկեցության հիմնական աղբյուրը երկրագործությունն ու անասնապահությունն էին, արհեստներն ու առևտուրը: Հայկական լեռնաշխարհը երկրագործության համար նպաստավոր պայմաններ ուներ:

IX-XI դարերում նշանակալիորեն առաջադիմեցին երկրագործությունն ու երկրագործական տեխնիկան: Լայնորեն տարածվեց հողի մշակման ***եռադաշտային համակարգը***: Վարելահողը բաժանվում էր երեք մասի, որի մի մասը ցել էր արվում, այսինքն՝ հողը հերկվում և առանց ցանքս կատարելու թողնվում էր անմշակ վիճակում՝ հանգստանալու: Վարելահողի երկրորդ մասում ***աշնանացան*** էր կատարվում, իսկ երրորդ մասում՝ ***գարնանացան***: Եռադաշտային համակարգը հնարավորություն էր տալիս հողին հանգիստ տալու, ինչը բարձրացնում էր բերքատվությունը:

Երկրագործության մեջ հեղաշրջիչ եղավ երկաթե խոփով ծանր գութանի օգտագործումը: Նրանով հեշտությամբ վարում էին նաև խոպան հողերը: Հողամշակության մեջ կիրառվում էր հողը գոմաղբով պարարտացնելը:

Երկրագործության զարգացմանը նպաստում էր ***հողի ոռոգումը***: Ոռոգման ցանցն ընդարձակվում է: Օգտագործվում էին հին ջրանցքները, կառուցվում էին նորերը: Առաջադիմում էր գյուղատնտեսական մթերքների մշակումը: Գինու հնձանները, ջրաղացներն ու ձիթհանները գնալով լայն տարածում էին ստանում:

Գետահովիտներում ու հարթավայրերում աճեցվում էին պտղատու ծառեր: Պտուղներից տարածված էին ծիրանը, դեղձը, տանձը, խնձորը, սալորը, ընկույզը և այլն: Տաք կլիմա ունեցող վայրերում լայնորեն մշակվում էր խաղողը: Նորություն էր ***լոբու, վարունգի, գազարի, ձմերուկի*** մշակությունը: Հացաբույսերից լայն տարածում էր գտել ցորենի, գարու, հաճարի, բրնձի մշակումը:

Երկրագործ շինական

Մշակելի դարձած նոր տարածքները կոչվում էին ***նորք***: Այնտեղ հանդես եկած բնակավայրերը շատ դեպքերում ստանում էին Նորք անվանումը:

Անասնապահությունը: Երկրի լեռնային մասերի արոտավայրերն անասնապահության զարգացման բարենպաստ պայմաններ էին ստեղծում:

Պահվում էին մեծ քանակությամբ խոշոր և մանր եղջերավոր անասուններ՝ կով, գոմեշ, ձի, ոչխար, այծ և այլն: Ժամանակի պատմիչը վկայում է, որ Աշոտ Ի-ը Հայոց կաթողիկոսին էր նվիրաբերել ***«ձիերի երամակներ, փավարի նախիրներ և ոչխարի հոտեր»***: Մի արաբ հեղինակ վկայում է, որ ***«չի տեսել ավելի առատ և անասունների թվով ավելի հարուստ մի երկիր, քան Արմենիան»***:

Լայնորեն օգտագործվում էին անասունների կաթնամթերքը, միսը, կաշին: Ոչխարի բուրդն օգտագործվում էր հագուստ, գորգեր և գործվածքներ պատրաստելու համար: Բացի դրանից՝ անասնապահությունը երկիրն ապահովում էր քաշող և բեռնակիր անասուններով: Հողը հերկում էին խոշոր եղջերավոր անասունների միջոցով: Ձիերը, ավանակները և խոշոր եղջերավոր անասուններն օգտագործվում էին որպես հիմնական փոխադրամիջոց:

Տնտեսության մեջ զգալի կշիռ ունեին նաև որսորդությունը, ձկնորսությունը և մեղվաբուծությունը:

Արհեստագործությունը: Լուրջ առաջընթաց ապրեց արհեստագործությունը: Արհեստները միշտ էլ եղել են հայ բնակչության կարևոր զբաղմունքներից: Արհեստագործությանն առատ հումք էին մատակարարում թե՛ երկրագործությունն ու անասնապահությունը և թե՛ օգտակար հանածոներով հարուստ ընդերքը: Ծաղկում ապրեց մետաղագործությունը: Գյուղատնտեսության բուռն վերելքը մեծապես խթանեց գյուղատնտեսական գործիքների արտադրությունը:

Գնալով զարգացան շուկայական հարաբերությունները, ձևավորվեց երկրի ներքին շուկան, աշխուժացավ արտաքին առևտուրը: Շուկայի պահանջմունքը բավարարելու համար արհեստավորներն սկսեցին հրաժարվել գյուղատնտեսական գործունեությունից: Դրա հետևանքով ***արհեստագործությունը*** վերջնականապես անջատվեց ***գյուղատնտեսությունից***: Արհեստավորները

հաստատվում էին քաղաքներում ու մայրուղիների խաչմերուկներում, որտեղ ձևավորվեցին նոր քաղաքներ ու վաճառաշահ ավաններ:

Արհեստներից մեծ զարգացում ապրեցին մետաղամշակությունը, դարբնությունը, պղնձագործությունը, ոսկերչությունը և զինագործությունը: Մետաղագործ վարպետները պատրաստում էին գյուղատնտեսական գործիքներ, պղնձե ամանեղեն, եկեղեցական սպասք, պերճանքի առարկաներ, զարդեր և սառը զենքեր: ***Վան*** և ***Երզնկա*** քաղաքները հայտնի էին ոսկերչական բարձրարվեստ իրերի արտադրությամբ:

Բնակչության աճը և քաղաքներում նրա կենտրոնացումը զարկ տվեցին ***շինարարական արհեստներին:*** Մեծ հռչակ էին վայելում հայ ճարտարապետները, քարտաշները և որմնադիրները:

Դարբիններ

Զարգացավ ***հյուսնությունը***: Պատրաստում էին գյուղատնտեսական գործիքներ, կենցաղային իրեր, շենքերի փայտյա մասեր և այլն: Զարգացած էր փայտի փորագրությունը:

Անասնապահության զարգացումը խթանեց ***կաշեգործական արհեստների*** վերելքը: Լայն տարածում ստացան ***կոշկակարությունը***, ***գդակագործությունը*** և ***մագաղաթի մշակումը***:

Մանածագործ վարպետները պատրաստում էին բրդե, բամբակե և մետաքսե գործվածքներ, որոնք մեծ պահանջարկ ունեին ինչպես երկրի ներսում, այնպես էլ Արևելքի երկրներում: Արաբ հեղինակ ***Մասուդին վկայում է. «Հայկական գործվածքներն այնքան գեղեցիկ են, որ նրանց նմանը չկա ծայրից ծայր ամբողջ աշխարհում»***:

Միջազգային շուկաներում մեծ պահանջարկ ու հռչակ ունեին հայկական ***գորգերը***: Դրանք վաճառվում էին անգամ հեռավոր ***Վոլգայի Բուլղարիայում*** և ***սլավոնական երկրներում***: Մանածագործության և գորգագործության բուռն վերելքը խթանեց ***ներկերի*** արտադրությունը: Առանձնապես հռչակավոր էր ***որդան կարմիր*** ներկի արտադրությունն Արարատյան դաշտում՝ կենտրոն ունենալով Դվինը:

Կենցաղային և տնտեսական պահանջմունքները բավարարելու համար լայն թափ ստացավ ***խեցեգործությունը***: Նշանավոր էին ***Դվինի*** և ***Անիի*** բրուտանոցները: Դրանց արտադրած կավե ամանները, կճուճներն ու կարասներն աչքի էին ընկնում բարձր որակով: Արտադրվում էին նաև զանազան անոթներ ու իրեր, գույնզգույն նախշերով ամանեղեն: Առանձին արհեստի էր վերածվել ապակեգործությունը:

Գնալով խորացավ ***աշխատանքի բաժանումը***: Արհեստների մասնագիտացումը ծնունդ տվեց արհեստների նոր, ինքնուրույն ճյուղերի: Այսպես,

մետաղագործությունից անջատվեց և առանձին արհեստի վերածվեց ***զինագործությունը:*** Նույնը տեղի ունեցավ ***մանածագործության, կաշեգործության, կավագործության*** և այլ բնագավառներում: Կատարելագործվեց արհեստագործական տեխնիկան:

Ներմուծված ապակյա անոթներ (XII-XIII դարեր)

Առևտուրը: Բագրատունյաց շրջանում երկրագործության, հատկապես արհեստագործության, առաջադիմելը հող նախապատրաստեց առևտրի զարգացման համար: Որոշակի զարգացում ապրեց ներքին և արտաքին առևտուրը: Ներքին առևտուրը խարսխվում էր գյուղի և քաղաքի միջև կատարվող ապրանքափոխանակության վրա: Գյուղացիները շուկա էին տանում իրենց արտադրած մթերքներն ու գյուղատնտեսական հումքը՝ գնելով անհրաժեշտ գործիքներ, կենցաղային իրեր և այլ ապրանքներ: Քաղաքներում վաճառքի կետեր ունեին նաև վանքերն ու արհեստավորները: Դրանցում վաճառվում էին բնակչությունից և իրենց կալվածքներից ստացված մթերքները:

Մեծ քաղաքներում և ճանապարհների խաչմերուկներին աստիճանաբար սկսեցին կազմակերպվել ***կիրակնօրյա շուկաներ*** կամ ***տոնավաճառներ***: Բացի հաճախակի գործող տոնավաճառներից՝ տարվա մեջ մեկ անգամ, նախապես սահմանված օրերին, կազմակերպվում էին ***ամենամյա տոնավաճառներ***:

IX-XI դդ. մեծ վերելք ապրեց արտաքին առևտուրը: Շնորհիվ իր չեզոք դիրքի՝ Հայաստանը վերածվեց Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության միջև տարանցիկ առևտրի կարևոր կենտրոնի: Դրան մեծապես նպաստեցին Հայաստանն արևելքից արևմուտք և հարավից հյուսիս հատող կարևոր առևտրական մայրուղիները: Տարանցիկ առևտրի մեջ ներգրավվեցին անգամ հեռավոր Չինաստանն ու Հնդկաստանը:

Հայաստանը ոչ միայն ապրանքներ էր ներմուծում, այլև լայնորեն արտահանում էր իր արտադրանքը: Արտահանվում էին հացահատիկ, ձիեր, ջորիներ, երկաթ և գունավոր մետաղներ, գյուղատնտեսական մթերքներ, աղ, ներկեր և այլն: Արտահանվող ապրանքների մեջ մեծ բաժին էր կազմում արհեստագործական արտադրանքը՝ մետաղե գործիքներ, ոսկյա և արծաթյա իրեր, բրդե, բամբակե ու մետաքսե գործվածքներ, պղնձե ամանեղեն և այլն: Ներմուծվող ապրանքների մեջ առանձնանում էին ***հնդկական համեմունքները*** և ***թանկարժեք բարերը, չինական մետաքսե գործվածքները*** և ***ճենապակին, ռուսական մորթիները*** ու ***մուշտակները*** և այլն:

Տարանցիկ առևտուրը հիանալի պայմաններ ստեղծեց միջազգային առևտրի մայրուղիների վրա գտնվող հայկական քաղաքների (Անի, Դվին, Կարս,

Վան, Արծն, Կարին և այլն) բարգավաճման համար: Այսպիսով՝ պետականության վերականգնումը նպաստեց քաղաքային կյանքի վերելքին:

Պետական կառավարման համակարգը: Հայոց պետության գլուխ կանգնած էր ***թագավորը***: Նա կոչվում էր նաև ***արքա*** կամ ***Հայոց շահնշահ***: Նա էր վարում երկրի ներքին և արտաքին քաղաքականությունը: Անիի Բագրատունի թագավորին էին ենթարկվում հպատակ թագավորները և կիսանկախ հայ իշխանները: Նրան ենթակա էին նաև Հայաստանում առաջացած արաբական ամիրայություններ:

Թագավորը պետությունը կառավարում էր արքունիքի միջոցով, որը ***գործակալությունների*** համակարգ էր: Գործակալությունները ղեկավարում էին բարձրաստիճան պաշտոնյաները կամ գործակալները: Դրանք սովորաբար արքայական ընտանիքի անդամներ էին կամ արքային մերձավոր խոշոր ավատատերեր: Գործակալությունների մեջ կարևոր էին հատկապես ***իշխանաց իշխանի*** և ***հայոց սպարապետի*** պաշտոնները: ***Իշխանաց իշխանը*** թագավորի առաջ պատասխանատու էր բոլոր ենթակա իշխանների գործունեության համար: Նրա ենթակայության տակ էին արքայական տիրույթները, պետական գանձարանը, երկրի մեծ ու փոքր պաշտոնյաներն ու հարկահանները: Իշխանաց իշխանի բարձր պաշտոնը սովորաբար տրվում էր արքայի եղբայրներից մեկին կամ թագաժառանգին: ***Հայոց սպարապետը*** պետության զինված ուժերի՝ բանակի հրամանատարն էր: Ենթակա թագավորությունների զորքերի հրամանատարները (սպարապետները) պատերազմի ժամանակ ենթարկվում էին Անիի թագավորության սպարապետին: Անիի թագավորության մեջ այդ պաշտոնը վարում էին Պահլավունիները:

Գլխավոր դատավորի պաշտոնն առաջվա նման զբաղեցնում էր Հայոց կաթողիկոսը: Դատավարությունն իրականացվում էր եկեղեցական ժողովների մշակած կանոնների ու սովորութային իրավունքի նորմերի համաձայն:

Բագրատունի թագավորները հատուկ նշանակություն էին տալիս բանակին: Պատերազմների ժամանակ բանակը համալրվում էր, և զորքի թիվը, ստվարանալով, հասնում էր 80-100 հազարի: Խաղաղ պայմաններում պահվում էր մշտական, բայց փոքրաքանակ բանակ: Բանակը կազմված էր ***արքունական*** և ***մարզպանական*** գնդերից: Արքունի գունդն անմիջականորեն ենթարկվում էր թագավորին, մարզպանական գունդը կազմվում էր իշխանական զորաջոկատներից: Բանակը կազմված էր ***հեծելազորից, հետևակից*** և ***սակրավորական*** զորամասերից: Զորքը համալրում էին ազատները, շինականները և քաղաքացիները:

Հայ հեծյալ զինվոր

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Տնտեսության ո՞ր ճյուղերն էին զարգացած Հայաստանում:
2. Հայաստանում գյուղատնտեսության զարգացմանը նպաստող ի՞նչ բնական պայմաններ կարող եք նշել:
3. Հողի մշակման ի՞նչ համակարգ էր կիրառվում Հայաստանում: Ո՞րն էր դրա գլխավոր նպատակը:
4. Ի՞նչ նորամուծություններ եղան գյուղատնտեսական տեխնիկայի ասպարեզում:
5. Ո՞ր մրգատեսակներն էին հնուց ի վեր հայտնի Հայաստանում, և ի՞նչ նոր մշակաբույսեր կիրառում գտան Բագրատունյաց շրջանում:
6. Նպաստավո՞ր էր արդյոք Հայաստանի բնությունն անասնապահության զարգացման համար, և ի՞նչ դեր ուներ անասնապահությունը երկրի տնտեսության մեջ: Հիմնավորե՛ք պատասխանը:
7. Արհեստագործության զարգացման ի՞նչ նախադրյալներ կային Հայաստանում:
8. Ի՞նչ եք հասկանում աշխատանքի բաժանում ասելով:
9. Ինչո՞վ էր պայմանավորված ներքին ու արտաքին առևտրի լայն զարգացումը:
10. Ի՞նչ ապրանքներ էր արտահանում և ներմուծում Հայաստանը:
11. Ի՞նչ կառուցվածք ուներ միջնադարյան հայկական քաղաքը:
12. Ինչպե՞ս էին կառավարվում քաղաքները:
13. Ո՞վ էր գլխավորում Հայոց պետությունը:
14. Հայոց թագավորը ի՞նչ պետական մարմինների միջոցով էր կառավարում երկիրը:
15. Պետական ո՞ր պաշտոններն էին հատկապես կարևոր Բագրատունյաց շրջանում:
16. Անիի թագավորությունում ո՞ր տոհմն էր վարում սպարապետության պաշտոնը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• **եռադաշտային համակարգ** • **աշնանացան** • **գարնանացան** • **նորք** • **ձիթհան** • **հնձան** • **միջնաբերդ** • **բաց քաղաք** • **Հայոց շահնշահ** • **իշխանաց իշխան** • **արքունական գունդ** • **մարզպանական գունդ**

6-րդ թեմայի ամփոփում

1. VIII դ. առաջին կեսին՝ նվաճված ժողովուրդների ազատագրական պայքարը թուլացրեց Արաբական խալիֆայությունը, իսկ Բյուզանդական կայսրությունը IX դ. երկրորդ կեսին նշանակալիորեն ուժեղացավ: Հայաստանի տնտեսական զարգացումը և մի շարք իշխանական տների, առաջին հերթին՝ Բագրատունիների ուժեղացումը Հայոց թագավորության վերականգնման քաղաքական անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեցին: Հայաստանն Աշոտ I-ի հմուտ ղեկավարությամբ ձեռք բերեց փաստական անկախություն: 885թ. արաբական խալիֆը ստիպված եղավ թագ և արքայական հանդերձներ ուղարկել Աշոտ Բագրատունուն, որը Շիրակավանում մեծ հանդիսավորությամբ օծվեց Հայոց թագավոր: Նա իր իշխանության ներքո միավորեց ոչ միայն Հայաստանի, այլև այսրկովկասյան երկրների մեծ մասը:
2. Դեռևս Աշոտ I-ի օրոք ստեղծված Հայոց տերությունն ավելի է ընդարձակվում և հզորանում Սմբատ I-ի օրոք, որն ընդունում է «Տիեզերակալ, թագավոր Հայոց և Վրաց» տիտղոսը: Հայոց տերության ուժեղացումը մեծապես հարվածում էր Արաբական խալիֆայությանը, ուստի Հայաստանը պարբերաբար ենթարկվում է արաբների արշավանքներին, որոնք նպատակ ունեին վերականգնել իրենց տիրապետությունը երկրում: Հայ ժողովրդի պայքարն արաբ զավթիչների դեմ հաջողությամբ ղեկավարում է Աշոտ II Երկաթ թագավորը: Արաբները վերջնականապես վտարվում են երկրից, իսկ Աշոտ II-ն ստանում է «շահնշահ» տիտղոսը: Ամրապնդվում է երկրի անկախությունը, և վերականգնվում է Հայոց տերությունը:
3. Հայ և այսրկովկասյան ժողովուրդների համատեղ պայքարն օտար նվաճողների դեմ ամրապնդեց նրանց բարեկամությունը:
4. Արաբների դեմ տարած հաղթանակով X դ. առաջին քառորդին վերջնականապես ամրապնդվեց Հայաստանի անկախությունը, ինչը երկրի հետագա բարգավաճման պայմաններ ստեղծեց:
5. 961թ. Անին հռչակվեց Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք: Նոր մայրաքաղաքի հիմնումը խորհրդանշում էր Բագրատունյաց թագավորության հզորացումը:
6. Հայաստանի Բագրատունյաց թագավորությունը մեծ վերելք ապրեց Գագիկ I-ի թագավորության շրջանում: Նա կրում էր «շահնշահ Հայոց», «թագավոր Հայոց և Վրաց» տիտղոսները: Գագիկ I-ի ժամանակ հզորացավ Պահլավունիների իշխանական գերդաստանը: Հատկապես նշանավոր եղավ սպարապետ Վահրամ Պահլավունին:

7. Հայաստանում ավատատիրական հարաբերությունների խորացումը, տնտեսական զարգացման հետևանքով առանձին իշխանություններում տնտեսական կենտրոնների ձևավորումը և նրանց ռազմական կարողության մեծացումը, ինչպես նաև օտար պետությունների միջամտությունն ուժեղացրին անջատողական ձգտումները երկրում:
8. X դ. ընթացքում առանձին թագավորություններ հիմնվեցին Վասպուրականում, Վանանդում (Կարս), Տաշիր-Ձորագետում (Լոռի) և Սյունիքում: Բագրատունիների կենտրոնական թագավորության կազմում մնաց Անին՝ շրջակա գավառներով: Նոր առաջացած թագավորությունները ճանաչում էին Անիի կենտրոնական թագավորության գերիշխանությունը:
9. XI դ. առաջին կեսին համառ պայքար սկսվեց Անիի թագավորության պահպանման համար, որը 1021թ. բաժանվեց երկու մասի, իսկ 1045թ. բյուզանդամետ ուժերի աջակցությամբ գրավվեց Բյուզանդիայի կողմից: Ընկավ Բագրատունիների կենտրոնական թագավորությունը:
10. Երկրի տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր, որն ապահովում էր պետության եկամուտների գերակշիռ մասը: Առավելապես զարգացած էին հացահատիկային բույսերի մշակությունը, անասնապահությունը և այգեգործությունը:
11. Զարգացած գյուղատնտեսությունն ապահովում էր նաև արհեստագործության վերելքը: Հիմնական արհեստներից էին մետաղամշակությունը, մանածագործությունը, կաշեգործությունը, կավագործությունը, զինագործությունը և այլն: Արհեստների զարգացումը խորացրեց աշխատանքի բաժանումը:
12. Երկրի տնտեսական կյանքի վերելքը խթանեց նաև առևտուրը: Դրա ծավալման շնորհիվ ապրանքափոխանակությանը զուգահեռ զարգանում էր դրամական շրջանառությունը:
13. IX-XI դդ. Հայաստանում բուռն զարգացում ապրեցին քաղաքները: Դա կապված էր նաև աշխատանքի հասարակական բաժանման հետ: Արհեստներն ու առևտուրը կենտրոնանում էին քաղաքներում: Հայաստանի նշանավոր քաղաքներն էին Անին, Դվինը, Կարսը, Վանը, Արծնը, Կարինը և այլն:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՁԱՎԹԻՉՆԵՐԻ ԴԵՄ: ՁԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ՍԵԼՋՈՒԿ-ԹՅՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Սելջուկ-թյուրքերի արշավանքները: Հայաստանի մեծագույն մասը գավթելուց հետո Բյուզանդական կայսրությունը ձեռնամուխ եղավ այնտեղ իր տիրապետության ամրապնդմանը: Այդ նպատակով բյուզանդական իշխանությունները սկսեցին վարել Հայաստանը հայաթափելու, տնտեսապես քայքայելու, զինուժից և ղեկավարող ու կազմակերպող ուժից զրկելու քաղաքականություն: Դրա հետևանքով Հայաստանի պաշտպանունակությունը խիստ թուլացավ, ինչից օգտվեցին սելջուկ-թյուրքերը:

Սելջուկ-թյուրքերի հայրենիքը հեռավոր Ալթայն է: Նրանք զարգացման չափազանց ցածր մակարդակի վրա գտնվող և քոչվորական անասնապահությամբ զբաղվող ցեղեր էին: Փարթամ արոտավայրերի տիրանալու նպատակով նրանք ընտանիքներով և ունեցվածքով աստիճանաբար շարժվում են դեպի արևմուտք ու հաստատվում Միջին Ասիայում: Այստեղ նրանք ընդունում են մահմեդականություն: Նրանց ցեղապետներից ոմն Սելջուկ իր շուրջն է համախմբում թյուրքական օղուզ կոչվող ցեղախմբերին, որոնք նրա անունով սկսում են կոչվել սելջուկ-թյուրքեր: Այս ռազմատենչ ցեղերը Սելջուկի թոռներ Տուղրիլի ու Չակիրի գլխավորությամբ 1040թ. հիմնում են սելջուկյան պետությունը: Քիչ անց սկսվում են սելջուկ-թյուրքերի արշավանքները դեպի Հայաստան:

Առաջին անգամ սելջուկ-թյուրքերի 20-հազարանոց զորքը 1047թ. Ատրպատականից ներխուժեց Հայաստան և, գրեթե դիմադրության չհանդիպելով, հասավ Բասեն գավառ, կողոպտեց ու ավերեց իր ճանապարհին ընկած բոլոր բնակավայրերը, կոտորեց ու գերեվարեց հազարավոր մարդկանց և անարգել հետ դարձավ:

Սելջուկ-թյուրքերը հաջորդ անգամ Հայաստան արշավեցին 1048թ., բայց արդեն 100-հազարանոց զորքով: Այն կենտրոնացավ Բասենի ու Կարնո դաշտերում, ապա առանձին զորախմբերի բաժանվելով՝ սփռվեց տարբեր գավառներում: Այս անգամ ևս թշնամին հրի, սրի ու կողոպուտի մատնեց իր ճանապարհին ընկած բնակավայրերը: Հատկապես տուժեցին Սանանադի գավառի Սմբատաբերդ լեռան վրա ապաստանածները: Նրանք կամ գերվեցին, կամ սպանվեցին: Այնուհետև գրավվեց, կողոպտվեց ու կործանվեց անպարիսպ, ծաղկուն ու վաճառաշահ Արծն քաղաքը: Երբ սելջուկ-թյուրքերը պատրաստվում էին վերադառնալ, բյուզանդացիները Բասենի դաշտում

նրանց ճակատամարտ տվեցին, սակայն միասնաբար չգործելով՝ ջախջախվեցին: Թշնամին բազմաթիվ զերիներով ու հսկայական ավարով վերադարձավ Ատրպատական:

1049թ. Բյուզանդիայի և սելջուկ-թյուրքերի միջև կնքվեց զինադադար: Դրա շնորհիվ Հայաստանն առժամանակ խաղաղ շունչ քաշեց: Բյուզանդիան, փորձելով հայերի օգնությամբ հետ մղել ահեղ թշնամուն, մասամբ վերանայեց իր քաղաքականությունը Հայաստանում: Հարկերը թեթևացվեցին, իսկ երկրի առանձին շրջանների կառավարումը վստահվեց հայերին: Որոշ հայ իշխանների թույլատրվեց վերադառնալ հայրենիք, իսկ դավանական ճնշումները մեղմացան: Սակայն հայկական զինուժը, առանց որի անհնար էր դիմակայել սելջուկ-թյուրքերին, չվերականգնվեց:

Ավելի մեծաքանակ ու պաշարողական մեքենաներով հագեցած սելջուկյան զորքերը 1054թ. Տուղրիլ բեկի գլխավորությամբ ներխուժեցին Հայաստան: Այս անգամ էլ երկիրը կողոպտվեց ու ավերվեց, իսկ բնակչության մի մասը գերեվարվեց կամ սպանվեց: Թշնամին կատաղի դիմադրության հանդիպեց Կարսում ու Մանազկերտում, որոնք այդպես էլ չկարողացավ գրավել: Այդ մարտերի ժամանակ առանձնապես աչքի ընկավ Թաթուլ անունով մի զորական: Սակայն սելջուկ-թյուրքերը գրավեցին ու ավերեցին Արծկեն, Բերկրին ու այլ բնակավայրեր և մեծաքանակ գերիներով ու հարուստ ավարով հեռացան Հայաստանից:

Սելջուկ-թյուրքերի այս երեք հետախուզական արշավանքները ծանր հետևանքներ ունեցան Հայաստանի համար: Ծայր առավ բնակչության զանգվածային արտագաղթ՝ էլ ավելի թուլացնելով երկրի առանց այդ էլ անմխիթար պաշտպանունակությունը:

Հայաստանի նվաճումը: Տուղրիլին հաջորդած Ալփ Արսլան սուլթանն անցավ նվաճողական արշավանքների: Նա 1064թ. հսկայական զորքով մտավ Վրաստան, իսկ այնտեղից՝ Հայաստան: Օգտվելով Անիի բյուզանդական կայազորի անգործությունից՝ սելջուկյան զորքերը գրավեցին քաղաքը: Անին կողոպտվեց ու ավերվեց: Տաշիր-Զորագետի Կյուրիկե I և Վրաց Բագրատ IV թագավորները, այլ ելք չունենալով, հարկատվության պայմանով հպատակվեցին Ալփ Արսլանին: Դրա շնորհիվ նրանց թագավորությունները զերծ մնացին կողոպուտից, ավերից ու կոտորածից: Այսպիսով՝ ամբողջ Հյուսիսային Հայաստանն ընկավ սելջուկյան տիրապետության տակ:

Բյուզանդական Ռոմանոս IV Դիոգենես կայսրը փորձեց կասեցնել Հայաստանի հարավային ու արևմտյան շրջաններ արշաված ու Մանազկերտը գրաված սելջուկ-թյուրքերի հետագա առաջխաղացումը: Հակառակորդները 1071թ. ճակատամարտ տվեցին Մանազկերտի մոտ: Բյուզանդական զորքը պարտվեց, իսկ կայսրը գերվեց: Այս ճակատամարտով դրվեցին Բյուզանդիայի կործանման հիմքերը: Ալփ Արսլանին հաջորդած Մելիքշահը գրավեց նաև

Հայաստանի հարավային ու արևմտյան գավառները: Այսպիսով՝ ամբողջ Հայաստանը մտավ սելջուկյան լայնածավալ պետության կազմի մեջ: 1074թ. բյուզանդական նոր կայսրը Մելիքշահի հետ կնքած հաշտության պայմանագրով ճանաչեց նրա տիրապետությունն ինչպես Հայաստանի, այնպես էլ Մերձավոր Արևելքի նշանակալից մասի վրա:

Սելջուկյան արշավանքներն ու նվաճումներն անհամար աղետներ պատճառեցին Հայաստանին: Անկում ապրեցին ինչպես քաղաքներն ու քաղաքային կյանքը, այնպես էլ արհեստներն ու առևտուրը: Հայաստանը դադարեց մասնակցել միջազգային տարանցիկ առևտրին: Հայ իշխանական տներից շատերը կամ ոչնչացվեցին, կամ իրենց զինուժով երկրից դուրս բերվեցին և կամ էլ զրկվեցին տիրույթներից: Տնտեսական անկման, շարունակական պատերազմների և կյանքի ու գույքի անապահովության պատճառով լայն չափեր ընդունեց արտագաղթը: Տասնյակհազարավոր հայեր գաղթում էին գլխավորապես Փոքր Հայք, Կապադովկիա և Կիլիկիա: Փոխարենը երկրում հաստատվում էին թյուրքական ու քրդական տարբեր ցեղեր: Դրա հետևանքով Հայաստանի էթնիկ կազմը զգալիորեն փոխվեց:

Հայկական թագավորություններն ու իշխանությունները: Չկարողանալով դիմագրավել սելջուկ-թյուրքերին՝ Տաշիր-Զորագետի, Կարս-Վանանդի ու Սյունիքի թագավորները հարկատվության պայմանով հպատակվեցին Ալփ Արսլանին: Երկյուղելով իր թագավորության տարածք սելջուկ-թյուրքերի ներխուժումից՝ 1065թ. Կարսի թագավոր Գագիկ Աբասյանն իր երկիրը հանձնեց Բյուզանդիային: Նա փոխարենը տիրույթներ ստացավ Կիլիկյան Տավրոսում: Դրանով Կարս-Վանանդի թագավորությունը վերացավ: Շատ չանցած նրա տարածքներն անցան սելջուկ-թյուրքերին: Տաշիր-Զորագետի ու Սյունիքի թագավորությունները, ավելի կենսունակ գտնվելով, հայկական որոշ մանր իշխանությունների հետ շարունակում էին գոյատևել:

Երբ XI դ. վերջերին սկսվեցին սելջուկյան տերության մասնատումն ու թուլացումը, հայոց պետականության այդ մնացորդներին ծանր փորձություններ վիճակվեցին: Սակայն դրանք, բոլոր փորձություններին դիմագրավելով, անկախացան:

Տաշիր-Զորագետում XI դ. վերջերին-XII դ. սկզբներին իշխում էին Կյուրիկե I-ի որդիներ Աբասն ու Դավիթը, իսկ Սյունիքում՝ Գրիգոր II-ը: Այս երկու փոքրիկ թագավորություններից բացի՝ հայկական անկախ իշխանություններ կային Արցախում: Բջնիում ու շրջակայքում իշխում էին Պահլավունիները, Ամյուկ բերդում ու Աղթամարում՝ Արծրունիները: Հայկական իշխանություններ էին գոյատևում նաև Մոկքում ու Սասունում: Հատկապես աչքի էր ընկնում Մամիկոնյաններից սերող Թոռնիկյանների Սասունի իշխանությունը, որն անկախ էր և կարող էր հարկ եղած դեպքում մի քանի տասնյակ հազարանոց զորք հանել: Սակայն այս փոքրիկ թագավորություններն ու իշխանություններն

ի վիճակի չէին վերականգնելու հայոց պետականությունը: Բանն այն է, որ սելջուկյան տերության մասնատումից հետո Հայաստանում ևս առաջացան մի շարք մահմեդական ամիրայություններ: Դրանց տիրակալներն իրենց իշխանությունը պահպանելու համար ամեն կերպ փորձում էին կասեցնել հայ ժողովրդի ազատագրական պայքարը: Հայաստանում առաջացած մահմեդական իշխանություններից ամենահզորներից էր Շահ-Արմենների ամիրայությունը՝ Խլաթ կենտրոնով: Սյուս խոշոր ամիրայությունը քրդական ծագմամբ Շադդադյանների ամիրայություն էր՝ կենտրոն ունենալով Անին: Հայաստանի տարածքում առաջացած հաջորդ խոշոր ամիրայությունը Գանձակի ամիրայությունն էր՝ Գանձակ կենտրոնով: Այն Տաշիր-Զորագետի ու Սյունիքի թագավորությունների և Արցախի իշխանությունների ոխերիմ թշնամին էր:

Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորության դրամ

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻՆ՝ ԹԱԹՈՒԼ ՁՈՐԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

«Ազգերներից մեկին, որի անունը Թաթուլ էր, և որը քաջ ու պատերազմասեր մարդ էր, բռնելով պարան (Տուղրիլ) սուլթանի մոտ: Որովհետև (թյուրք) Արսուբան ամիրայի որդուն Թաթուլը մահացու վիրավորել էր, սուլթանը, նրան տեսնելով, ասաց. «Եթե դա ապրի, քեզ կազատեմ, բայց եթե մեռնի, կհրամայեմ, որ քեզ դրան մատաղ անեն»: Իսկ Թաթուլը պատասխանեց. «Եթե իմ զարկածն է, չի ապրի, իսկ եթե ուրիշինն է, այդ չգիտեմ»: Քիչ օրերից հետո վիրավորը մահացավ: Երբ սուլթանն այդ լսեց, հրամայեց սպանել Թաթուլին և նրա աջ բազուկը կտրելով՝ ուղարկեց Արսուբանին որպես մխիթարություն, թե՝ քո որդին վատ բազկից չի մեռել»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է սելջուկ-թյուրքերի հայրենիքը:
2. Ինչպիսի՞ հետևանքներ ունեցան սելջուկ-թյուրքերի արշավանքները:
3. Ինչպիսին էր բյուզանդացիների վարքագիծը սելջուկյան արշավանքների ընթացքում:
4. Երբ և որտեղ տեղի ունեցավ բյուզանդա-սելջուկյան վճռական բախումը, ինչ հետևանքներ ունեցավ այն:
5. Ինչպիսին էր հայկական թագավորությունների ու իշխանությունների վիճակը սելջուկյան արշավանքների ժամանակ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ինչո՞վ եք բացատրում սելջուկ-թյուրքերի ռազմական հաջողությունները: Ձեր կարծիքով՝ ի՞նչ դեր ունեցավ այդ առումով Բյուզանդիայի քաղաքականությունը Հայաստանում սելջուկյան արշավանքներին նախորդող շրջանում:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• սելջուկ-թյուրքեր • Միջին Ասիա • օղուզ • Սելջուկ • Տուղրիլ • Չակիր • Թաթուլ զորական • Արծկե • Բերկրի • Ալփ Արսլան • Կյուրիկե I • Բագրատ IV • Ռոմանոս IV Դիոգենես • Մանազկերտ • Մելիքշահ • Գագիկ Աբասյան • Գրիգոր II

2. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ

Հայ-վրացական զինակցության սկզբնավորումը: Ինչպես գիտենք, վրաց Բագրատ IV թագավորը հարկ վճարելու պայմանով ընդունեց սելջուկ-թյուրքերի տիրապետությունը: Սակայն երբ սելջուկյան սուլթանությունը սկսեց տրոհվել, և արտաքին վտանգը թուլացավ, Վրաստանը սկսեց վերելք ապրել ու միավորվել: Դրանում մեծ դեր խաղաց Դավիթ IV Շինարար թագավորը (1089-1125թթ.): Նրա օրոք ուժեղացած Վրացական թագավորությունը կանգնեց մահմեդական ամիրայությունների դեմ ուղղված ժողովրդազատագրական պայքարի գլուխ: Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո և սելջուկյան արշավանքների ու նվաճումների ժամանակ Վրաստանում ապաստանել էր զգալի թվով հայ բնակչություն, ինչպես նաև հայոց զինուժի մի մասը, որը գլխավորում էին հայ զորավարները:

Նախքան սելջուկյան ամիրայությունների դեմ վճռական գործողությունների անցնելը Դավիթ Շինարարը հակասելջուկյան ամուր հենակետ ստեղծելու նպատակով գրավեց Լոռին: Դրանից քիչ անց՝ 1124թ., նա անեցիների օգնությամբ, առանց կռվի Շադդադյան ամիրայությունից ազատագրեց Անին: Դրա շնորհիվ Անիի բնակիչներն այդուհետև իրենք էին տնօրինում քաղաքի ներքին գործերը: Քաղաքի Մայր տաճարի գմբեթից հանված խաչը նորից իր տեղը դրվեց: Սակայն երկու տարի անց Շադդադյանները շրջակա մահմեդական ամիրայությունների օգնությամբ կրկին տիրեցին Անիին: Նույնը կատարվեց նաև 1161 և 1174 թվականներին:

Հյուսիսարևելյան Հայաստանի ազատագրումը: XII դ. վերջերին ամիրայությունները սկսեցին քայքայվել ու թուլանալ: Դա նրանց դեմ պայքարի բարեհաջող ելքի նպաստավոր պայմաններ ստեղծեց: Այդ պայքարը գլխավորում էր աստիճանաբար հզորացող Զաքարյան իշխանական տունը: Այն ղեկավարում էր Սարգիս Զաքարյանը: Նա սկզբում վրացական բանակի կազմում գործող հայկական զորաջոկատների հրամանատարն էր, ապա Թամար

թագուհու (1184-1207թթ.) կողմից նշանակվեց հայ-վրացական միացյալ բանակի գլխավոր հրամանատար՝ ամիրսպասալար: Հետագայում այդ պաշտոնը ստանձնեց նրա ավագ որդին՝ Զաքարեն, իսկ կրտսերը՝ Իվանեն, դարձավ վրաց թագաժառանգի խնամակալ՝ աթաբեկ: Այսպիսով՝ Զաքարյանների դիրքերը վրաց արքունիքում մեծապես ամրապնդվեցին:

Քանի որ Թամարն ու նրա հաջորդներն ազատագրված հայկական գավառները հանձնում էին դրանք գրաված զորապետներին, Զաքարյաններն ու նրանց ենթակա հայ զորականները գործում էին եռանդուն: Հայ ժողովուրդն իր հերթին ջանադրաբար նպաստում էր Զաքարյանների գլխավորած ազատամարտերի հաջողությանը: Դա է պատճառը, որ Զաքարյանները Հայաստանի ազատագրման դժվարին գործում զգալի հաջողությունների հասան:

Ամբերդ (X-XIV դարեր)

Զաքարյանները XII դ. վերջերին սելջուկյան ամիրայությունների դեմ մի քանի հաջող արշավանքներ ձեռնարկեցին: Զաքարյանները մի քանի ուղղություններով հերոսական ազատամարտեր ծավալեցին: Նրանք 1196թ. ազատագրեցին Ամբերդ ամրոցն ու Արագածոտնը, 1199թ.՝ Անին ու Շիրակը, 1203թ.՝ Դվինն ու Արարատյան դաշտը, 1205թ.՝ Կարսն ու Վանանդը, ապա՝ Բագրևանդը: 1207թ. Խլաթի անհաջող պաշարումը Զաքարյաններին ստիպեց դադարեցնել առաջխաղացումը դեպի Հայաստանի հարավ: Նրանք այնուհետև ազատագրեցին Հյուսիսարևելյան Հայաստանի այլ գավառներ: Մոնղոլական արշավանքներն ու նվաճումները Զաքարյաններին խանգարեցին ավարտին հասցնել ամբողջ Հայաստանի ազատագրումը: Այդուհանդերձ՝ Գուգարքի, Այրարատի, Սյունիքի, Ուտիքի ու Արցախի մեծ մասը թոթափեց օտարի լուծը:

Ազատագրված հայկական տարածքները, Վրացական թագավորության կազմի մեջ մտնելով հանդերձ, նվաճված չէին համարվում: Այդ պետության մեջ հայերն ունեին վրացիներին հավասար իրավունքներ: Ազատագրված գավառներում Զաքարյանների գլխավորությամբ ստեղծվեցին մի շարք ներքին լիակատար ինքնուրույնություն ունեցող իշխանություններ:

Զաքարյան իշխանական տունը բաժանված էր չորս ճյուղի, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր իշխանությունը: Զաքարե ամիրսպասալարի ճյուղը տիրում էր Լոռիին ու Շիրակին՝ կենտրոն ունենալով Անին: Իվանե աթաբեկի ճյուղն իշխում էր Արարատյան դաշտում, Գեղարքունիքում, Աղստևի հովտում և այլուր: Այս ճյուղի նստավայրն էր Դվինը: Զաքարյանների մյուս երկու

ճյուղերը ներկայացնում էին Սարգիս Զաքարյանի եղբայր Վահրամի որդիներ Զաքարեն ու Սարգիսը: Զաքարեի հիմնած ճյուղը նրա հոր անունով կոչվում էր Վահրամյան, տիրում էր Կողբոփոր, Տավուշ, Գարդման ու Փառիսոս գավառներին՝ կենտրոն ունենալով Գագ ամրոցը: Սարգսի ճյուղը տիրում էր Զավախքի մի մասին և նստավայր Թմոգվի (Թմբկաբերդ) ամրոցի անունով կոչվում էր Թմոգվեցի:

Իշխան Ամիր-Հասան Պռոշյանի բարձրաքանդակը

Աչքի ընկնող զորապետներն իրենց մասնակցությամբ ազատագրված գավառներում Զաքարյաններից ստացան տիրույթներ՝ ստեղծելով իշխանություններ: Դրանցից նշանավոր էին Սյունիքում իշխող Օրբելյաններն ու Պռոշյանները և Արագածոտնին տիրող Վաչուտյանները: Արցախում իշխում էին Հասան-Զալալյաններն ու Դուիյանները: Հին իշխանական որոշ տներ էլ Զաքարյանների օգնությամբ վերականգնեցին իրենց իրավունքները: Բոլոր իշխաններն ունեին իրենց պաշտոնյաները, զորքը, զինանշանը:

Չազատագրված հայկական շրջանները գտնվում էին Գանձակի աթաբեկության, Իկոնիայի սելջուկյան սուլթանության ու Այյուբյանների տիրապետության տակ:

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻՆ՝ ԶԱՔԱՐԵ ԵՎ ԻՎԱՆԵ ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«...Որովհետև նրանք քաջ մարդիկ էին, օրեցօր աճում էին նրանց պատիվն ու ապրիճանը: Թամարի օրոք էլ ավելի փառավորվեցին: [Թամարը] նրանց տվեց Լոռեն, և կարճ ժամանակամիջոցում նրանք թյուրքերից խլեցին շատ բերդեր ու գավառներ... և նրանց անունը տարածվեց ամբողջ երկրում»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞ր արքայի օրոք սկսվեց վրացական պետության հզորացումը:
2. Ինչո՞վ էր պայմանավորված հայ և վրաց ժողովուրդների հակասելջուկյան համատեղ պայքարը:
3. Ե՞րբ սկսվեց Հյուսիսարևելյան Հայաստանի ազատագրումը: Հայ ո՞ր զորավարներն էին գլխավորում ազատագրական մարտերը:
4. Ե՞րբ վերջնականապես ազատագրվեցին Անին և Դվինը:
5. Ո՞նչ իշխանական տներ հիմնադրվեցին Զաքարյանների օրոք:
6. Հայաստանի չազատագրված շրջաններն ո՞ւմ տիրապետության տակ էին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• Դավիթ IV Շինարար • Շադդադյաններ • Սարգիս Զաքարյան • ամիրսպասալար • աթաբեկ • Զաքարե և Իվանե Զաքարյաններ • Թամար թագուհի • Բագրևանդ • Խլաթ • Կողբոփոր • Գարդման • Փառիսոս • Տավուշ • Վահրամյաններ • Գագ ամրոց • Թմոգվեցի • Թմոգվի (Թմբկաբերդ) • Օրբելյաններ • Պռոշյաններ • Վաչուտյաններ • Հասան-Ջալալյաններ • Դոփյաններ • Զավախք

3. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՄՈՆՂՈԼՆԵՐԸ

Մոնղոլների հետախուզական արշավանքը: Զաքարյաններին ոչ միայն չհաջողվեց Հայաստանը լիակատար ազատագրել, այլև՝ իրենց տնօրինած տարածքներում պետություն ստեղծել: Բացի դրանից՝ հայկական իշխանությունները հաճախ վճռական պահին միասնաբար չէին գործում, իսկ Վրացական թագավորությունը գնալով թուլանում էր: Հետևաբար՝ յուրաքանչյուր զորեղ թշնամի կարող էր սպառնալ երկրի անվտանգությանը: Հենց այդպես էլ եղավ, երբ արևելքից վրա հասան մոնղոլական հորդաները:

Մոնղոլական ցեղերը, որ նաև ***թաթար*** էին կոչվում, ապրում էին Չինաստանի ու Սիբիրի միջև ընկած տափաստաններում և զբաղվում քոչվորական անասնապահությամբ: Մոնղոլ ցեղապետներից Թեմուչինը 1206թ. այդ ցեղերը մեկ պետության մեջ միավորելով՝ հռչակվեց ընդհանրական խան, ստանալով ***Չինգիզ խան*** պատվավոր տիտղոսը: Նա ստեղծեց կարգապահ ու մարտունակ մեծ բանակ և սկսեց նվաճել մերձակա ու հեռավոր երկրները: Մոնղոլական զորքերն ամենուրեք ավեր, կոտորած ու սարսափ էին սփռում: 1220թ. վերջերին մոնղոլական 20-հազարանոց բանակը հետախուզական նպատակով ներխուժեց Այսրկովկաս: Մոնղոլները Հայաստանում հաղթեցին հայ-վրացական միացյալ զորքերին: Ապա 1222թ. մեծ ավարով վերադարձան հայրենիք:

Երեք տարի անց հսկայական բանակով Հյուսիսարևելյան Հայաստան ներխուժեց մոնղոլներից հալածված խորեզմշահ Ջալալ ադ-Դինը: Նա Գառնիի մոտ հաղթեց Իվանե աթաբեկի գլխավորած հայ-վրացական բանակին: Մինչև 1231թ. մոնղոլական զորքերի կողմից ջախջախվելն ու սպանվելը Ջալալ ադ-Դինն ասպատակեց Հայաստանի տարբեր շրջաններ և Արևելյան Վրաստանը: Նրա ասպատակությունների պատճառով երկիրը տնտեսական ու ռազմական առումներով ավելի թուլացավ: Հենց դրանից էլ օգտվեցին մոնղոլները:

Հայաստանի գրավումը: Մուղանում տեղակայված 30-հազարանոց մոնղոլական բանակը 1236թ. ամռանը Չարմաղանի գլխավորությամբ ներխուժեց Հյուսիսարևելյան Հայաստան: Այդ բանակին իրենց ընտանիքներով ու ունեցվածքով ուղեկցում էին մոնղոլական բազմաթիվ ցեղեր՝ նպատակ ունենալով

հաստատվել նվաճված տարածքներում: Քաջատեղյակ լինելով, որ միասնական ուժի դեմ չեն կռվելու, մոնղոլներն իրենց բանակը բաժանեցին առանձին զորամասերի: Նրանք առաջադրանք ունեին գրավելու այս կամ այն իշխանությունը: Վրացական արքունիքը որևէ քայլ չկատարեց թշնամուն համատեղ դիմագրավելու համար: Հայ իշխաններն էլ գերադասեցին կամ հեռանալ Արևմտյան Վրաստան, կամ էլ հարկ վճարելու և զինվորական ծառայություն կատարելու պայմանով ենթարկվել նվաճողներին: Այդ պայմանով մոնղոլներին հպատակվեց նաև Զաքարյան իշխանական տունը գլխավորող իշխան Ավագը՝ Իվանե աթաբեկի որդին: Նվաճողներին դիմադրեցին միայն որոշ բերդեր և հատկապես քաղաքները: Մոնղոլները շրջապատեցին նաև Անին: Չնայած անեցիների կատաղի դիմադրությանը՝ նրանք, պարիսպների մեջ անցք փորելով, 12 օր անց գրավեցին քաղաքը: Անին ավերվեց ու կողոպտվեց, իսկ բնակչության զգալի մասը գերեվարվեց կամ սպանվեց: Գրավվեցին նաև Շամքորը, Լոռին, Կարսը, Դվինը, Սուրբ Սարին և այլ քաղաքներ: Նվաճվեց նաև Արևելյան Վրաստանը՝ Տփղիս մայրաքաղաքով: Այսպիսով՝ 1236թ. ամառ-աշնանը ամբողջ Հյուսիսարևելյան Հայաստանը գրավվեց մոնղոլական զորքերի կողմից:

1242թ. գարնանը մոնղոլական զորքերը Բաչուի գլխավորությամբ արշավեցին Իկոնիայի սելջուկյան սուլթանության իշխանության տակ գտնվող Հայաստանի արևմտյան գավառներ: Նրանք մարտական գործողությունների առաջին գծում տեղակայելով հայ-վրացական իշխանազորը, երկամսյա պաշարումից հետո գրավեցին սահմանագլխային Կարին խոշոր քաղաքը: Այն կողոպտվեց ու ավերվեց, իսկ բնակչության մեծ մասը սպանվեց կամ գերվեց: Հաջորդ տարում մոնղոլները Չմանկատուկի ճակատամարտում ջախջախեցին Իկոնիայի սուլթանի բանակը և գրավեցին մի շարք քաղաքներ: Նրանց համառորեն դիմադրեց Երզնկան, որն արժանացավ Կարինի ճակատագրին: Մոնղոլները 1244թ. գրավեցին նաև Հայաստանի հարավային շրջանները: Դրանով երկրի նվաճումն ավարտվեց:

Մողոլական նվաճումներն ու տիրապետությունը մեծագույն չարիք էին հայ ժողովրդի համար: Երկրին պատճառվեցին մարդկային հսկայական կորուստ ու նյութական վնաս: Ավերվեցին ու մարդաթափ եղան բազմաթիվ բնակավայրեր: Տնտեսությունը խիստ հետադիմեց: Նյութական ծանր պայմանների և կյանքի ու գույքի անապահովության հետևանքով սկսվեց բնակչության արտագաղթ:

Պայքար մոնղոլների դեմ: Չհանդուրժելով օտար տիրապետությունը՝ հայ և վրաց իշխանների մի մասը փորձեց համախմբվել՝ այն տապալելու համար: Այդ նպատակով նրանք 1249թ. գաղտնի ժողով հրավիրեցին ու որոշեցին ապստամբել: Սակայն մատնիչի միջոցով դա հայտնի դարձավ մոնղոլներին: Երբ իշխանները մեկնեցին իրենց տիրույթներ, որպեսզի զորք հավաքեն և

պայմանավորված վայրում հանդիպեն, ձերբակալվեցին ու տեղափոխվեցին Շիրակավան: Իշխաններն իրենց մեղքը չխոստովանեցին: Ի վերջո, նրանք իշխան Ավագ Զաքարյանի միջնորդությամբ փրկագնով ազատվեցին: Չնայած դրան՝ մոնղոլներն ասպատակեցին ապստամբության փորձ կատարած իշխանների կալվածքները:

Հակամոնղոլական հաջորդ ընդվզումը 1259թ. սկսված ապստամբությունն էր: Այն գլխավորում էր վրաց Դավիթ VII թագավորը, որի շուրջը հավաքվել էին որոշ հայ և վրացի իշխաններ: Ապստամբության պատճառներն էին հարկերի հերթական ծանրացումը և հայ-վրացական իշխանազորը Եգիպտոսի սուլթանության դեմ պատերազմի ուղարկելու հրամանը: Մոնղոլական 20-հազարանոց բանակն Արղունի գլխավորությամբ շարժվում է ապստամբների դեմ: Վերջիններս չեն ընկրկում և հաջողությամբ դիմադրում են հակառակորդին: Սակայն Դավիթ VII-ը, տեսնելով, որ ուժերն անհավասար են, երկու տարի անց բանակցում է մոնղոլների հետ և կրկին հնազանդվում նրանց:

Հետագա հակամոնղոլական ընդվզումները կանխելու և իրենց տիրապետությունը պահպանելու համար մոնղոլները նպատակադիր թուլացնում էին հայ իշխանական տների ռազմատնտեսական ներուժը: Հարկերը վճարելու համար նրանցից ոմանք, անգամ Զաքարյանները, ստիպված վաճառում էին իրենց տոհմային տիրույթների մի մասը: Շուտով մոնղոլների աջակցությամբ Օրբելյաններն ու Հասան-Ջալալյանները դուրս եկան Զաքարյանների ենթակայությունից: Դրանով նվաճողները ջլատեցին նաև հայ իշխանների միասնությունը: Ուստի, երբ սկսվեց մոնղոլական երբեմնի հզոր պետության՝ Իլղանության թուլացումն ու քայքայումը, հայ իշխանական տները չկարողացան դրանից օգտվել և վերականգնել հայոց պետականությունը:

Հայաստանի քաղաքական իրավիճակը XIV դարում: Իլղանությունը XIV դ. սկզբներին իր վերջին ուժեղ տիրակալ Ղազան խանից հետո հաստատուն բռնեց անկման ուղին: Դրա պատճառներից էին պետության ապաշնորհ կառավարումը, գահակալական պայքարը, տեղական իշխանների ընդվզումները և արտաքին թշնամիների ոտնձգությունները: XIV դ. կեսերին Իլղանությունը փլուզվեց, և նրա տեղում առաջացան մի շարք անկախ իշխանություններ:

Նման պայմաններում հայ ժողովրդի տնտեսական և քաղաքական վիճակն ավելի ծանրացավ: Ստեղծված անելանելի վիճակից փրկությունը ժողովրդի մի մասը տեսնում էր օտարագնացության մեջ: Ընդ որում, արտագաղթում էին բնակչության բոլոր խավերի ներկայացուցիչները: Փոխարենը Հայաստան էին թափանցում սելջուկ-թյուրքերին ազգակից թուրքմենական քոչվոր ցեղեր: Նրանք կամ հաստատվում էին ամայացած հողերում, կամ էլ զբաղեցնում էին հայ իշխանական տներից խլված հողերը: Թուրքմենական ցեղերի ներհոսքը Հայաստան հատկապես ուժեղացավ Իլղանության անկու-

մից հետո: ***Կարա-կոյունլու*** կոչվող թուրքմենական ցեղերը տիրացան Հայաստանի կենտրոնական, իսկ ***ակ-կոյունլու*** անվանվողները՝ հարավ-արևմտյան գավառներին: Այդ ցեղերի դրոշների վրա դրոշմված էին սպիտակ (ակ) և սև (կարա) ոչխարների պատկերներ, ինչից և ծագել են նրանց անվանումները: Այդ ցեղերն անհաշտ թշնամիներ էին, և ստեղծելով իրենց իշխանությունները, շարունակ միմյանց դեմ կռվելով՝ մեծ աղետներ էին պատճառում հայ ժողովրդին:

Բնականաբար՝ այսպիսի իրավիճակը պետք է հանգեցներ հայ իշխանական տների քայքայմանը և XIV դ. երկրորդ կեսին պատմական ասպարեզից նրանց մեծ մասի հեռանալուն: Նման ճակատագիր վիճակվեց նաև Զաքարյաններին: Շարունակեցին գոյատևել միայն Օրբելյանների, Հասան-Ջալալյանների, Դոփյանների ու Ազիզբեկյանների, ինչպես նաև մի քանի այլ մանր իշխանական տների մնացորդներ: Հայաստանի հարավային ու արևմտյան շրջաններում կղզյակների տեսքով պահպանվում էին Թոռնիկյանների իշխանությունը՝ Սասունում, Արծրունիներինը՝ Մոկքում ու Ռշտունիքում, և այլ՝ ավելի փոքր իշխանություններ:

Երբ XIV դ. երկրորդ կեսին ***կարա-կոյունլուների*** ու ***ակ-կոյունլուների*** միջև ընդհարումները և Ոսկե հորդա կոչվող մոնղոլական պետության հարձակումները հաճախակի դարձան, հայ ժողովրդի վիճակն ավելի վատթարացավ: Սակայն նրան ավելի ծանր փորձություններ էին սպասվում: Միջինասիական զորավար ***Լենկթեմուրը*** (Լենկ-Թեմուր՝ Կաղ Թեմուր) ստեղծեց մի հզոր պետություն Սամարղանդ մայրաքաղաքով և սկսեց իր նվաճումները: Նա բազմաքանակ զորքով 1386-1402թթ. չորս անգամ ներխուժեց Հայաստան և հրի ու սրի, ավարի ու գերեվարության ենթարկեց: Սակայն տեղ-տեղ նա հանդիպեց նաև համառ դիմադրության: Օրինակ՝ արյունարբու նվաճողն այդպես էլ չկարողացավ ծնկի բերել քաջարի սասունցիներին: Միայն 1405թ. Լենկթեմուրի մահը հայ ժողովրդին փրկեց հետագա էլ ավելի ծանր արհավիրքներից:

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻՆ՝ ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆԻ ՄԱՍԻՆ

«Կերպարանքով ու տեսքով ահավոր տգեղ էին ու զարհուրելի: Մորուք չունեին, բայց ոմանք սակավաթիվ մազ ունեին շրթունքին կամ դնչին: Աչքները նեղ էին ու սրատես, ձայները՝ նուրբ ու սուր, երկարակյաց էին ու դիմացկուն:

Երբ լինում էր, հաճախ էին անհագ ուտում ու խմում, իսկ երբ չկար, ժուժկալ էին: Ուտում էին ամեն տեսակի կենդանի՝ մաքուր ու անմաքուր. ձիու միսը ավելի էին գերադասում»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ մոնղոլներին հաջողվեց հեշտությամբ գրավել Հյուսիսարևելյան Հայաստանը:
2. Մոնղոլները ե՞րբ գրավեցին Հայաստանի արևմտյան և հարավային շրջանները:
3. Ինչպիսի՞ն էին մոնղոլական նվաճման հետևանքները:
4. Ե՞րբ և ինչո՞ւ տեղի ունեցան հայ-վրացական հակամոնղոլական ընդվզումները:
5. Ինչո՞ւ էին մոնղոլները թուլացնում հայ իշխանական տների ռազմատնտեսական ներուժը:
6. Ինչո՞ւ Իլղանությունը կործանվեց:
7. Իլղանության կործանումից հետո թուրքմենական ի՞նչ ցեղեր էին իշխում Հայաստանում:
8. Լենկթեմուրը քանի՞ անգամ է արշավել Հայաստան:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• Չինաստան • Սիբիր • Մոնղոլ • Թեմուչին (Չինգիզ խան) • հորդա • Ջալալ ադ Դին • Չարմաղան • Մուղան • Ավագ Զաքարյան • Սուրբ Մարի • Կարին • Չմանկատուկ • Երզնկա • Շիրակավան • Դավիթ VII • Իլղանություն • կարա-կոյունլու • ակ-կոյունլու • Ազիզբեկյաններ • Լենկթեմուր

7-րդ թեմայի ամփոփում

1. XI դ. երկրորդ կեսին Հայաստանը նվաճվեց սելջուկ-թյուրքերի կողմից: Սելջուկյան արշավանքներն ու տիրապետությունը ծանր հարված հասցրին երկրի տնտեսությանն ու հայ իշխանական տներին: Երկիրն ավերվեց ու կողոպտվեց, բնակչության մի մասը կոտորվեց: Ծայր առավ զանգվածային արտագաղթ:
2. Հայ-վրացական երկուստեք շահավետ զինակցության շնորհիվ հնարավոր դարձավ ազատագրել Հյուսիսարևելյան Հայաստանը: Զաքարյանների իշխանության շնորհիվ ազատագրված շրջանները տնտեսական ու մշակութային մեծ վերելք ապրեցին:
3. Հայաստանը XIII դ. առաջին կեսին, ի թիվս այլ երկրների, ենթարկվեց մոնղոլների արշավանքներին: 1230-ական թվականների երկրորդ կեսից մինչև 1240-ական թվականների առաջին կեսը մոնղոլները գրավեցին ամբողջ երկիրը՝ հաստատելով իրենց դաժան տիրապետությունը: Մոնղոլական տիրապետության շրջանում շատ իշխանական տներ հեռացան պատմական ասպարեզից: Սակայն, չնայած դաժան պայմաններին, հայ ժողովուրդը շարունակեց պայքարն օտար տիրապետության դեմ:

4. Հայ ժողովրդի համար ծանր փորձություն էր թուրքմենական կարա-կոյունլու և ակ-կոյունլու ցեղերի հայտնվելը Հայաստանում: Այդ ցեղերը ավերում ու կողոպտում էին երկիրը: Հայ ժողովրդի համար ոչ պակաս աղետաբեր էին Լենկթեմուրի ավերիչ արշավանքները, որոնց հետևանքով երկրին պատճառվեցին մարդկային ու նյութական մեծ կորուստներ:

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

1. ՀԱՅԵՐԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

Կիլիկիայի աշխարհագրական դիրքը: Անիի թագավորության անկումից մի քանի տասնամյակ անց հայ ժողովուրդը նոր պետականություն կերտեց հեռավոր Կիլիկիայում:

Փոքր Ասիայի հարավարևելյան մասում գտնվող Կիլիկիան չափազանց բարենպաստ աշխարհագրական դիրք ուներ: Կիլիկիան բարձր լեռնաշղթաներով առանձնանում էր հարևան երկրամասերից և հուսալիորեն պաշտպանվում թշնամական հարձակումներից: Լեռնանցքները և կիրճերը պաշտպանական ամուր պատնեշներ էին ստեղծում: Եթե թշնամուն նույնիսկ հաջողվում էր ներխուժել Կիլիկիա, ապա բնակիչները կարողանում էին փակել նրա վերադարձի ճանապարհները և զգալի կորուստներ պատճառել:

Հարավում ընկած Միջերկրական ծովը ոչ միայն բնական պատնեշ էր, այլև առևտրական կապերի հնարավորություն էր ընձեռում: Նավահանգիստների (Այաս, Կոռիկոս) միջոցով Կիլիկիան առևտրական կապեր էր պահպանում տարբեր երկրների հետ: Կիլիկիայի տարածքը տնտեսության բոլոր ճյուղերի զարգացման նպաստավոր պայմաններ էր ապահովում: Մեղմ կլիման և բարեբեր գետահովիտները բարձր բերք ստանալու նախադրյալներ էին ստեղծում: Անտառածածկ լեռները հարուստ էին արոտավայրերով, ինչպես նաև բազմատեսակ օգտակար հանածոներով, հատկապես մետաղներով:

Կիլիկիան բաղկացած էր երեք խոշոր պատմաաշխարհագրական շրջաններից: Երկրի հարավարևելյան հարթավայրային հատվածը հայտնի էր Դաշտային Կիլիկիա անվանումով: Այն ուներ մեծաթիվ բնակչություն, խոշոր քաղաքներ և զարգացած գյուղատնտեսություն: Այստեղ հնարավոր էր տարվա մեջ 2-3 անգամ բերք ստանալ: Հյուսիս-արևելքում ընկած էր բարձրաբերձ լեռնաշղթաներով և ամրակուռ բերդերով պատված Լեռնային Կիլիկիան: Կիլիկիայի արևմտյան մասում գտնվում էր Քարուտ Կիլիկիան:

Հայերը Կիլիկիայում: Հնագույն ժամանակներից հայերը զգալի թիվ են կազմել Կիլիկիայում: Նրանց քանակն աճեց, երբ Տիգրան Մեծի տերության կազմի մեջ մտավ նաև Կիլիկիան: Կիլիկիայում հայերի նոր խմբեր հաստատվեցին վաղ միջնադարում, հատկապես արաբական նվաճումներից հետո: X դ. վերջերին հայերը Կիլիկիայում առանձին եպիսկոպոսություններ ունեին և կարևոր դեր էին կատարում երկրի կյանքում:

Բյուզանդիայի վարած քաղաքականության հետևանքով XI դ. կեսերից Մեծ Հայքից սկսվեց հայերի զանգվածային արտագաղթ: Հայ բնակչությունն ավելի հաճախ հոծ խմբերով տեղափոխվում էր Կիլիկիա: Այսպես՝ Վասպուրականի Սենեքերիմ թագավորի հետ 1021թ. Սեբաստիա տեղափոխված հայերի մի մասն արմատներ ձգեց Կիլիկիայում: Հսկայական թվով հայեր Փոքր Ասիա տեղափոխվեցին Գագիկ II-ի և Գագիկ Աբասյանի հետ:

Մանրանկար Սկևռայի Ավետարանից

Հայերի հոսքը դեպի Կիլիկիա հատկապես ուժեղացավ սելջուկ-թյուրքերի արշավանքների ժամանակաշրջանում: Հայերը գաղթում էին թե՛ Բյուզանդիայի արևելյան նահանգներից և թե՛ Մեծ Հայքից: Կիլիկիա տեղափոխվեցին զգալի թվով իշխաններ Արցախից, Սասունից և Շիրակից: Նրանց մի մասը հաստատվեց Միջերկրական ծովի առափնյա շրջաններում: Հատկապես ստվարացավ կիլիկյան քաղաքների՝ Սիսի, Ադանայի, Տարսոնի հայ բնակչությունը: XI դ. վերջին հայերը թվով գերազանցում էին Կիլիկիայում ապրող մյուս ժողովուրդներին՝ ասորիներին, հրեաներին, հույներին:

XI դ. 70-ական թվականներին սելջուկներից Բյուզանդիայի կրած պարտությունների հետևանքով կայսրության արևելյան նահանգներում անկայուն վիճակ հաստատվեց: Բյուզանդացիները կորցրեցին վերահսկողությունը զգալի թվով շրջանների նկատմամբ: Միաժամանակ՝ այդ տարածքներում իրենց լիակատար իշխանությունը դեռևս չէին հաստատել սելջուկ-թյուրքերը: Դրանից օգտվեցին հայ ավատատերերը՝ ստեղծելով իրենց անկախ իշխանությունները:

Կիլիկիա տեղափոխված հայ իշխանները ծառայության էին մտնում բյուզանդացիների մոտ և հաճախ դառնում առանձին գավառների կառավարիչներ: Հայ իշխանական տների շուրջն էր համախմբվում տեղական հայ բնակչությունը: Հետզհետե բյուզանդացիներից և սելջուկ-թյուրքերից անկախ հայկական իշխանությունների ստեղծման նախադրյալներ էին առաջանում:

Այսպես՝ Սեբաստիա տեղափոխված Արծրունի իշխաններից Աբլղարիբը 1042թ. նշանակվեց մի քանի քաղաքների ու բերդերի կառավարիչ: Նրա

դուստրն ամուսնացավ Մեծ Հայքից Կիլիկիա տեղափոխված Օշին իշխանի հետ և որպես օժիտ ստացավ Լամբրոն ամրոցն ու շրջակա տարածքները: Այսպես առաջացավ Հեթումյանների իշխանությունը:

Հայկական առաջին խոշոր իշխանությունը ստեղծեց Փիլարտոս Վարաժնունին: Նա զինվորական ծառայության մեջ էր բյուզանդական բանակում և հասել էր բարձր դիրքի: Մանազկերտի ճակատամարտից հետո Փիլարտոսը իրեն ենթարկեց ընդարձակածավալ տարածքներ: Նրա հիմնած իշխանության կենտրոնը Մարաշ քաղաքն էր: Բյուզանդացիները նույնիսկ խրախուսեցին Փիլարտոսին՝ հույս ունենալով նրա օգնությամբ պայքարել սելջուկ-թյուրքերի դեմ: Եվ իրոք, շուրջ մեկ տասնամյակի ընթացքում Փիլարտոսի զորաջոկատները հաջողությամբ դիմադրում էին սելջուկներին:

Սակայն հետագայում սելջուկ-թյուրքերը գրավեցին Փիլարտոսի իշխանության տարածքը, և նա հեռացավ քաղաքական ասպարեզից: Նրա գործունեությունը ցույց տվեց, որ հայ զորահրամանատարները կարող են մեծ հաջողությունների հասնել:

Փիլարտոսի իշխանության անկումից հետո հայտնվեցին նոր հայ տիրակալներ, որոնք դարձան նրա քաղաքական ժառանգորդները: Եդեսիայում հաստատվեց Թորոս իշխանը, որի իրավունքները ճանաչեցին նույնիսկ սելջուկ-թյուրքերը: Հատկապես սրընթաց էր Գող Վասիլի իշխանության վերելքը: Սկզբնական շրջանում նա ենթարկվում էր Փիլարտոսին և նրանից ստացել էր Կիլիկիայից արևելք ընկած Քեսուն և Ռաբան քաղաքները: Փիլարտոսի մահից հետո Գող Վասիլը տիրացավ նաև Մարաշին: Նա այնպիսի հռչակ էր ձեռք բերել, որ XII դ. սկզբներին նրա տիրույթներում հաստատվեցին Հայոց կաթողիկոսները: Այս իշխանությունը Գող Վասիլի մահից հետո խաչակիրների խարդավանքների զոհը դարձավ:

Այսպիսով՝ հայկական իշխանությունների առաջացման ու ընդարձակման համար առավել բարենպաստ պայմաններ գոյություն ունեին Մանազկերտի ճակատամարտին հաջորդած մեկուկես տասնամյակի ընթացքում: Սակայն սելջուկ-թյուրքերի գերիշխանության հաստատումը, ապա և խաչակրաց պետությունների ստեղծումը հայկական իշխանությունների մի մասի անկման պատճառ դարձան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպիսին էին Կիլիկյան Հայաստանի բնակլիմայական պայմանները: Որոնք էին Կիլիկիայում հայ բնակչության հաստատվելու պատճառները:
2. Բնութագրեք XI դ. վերջի Կիլիկիայի բնակչության էթնիկ կազմը և քաղաքական իրադրությունը: Երբ և ինչպես առաջացան հայկական իշխանությունները Կիլիկիայում:
3. Հայ իշխաններից ովքեր դարձան ինքնուրույն տիրակալներ: Ինչ հանգամանքներ բարդացրին հայկական իշխանությունների դրությունը:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/vvsh/

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• Դաշտային Կիլիկիա • Լեռնային Կիլիկիա • Քարուտ Կիլիկիա • Այաս • Սիս • Ադանա • Տարսոն • Կոռիկոս • Աբլղարիբ Արծրունի • Օշին իշխան • Փիլարտոս Վարաժնունի • Գող Վասիլ

2. ՌՈՒԲԻՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Ռուբինյանների հաստատվելը Կիլիկիայում: Ռուբեն իշխանը կարողացավ հիմնադրել մի իշխանություն, որն ընթացավ կայուն վերելքի ուղիով: ***Ռուբեն Ի-ի*** (1080-1095թթ.) տոհմային պատկանելության մասին ստույգ տեղեկություններ չեն պահպանվել: Հայ պատմիչները նրան վերագրում են թագավորական ծագում՝ իբր թե նա սերում էր Բագրատունիներից կամ Արծրունիներից: Հնարավոր է, որ Ռուբեն Ի-ը եղել է Գագիկ II-ի հեռավոր ազգականը կամ զինակիցներից մեկը:

1080թ. Ռուբենն ապստամբեց Բյուզանդական կայսրության դեմ և տիրացավ Լեռնային Կիլիկիայի բերդերից երեքին: Մերձակա շրջանների հայերն օժանդակեցին նրա պայքարին: Ռուբինյանները հաստատվել էին Լեռնային Կիլիկիայի դժվարամատչելի մի տարածքում: Հայերին հաջողվեց այնտեղից դուրս քշել բյուզանդացիներին և դնել անկախ հայկական իշխանության հիմքերը: Հիմնադրի անունով այն կոչվեց Ռուբինյան: Նոր հիմնադրված իշխանությունն ամուր արմատներ ձգեց Կիլիկիայում:

Կիլիկիայի հայկական իշխանության դրոշ

Ռուբինյան իշխանության ընդարձակումը: Ռուբինյան իշխանության հզորացմանը Բյուզանդիան չխոչընդոտեց: Այդ ժամանակահատվածում կայսրությունը ծանր ճգնաժամի մեջ էր: Սելջուկները Փոքր Ասիայում ստեղծել էին Իկոնիայի սուլթանությունը, որը դարձել էր Բյուզանդիայի վտանգավոր թշնամին:

Դժվարին պայմաններում բյուզանդական կայսրը սելջուկների դեմ պայքարելու համար օգնություն խնդրեց եվրոպական քրիստոնեական երկրներից և Հռոմի պապից: Կաթոլիկ հոգևորականության կոչով 1096թ. սկսվեց խաչակրաց առաջին արշավանքը, որի նպատակը Սուրբ երկրի՝ Պաղեստինի և Երուսաղեմում գտնվող Հիսուս Քրիստոսի գերեզմանի ազատագրումն էր: Չնայած իրենց հռչակած վեհ նպատակին՝ արևմտաեվրոպական խաչակիրները Մերձավոր Արևելքում իրականացնում էին նվաճողական քաղաքականություն: Խաչակրաց արշավանքի հետևանքով առաջացավ ռազմաքաղաքական նոր

33 von 98 12.02.2021, 11:04

իրադրություն: Դա սկզբնական շրջանում մեծ հույսեր էր ներշնչում Արևելքի քրիստոնյա ժողովուրդներին: Մասնավորապես՝ Կիլիկիայի հայերը բազմակողմանիորեն օժանդակեցին խաչակիրներին՝ ակնկալելով ստանալ նրանց օգնությունը սելջուկ-թյուրքերի դեմ մղվող պայքարում:

Խաչակիրները ռազմական ուժով, հաճախ նաև դավադրությամբ և խաբեությամբ, Արևելքում ընդարձակ տարածքներ նվաճեցին: Նրանք գրավեցին Միջերկրական ծովի արևելյան ափի մի մասը ու տիրացան Երուսաղեմին: Նրանց ստեղծած պետություններից՝ Ռուբինյան իշխանության անմիջական հարևանությամբ գտնվում էին Եդեսիայի կոմությունը և Անտիոքի դքսությունը: Խաչակիրների հետ հայերը համակողմանի սերտ շփումներ հաստատեցին: Հայկական իշխանությունները հաճախ համագործակցում էին խաչակրաց պետությունների հետ ընդհանուր թշնամու դեմ պայքարում: Ռուբինյան իշխանության համար որոշակի դրական դեր կատարեց այն հանգամանքը, որ սելջուկ-թյուրքերը հետ մղվեցին Փոքր Ասիայի խորքեր, և թուլացավ Լեռնային Կիլիկիայի նկատմամբ նրանց գործադրած ճնշումը: Այսպիսով՝ խաչակիրները ջլատեցին սելջուկների ուժերը և դյուրացրին հայկական իշխանության վերելքը: Միաժամանակ՝ հայերի ու խաչակիրների միջև առկա էին լուրջ տարաձայնություններ և շահերի բախում: Ուստի Արևելքում հիմնադրված խաչակրաց իշխանությունները, հատկապես Անտիոքի դքսությունը, որոշ դեպքերում պայքարում էին նաև Կիլիկյան Հայաստանի դեմ:

Վահկա բերդը

Ռուբեն I-ի որդի ***Կոստանդին I***-ը (1095-1100թթ.) ընդարձակեց Ռուբինյան իշխանության սահմանները՝ պայքար մղելով միաժամանակ երկու ճակատով: Կոստանդին I-ը առաջին հերթին տարածքներ էր գրավում սելջուկ-թյուրքերից: Մյուս կողմից՝ նա կռվում էր նաև բյուզանդացիների դեմ, որոնք որոշ կարևոր հենակետեր էին պահպանում Լեռնային Կիլիկիայում: Կոստանդին I-ը 1098թ. բյուզանդացիներից գրավեց ***Վահկա*** բերդը, որը դարձավ հայկական իշխանության կենտրոնը: Այսպիսով՝ Կոստանդին I-ը դարձավ Լեռնային Կիլիկիայի մեծ մասի տիրակալը:

Ռուբինյան իշխանության պայքարը Դաշտային Կիլիկիայի համար: XII դ. սկզբներից Կիլիկիայի հայկական իշխանությունը պայքար ծավալեց Դաշտային Կիլիկիայի համար: Առանց Դաշտային Կիլիկիայի Ռուբինյան իշխանության հետագա վերելքն անհնարին կլիներ: Մինչդեռ Դաշտային Կիլի-

կիայի հարցում Բյուզանդիան անգիջում դիրքորոշում էր որդեգրել, քանի որ Միջերկրական ծովի առափնյա տարածքները կենսական նշանակություն ունեին կայսրության համար: Դաշտային Կիլիկիային ձգտում էին տիրանալ նաև խաչակիրները, ուստի Անտիոքի դքսությունը ևս հաճախ հանդես էր գալիս Ռուբինյան իշխանության դեմ:

Կոստանդին I-ին հաջորդեց որդին՝ ***Թորոս I***-ը (1100-1129թթ.): Օգտվելով այն հանգամանքից, որ մահմեդական պետությունների հիմնական ուժերը պայքարում էին խաչակիրների դեմ, Ռուբինյան իշխանությունը նոր հաջողությունների հասավ: 1104թ. հայոց բանակը բյուզանդացիներին դուրս քշեց Անարզաբա և Սիս քաղաքներից ու ճանապարհ հարթեց դեպի Դաշտային Կիլիկիա: Միաժամանակ՝ Թորոս I-ը չէր դադարեցնում մարտերը սելջուկ-թյուրքերի դեմ: Այդ պայքարում նա հաջողությամբ համագործակցում էր հայկական այլ տիրակալների հետ: Ռուբինյան իշխանությունը հաղթանակ տարավ Իկոնիայի սելջուկյան սուլթանության նկատմամբ և ընդարձակեց սահմանները դեպի հյուսիս: Այդ իշխանության հեղինակությունն այնքան բարձրացավ, որ թշնամիների հալածանքներին ենթարկված հայ իշխանները սկսեցին ապաստանել Թորոս I-ի տիրույթներում:

Թորոս I-ի մահից հետո իշխանությունը գլխավորեց նրա եղբայր ***Լևոն I***-ը (1129-1137թթ.), որի օրոք Դաշտային Կիլիկիայի համար պայքարն ավելի սուր բնույթ ընդունեց: XII դ. 30-ական թթ. հայոց բանակը բյուզանդացիներից մաքրեց Դաշտային Կիլիկիայի քաղաքները, և Կիլիկյան Հայաստանն արևմուտքում հասավ Սելևկիա գետին: Լևոն I-ը հետևողականորեն պայքարում էր նաև Անտիոքի դքսության դեմ: Ի վերջո, հայկական զորքերը բյուզանդացիներից ու խաչակիրներից մաքրեցին Դաշտային Կիլիկիան և դուրս եկան Միջերկրական ծով: Տեղական բնակչությունը, որի մեծ մասն արդեն հայեր էին, ջերմորեն էր ընդունում Լևոն I-ին:

Լևոն I-ի ռազմական հաջողությունները խոր անհանգստություն առաջ բերեցին Բյուզանդիայում: 1137թ. բյուզանդական զորքերը խոշոր արշավանք ձեռնարկեցին դեպի Կիլիկիա: Բյուզանդացիները, Դաշտային Կիլիկիայի քաղաքները գրավելուց հետո, շարժվեցին դեպի Լեռնային Կիլիկիայի ամրությունները: Թշնամուն երկարատև դիմադրեցին Անարզաբա քաղաքը և Վահկա բերդը: Ի վերջո, բյուզանդացիները գրավեցին ամբողջ Կիլիկիան և գերեվարեցին Լևոն I-ին և նրա երկու որդիներին՝ ***Ռուբենին*** ու ***Թորոսին***: Գերությունից խուսափեցին Լևոն I-ի կրտսեր որդիները՝ ***Ստեփանեն*** և ***Մլեհը***, որոնք այդ ժամանակ Կիլիկիայում չէին:

Ռուբինյան իշխանության կորուստը երկար չտևեց: Շուտով նվաճողների դեմ պայքար ծավալեցին անընկճելի մնացած հայկական ջոկատները: Բյուզանդացիների դեմ կռիվներն ազատագրական պատերազմի վերածվեցին,

երբ հայկական զորամասերը գլխավորեց բյուզանդական գերությունից փախած Թորոսը: Նրան անմիջապես միացան կրտսեր եղբայրները՝ Ստեփանեն ու Մլեհը: Հայկական զինված ուժերը կարճ ժամանակի ընթացքում թշնամուց ազատագրեցին Լեռնային Կիլիկիայի ամրոցները: Հայոց բանակն առաջ շարժվեց դեպի ծով և տիրացավ նաև Դաշտային Կիլիկիայի քաղաքներին: Ամբողջ Դաշտային Կիլիկիան մտավ Ռուբինյան իշխանության կազմի մեջ:

Բյուզանդիան այդ տարիներին զբաղված էր արևմուտքում սահմաններն ընդարձակելով, ուստի նվազ ուշադրություն էր դարձնում Կիլիկիային: Միայն XII դ. կեսերին Բյուզանդիան փորձեց խորտակիչ հարված հասցնել Կիլիկյան Հայաստանին, բայց խայտառակ պարտություններ կրեց: ***Թորոս II***-ը (1143-1169թթ.) ոչ միայն կարողացավ ջախջախել բյուզանդացիներին, այլև հաղթանակներ տարավ սելջուկ-թյուրքերի և խաչակիրների նկատմամբ:

Թորոսի իշխանությունը տարածվում էր Կիլիկիայի մեծ մասի վրա: Սահմանները պաշտպանելու նպատակով նա պահում էր 30-հազարանոց բանակ: Զգալի ուշադրություն էր դարձվում նաև երկրի տնտեսությանը: Թորոս II-ի օրոք զգալի առաջընթաց ապրեցին գյուղատնտեսությունը, արհեստագործությունն ու առևտուրը:

Հայոց պետության հետագա ամրապնդումը: Թորոս II-ի կառավարման վերջին տարիներին եղբայրը՝ Մլեհը, ընդհարվել էր նրա հետ և հեռացել Հալեպի ամիրայություն: Թորոս II-ի մահվանից հետո իր դաշնակից Հալեպի ամիրայի օգնությամբ Մլեհը բռնությամբ տիրացավ Կիլիկյան Հայաստանին: Գահ բարձրանալուց հետո ***Մլեհը*** (1169-1175թթ.) դաշնակցեց հարևան մահմեդական պետությունների հետ՝ ընդդեմ Բյուզանդիայի և Անտիոքի դքսության: Նա վճռական փոփոխություններ մտցրեց իշխանության ներքին և արտաքին քաղաքականության մեջ: Երկրի շահերը պահանջում էին իշխանությանը միացնել Դաշտային Կիլիկիայի բոլոր ծովափնյա շրջանները, մինչդեռ այստեղի քաղաքները կրկին անցել էին բյուզանդացիներին ու խաչակիրներին: Դաշտային Կիլիկիայի արևմտյան մասը բյուզանդացիներից և արևելյան հատվածը խաչակիրներից մաքրելու նպատակով Մլեհը դաշնակցեց հարևան մահմեդական ամիրայությունների հետ: Մլեհը կարողացավ խոշոր հաջողությունների հասնել և նորից տիրանալ Մամեստիային,

Սիս մայրաքաղաքի միջնաբերդը

Ադանային և Տարսոնին: Նա երկրից դուրս քշեց նաև խաչակիր ասպետներին: Մայրաքաղաք հռչակվեց ***Սիսը***, որն ամրացվեց և բարեկարգվեց: Սլեհի ձեռնարկումները նրա դեմ դուրս բերեցին ոչ միայն արտաքին թշնամիներին, այլև հայ հոգևորականությանն ու իշխանների մի մասին: Իշխանները չափազանց դժգոհ էին նրա խստություններից, իսկ հոգևորականությունը բողոքում էր մահմեդականների հետ հաստատած սերտ փոխհարաբերությունների դեմ: Սլեհը 1175թ. զոհ գնաց նրանց կազմակերպած դավադրությանը:

Սիս մայրաքաղաքի զինանշանը

Հաջորդ գահակալները շարունակեցին կենտրոնական իշխանության ամրապնդումը: Հզորացած Ռուբինյան իշխանությունը XII դ. 80-ական թթ. հակահարձակման անցավ և բյուզանդացիներին զրկեց Կիլիկիայում ունեցած վերջին հենակետերից: Մեկդարյա պայքարը, որ մղում էր Կիլիկյան Հայաստանը Բյուզանդիայի դեմ, ավարտվեց հայերի հաղթանակով: Խաչակիրները ևս տեղի տվեցին և հայերին զիջեցին իրենց գրաված ծովափնյա շրջանները: Դաշտային Կիլիկիայի համար հայերի մղած պայքարը պսակվեց հաջողությամբ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրեք Ռուբինյան իշխանության կազմավորման ընթացքը և արդյունքները: Ովքե՞ր էին նորաստեղծ իշխանության առաջին տիրակալները:
2. Ի՞նչ կարևոր տեղաշարժեր կատարվեցին Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում XI դ. վերջին: Ինչպե՞ս ազդեցին այդ փոփոխությունները Ռուբինյան իշխանության ամրապնդման ընթացքի վրա:
3. Բնութագրեք Ռուբինյան իշխաններ Թորոս I-ի, Լևոն I-ի և Թորոս II-ի քաղաքականությունը Դաշտային Կիլիկիայի համար պայքարում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ձեր կարծիքով՝ ճի՞շտ էր արդյոք Սլեհի արտաքին քաղաքականությունը: Գնահատեք այդ քաղաքականությունը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• Ռուբեն I • Ռուբինյան իշխանություն • Իկոնիայի սուլթանություն • Կոստանդին I • Վահկա բերդ • Հռոմի պապ • խաչակրաց առաջին արշավանք • Անտիոքի դքսություն • Եդեսիայի կոմսություն • Թորոս I • Լևոն I • Թորոս II • Սլեհ

3. ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ: ԼԵՎՈՆ ՄԵԾԱԳՈՐԾ

Կիլիկյան Հայաստանի հզորացումը: XII դարի վերջում Բյուզանդական կայսրությունը Կիլիկյան Հայաստանի համար այլևս վտանգ չէր ներկայացնում: Խաչակիրների իշխանություններն էլ միայն դեպքից դեպք էին միասնաբար հանդես գալիս Կիլիկյան Հայաստանի դեմ: Բացի դրանից՝ խաչակրաց պետություններն աստիճանաբար կորցնում էին նախկին հզորությունը: Եգիպտոսի սուլթան Սալահ ադ Դինը 1187թ. պարտության մատնեց խաչակիրներին և գրավեց Երուսաղեմը: Խաչակիրներին հաջողվեց պահպանել միայն ծովափնյա մի շարք ամրոցներ: Այսպիսով՝ Կիլիկյան Հայաստանը դառնում էր Միջերկրական ծովի արևելյան ափի ամենաուժեղ քրիստոնեական պետությունը: Այդ նույն ժամանակ Կիլիկյան Հայաստանի հյուսիսային հարևան Իկոնիայի սուլթանությունը թուլացել էր և մասնատվել: Առաջացել էր Կիլիկյան Հայաստանի համար համեմատաբար բարենպաստ միջազգային իրադրություն:

Այդ ժամանակաշրջանում էլ պետության ղեկավարությունը ստանձնեց ականավոր քաղաքական գործիչ ու զորավար ***Լևոն II***-ը (1187-1219թթ.): Նա նախ հետ մղեց օտարների ասպատակությունները, ապա հոգ տարավ սահմանների ամրապնդման մասին: Լևոն II-ը գրավեց սահմանային ամրոցները, որոնք երկիր ներխուժելու բանալի էին: Դրանք ամրացվեցին և վերաշինվեցին: Ուժեղացվում էր ռազմավարական նշանակություն ունեցող լեռնանցքների ու կիրճերի պահպանությունը:

Լևոն II Մեծագործ

Երկրի անվտանգությունն ապահովելուց հետո Լևոն II-ը ձեռնամուխ եղավ երկու կարևոր քաղաքական խնդիրների լուծմանը: Առաջինը, Անտիոքի դքսությունը Կիլիկիային միացնելով, միասնական և հզոր քրիստոնեական պետություն ստեղծելն էր: Անտիոքի դուքսը Լևոնի վաղեմի հակառակորդն էր և բազմիցս սպառնացել էր Կիլիկիայի անվտանգությանը: Խաչակիրները նույնիսկ Լևոն II-ի դեմ էին գրգռել Եգիպտոսի սուլթանին: Հայոց երկիրն ավերածություններից զերծ էր մնացել միայն սուլթանի մահվան շնորհիվ: Այժմ հասել էր հատուցման ժամանակը: Լևոնը

որոշեց կանխել Անտիոքի դքսին, որը մտադրվել էր խաբեությամբ ձերբակալել իրեն: Հայերը սահմանամերձ մի վայրում հանկարծակիի բերեցին Անտիոքի տիրոջը և, ձերբակալելով, բերեցին Սիս: 1194թ. դուքսը հարկադրված էր հաշտություն կնքել և վերադարձնել Կիլիկիայից խլած շրջանները: Հետագայում Լևոն II-ը ձգտում էր նախադրյալներ ստեղծել Անտիոքի դքսությունը Հայոց պետությանը միացնելու համար:

Քաղաքական երկրորդ խնդիրը Կիլիկյան Հայաստանը թագավորություն հռչակելն էր, որի լուծմանը Լևոն II-ը ձեռնամուխ եղավ իր կառավարման առաջին տարիներից: Ի պատասխան Երուսաղեմի գրավման՝ արևմտաեվրոպական երկրները կազմակերպեցին խաչակրաց երրորդ արշավանքը: Արշավանքի ղեկավարներից Հռոմեական սրբազան կայսրության (Գերմանիայի) տիրակալ Ֆրիդրիխ Շիկամորուսը դեպի Երուսաղեմ էր շարժվում ցամաքային ճանապարհով: Անցնելով Փոքր Ասիայով՝ նա 1190թ. մոտեցավ Կիլիկիայի սահմաններին: Գերմանական զորքերը ծանր վիճակում էին, և Ֆրիդրիխ Շիկամորուսը օգնության խնդրանքով դիմեց Լևոն II-ին: Խաչակիրներին պարենով և անասնակերով օգնություն ցույց տրվեց, և գերմանական կայսրը խոստացավ թագադրել Լևոն II-ին: Սակայն շուտով Ֆրիդրիխը Սելևկիա գետն անցնելիս խեղդվեց, և Լևոն II-ի թագավոր հռչակվելը հետաձգվեց:

Գահի բարձրանալուց մեկ տասնամյակ անց Լևոն II-ը տպավորիչ հաջողությունների էր հասել: Նրա անունը տարածվել էր Կիլիկիայի սահմաններից շատ հեռու և հպարտություն էր առաջացնում բոլոր հայերի սրտերում: «Նա պատերազմեց շրջակա ազգերի դեմ և քաջաբար հաղթեց, ըստ իր անունի՝ առյուծաբար, որովհետև Լևոն առյուծ է նշանակում»,– գրում է պատմիչ Կիրակոս Գանձակեցին: Բարգավաճում էր տնտեսությունը, բարձրացել էր Հայոց պետության միջազգային հեղինակությունը, ընդլայնվել էին երկրի սահմանները: Հասունացել էր Կիլիկյան Հայաստանը թագավորություն հռչակելու հարցը:

Թագավորության հռչակումը: Նախ՝ պատվիրակություն ուղարկվեց Կ. Պոլիս, որը բանակցություններ վարեց Լևոն II-ին թագ շնորհելու պայմանների վերաբերյալ: Բանակցությունները ձախողվեցին, քանի որ բյուզանդական եկեղեցականներն առաջ քաշեցին դավանական միության հարցը: Այնուհետև Լևոն II-ը, Հռոմի պապի միջնորդությամբ, բանակցություններ սկսեց Ֆրիդրիխ Շիկամորուսի որդու հետ: Սակայն Հռոմի պապը նախապես պնդեց՝ բավարարել կաթոլիկ եկեղեցու դավանական պահանջները: Հայոց եպիսկոպոսների ժողովը մերժեց ընդունել առաջադրված նախապայմանները: Լևոն II-ը հայ հոգևորականությանը հավաստիացրեց, թե դավանաբանական պահանջների բավարարումն առերևույթ է լինելու, և Հայոց եկեղեցին կախ-

վածության մեջ չի լինելու կաթոլիկ եկեղեցուց: Հայ հոգևորականները համաձայնեցին այդ պայմանին: Այսպիսով՝ թագադրության հարցը լուծված էր: Թեև բյուզանդական եկեղեցու հավակնությունները վճռականորեն մերժվել էին, Լևոնին թագ ուղարկելու պատրաստակամություն հայտնեց նաև բյուզանդական կայսրը:

Լևոն II-ի թագադրման հանդիսությունները տեղի ունեցան ***1198թ. հունվարի 6-ին***՝ Սուրբ ծննդյան օրը, ***Տարսոն*** քաղաքում: Արարողություններին ներկա էին օտար պետությունների դեսպանություններ, հայ, հույն ու ասորի բարձրաստիճան հոգևորականներ, անվանի իշխաններ, զորականներ ու բազմահազար ժողովուրդ: Տոնախմբությունները մեկ շաբաթ շարունակ չէին դադարում: Ժամանակակիցները հանձինս Ռուբինյանների տեսնում էին Անիի Բագրատունիների օրինական հաջորդներին: Թագավորության հիմնադրումով Կիլիկիայում ստեղծված Հայոց պետությունը թևակոխեց զարգացման ավելի բարձր փուլ: Այն դարձավ Միջերկրական ծովի ամբողջ արևելյան ափի զորեղ երկրներից մեկը:

Այսպիսով՝ Լևոն II իշխանը դարձավ Կիլիկյան Հայաստանի առաջին արքան, որը հայոց պատմության մեջ հայտնի է նաև ***Լևոն Մեծագործ*** անունով:



Լևոն Մեծագործի ստորագրությունը

Ձեռնարկումներ ներքին կյանքում: Թագավոր օծվելուց հետո Լևոն Մեծագործը մի շարք քայլեր կատարեց երկրի ներքին կայունությունը պահպանելու, կառավարումը կատարելագործելու և տնտեսական ու մշակութային առաջընթացն ապահովելու ուղղությամբ:

Լևոն II-ի ձեռնարկումներից առաջինը Լամբրոն բերդը գրավելն ու նրա տերերին հնազանդեցնելն էր: Այդ ամրոցի տեր Հեթումյանները նախկինում հակադրվում էին Ռուբինյաններին ու համագործակցում էին բյուզանդացիների հետ: Հասել էր Լամբրոնի իշխանությունը Հայոց թագավորությանը միացնելու ժամանակը: Լամբրոնը գրավելը գործնականում անհնարին էր, ուստի թագավորը դիմեց խորամանկության:

Լամբրոն

Լևոնը Լամբրոնի տեր Հեթում իշխանին հրավիրեց Տարսոն՝ նրա որդու հետ իր եղբոր դստերն ամուսնացնելու պատրվակով: Հեթումին Տարսոնում բանտարկելուց հետո թագավորական զորքերը հեշտությամբ տիրացան Լամբրոնին:

Լևոն Մեծագործի սուրը

Լևոն արքայի օրոք կատարելագործվեց երկրի կառավարումը: Կենտրոնական դերը պատկանում էր արքունիքին, որի կազմում ստեղծվեցին զանազան գործակալություններ: Կարգի բերվեցին դատարանները, որոնք Կիլիկյան Հայաստանի պայմաններում բազմազան բնույթի հարցեր էին քննարկում:

Լևոն Մեծագործը ձգտում էր ապահովել ծովային և ցամաքային առևտրի անվտանգությունը: Բարեկարգվեցին երկրի ճանապարհներն ու նավահանգիստները: Առևտրական պայմանագրեր կնքվեցին իտալական հռչակավոր վաճառաշահ քաղաքների՝ Վենետիկի և Ջենովայի հետ: Հայոց պետությունը ստեղծեց առևտրական նավատորմ և սկսեց ավելի գործուն մասնակցել միջազգային առևտրին: Լևոնի կողմից հատված ոսկյա և արծաթյա դրամները գործածության մեջ մտան շատ երկրներում:

Արտաքին քաղաքականությունը: Երկրի հզորացումը Լևոն Մեծագործին թույլ տվեց շարունակել Անտիոքի դքսությունն իր թագավորությանը միացնելու քաղաքականությունը: Պատերազմական գործողությունները սկիզբ առան 1201թ., և երկու տարի անց հայկական զորքերը գրավեցին Անտիոքի մերձակայքը: Արքան փորձեց խաղաղ ճանապարհով տիրանալ քաղաքին, բայց համառ դիմադրության հանդիպեց և շուտով դադարեցրեց պաշարումը:

Լևոն Մեծագործը հաջորդ տարիների ընթացքում ևս չհրաժարվեց Անտիոքը Կիլիկյան Հայաստանին միացնելու իր ծրագրից: Օգտվելով Անտիոքում ծավալված ներքին պայքարից՝ Հայոց թագավորը 1216թ. գրավեց Անտիոքը: Նրա կողմնակից խաչակիր իշխանները գիշերով բաց արեցին քաղաքի դարպասները, և հայոց զորքերը մտան քաղաք: Հայոց արքան Անտիոքում գահ բարձրացրեց իր ազգական Ռուբեն-Ռայմոնդին, որին մինչ այդ հռչակել էր Կիլիկյան Հայաստանի թագաժառանգ:

Անտիոքում Ռուբեն-Ռայմոնդի կառավարումը շարունակվեց ընդամենը երեք տարի: Անխոհեմ գործողություններով նա իր դեմ հանեց նախկին կողմնակիցներին ու քաղաքի բնակչությանը: Բացի դրանից՝ նա թշնամացավ Լևոն Մեծագործի հետ և անգամ փորձեց դավադրություն կազմակերպել իր խնամակալի դեմ: Այս դեպքերից հետո Լևոնը վերջնականապես հիասթափվեց Ռուբեն-Ռայմոնդից: Նա վերանայեց իր նախկին որոշումը և թագաժառանգ հռչակեց մանկահասակ դստերը՝ Զաբելին: Անտիոքի դքսության համար պայքարը հսկայական ուժեր ու միջոցներ խլեց Կիլիկյան Հայաստանից և բացասական հետևանքներ ունեցավ: Քանի որ Հայոց թագավորությունը զբաղված էր Անտիոքի խնդրով, 1216թ. Կիլիկիա ներխուժեցին Իկոնիայի սելջուկները: Նրանք չկարողացան զգալի տարածքներ նվաճել, սակայն սելջուկների դեմ ճակատամարտում որոշ հայ իշխաններ գերի ընկան: Լևոն թագավորը կարողացավ փրկագնով ազատել նրանց:

«Արքան,– գրում է ժամանակակիցը,– բնավորությամբ բարի էր, աղքատների ու կարոտյալների հանդեպ ողորմած, եկեղեցու ու Աստծո սպասավորների նկատմամբ սիրալիր»: Ուստի թագավորի հատուկ հոգածությանն ու հովանավորությանն արժանացան վանքերն ու ուսումնական հաստատությունները: Նրա արքունիքում առանձնահատուկ հարգանք էին վայելում նշանավոր արվեստագետները, գիտնականներն ու գրողները: «Կիլիկեցվոց աշխարհը լցվեց իմաստությամբ»,– հպարտությամբ նշում էին ժամանակակիցները: Լևոն II Մեծագործ արքան մահացավ 1219թ. մայիսի 2-ին՝ հաջորդներին թողնելով քաղաքական ու տնտեսական վերելքի ուղին բռնած հզոր թագավորություն:

ԼԵՎՈՆ ԱՐՔԱՅԻ ԹԱԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ

«Ապա զորապետների ու զորքերի, ազգերի ու ցեղերի մեծ բազմություն հավաքվեց. եկան Տարսոնում նստող հունաց պատրիարքը, Մելիտինեի սահմաններում գտնվող Սուրբ Պարսումայի վանքում նստող ասորիների կաթողիկոսն ու Հայոց կաթողիկոսը բոլոր եպիսկոպոսներով: Եվ թագավորեցրին Լևոնին, իսկ շրջակա ազգերը ընծաներ բերեցին թագադրված նորոգ թագավորին»:

ԼԵՎՈՆ II-Ի ԵՐԴՈՒՄԸ ԹԱԳԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ՝ ԸՍՏ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ

«Ես՝ Լևոն, որ կամքն Աստծո լինելու եմ Հայոց թագավոր, խոստանում եմ, ուխտում և երդվում Աստծո ու երանելի Սուրբ Գրիգոր Լուսավորչի առջև, որ այսուհետև լինելու եմ Հայոց Սուրբ եկեղեցու, նրա քահանայապետի և նրա համայն կղերականների պաշտպանն ու կենարարը:

(Երդվում եմ) գիտելիքներիս ու կարողությանս սահմաններում, Աստծո օգնությամբ, որքան կարող եմ, պահպանել ու խնամել հայրենի երկիրս»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպիսին էր քաղաքական իրադրությունը Մերձավոր Արևելքում Լևոն II-ի գահ բարձրանալու նախօրյակին:
2. Երբ հռչակվեց Կիլիկիայի հայոց թագավորությունը: Բնութագրեք այդ իրադարձության պատմական նշանակությունը:
3. Ինչ քաղաքականություն էր վարում Լևոն Մեծագործը երկրի քաղաքական, ռազմական ու տնտեսական հզորությունը ամրապնդելու նպատակով:
4. Ինչպես է նկարագրում Լևոն արքայի թագադրությունը պատմիչ Կիրակոս Գանձակեցին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• **Լևոն II Մեծագործ՝ Կիլիկյան Հայաստանի առաջին արքա • Սալահ ադ Դին՝ Եգիպտոսի սուլթան • Ֆրիդրիխ Շիկամորուս՝ Գերմանիայի տիրակալ • Հեթումյաններ • Լամբրոն բերդ • Ռուբեն-Ռայմոնդ • արքայադուստր Զաբել**

4. ՀԵԹՈՒՄՅԱՆ ԱՐՔԱՅԱՏՈՀՄԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ: ՀԵԹՈՒՄ I: ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՅՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ

Գահակալության խնդիրը Լևոն II-ի մահից հետո: Լևոն II-ի մահից հետո, քանի դեռ Զաբելը մանկահասակ էր, երկիրը կառավարում էին արքայի նշանակած խնամակալները: Աշխուժացան գահի զանազան հավակնորդներ, որոնք նույնիսկ ռազմական գործողությունների դիմեցին՝ գահին տիրանալու համար: Գահակալության հարցը շուտափույթ լուծում էր պահանջում:

Զաբել Ռուբինյան թագուհին (նկ. Վ. Սուրենյանցի)

1222թ. Զաբելի խնամակալ Կոստանդին Գունդստաբլը (սպարապետ) հայ իշխանների ու ազդեցիկ հոգևորականության ժողով գումարեց և դրեց թագուհու ամուսնության հարցը: Ժողովը որոշեց Զաբելին ամուսնացնել Անտիոքի դքսի որդու՝ Ֆիլիպի հետ և այդպիսով միավորել երկու պետությունները: Ֆիլիպը պարտավորվեց հարգել հայ իշխանների իրավունքները, հայոց

հավատն ու սովորությունները: Բայց Կիլիկիա ժամանելուց անմիջապես հետո Ֆիլիպը դրժեց իր խոստումները: Նա արքունիքից հեռացրեց հայ պաշտոնյաներից շատերին, պալատ հրավիրեց խաչակիր ասպետների ու կաթոլիկ հոգևորականների, սկսեց կողոպտել պալատական ունեցվածքը: Հայ ավագանին բանտարկեց ու գահազրկեց երդմնազանց Ֆիլիպին:

Կոստանդին Գունդստաբլն անսահմանափակ իշխանություն ձեռք բերեց: 1226թ. նա նոր խորհրդաժողով գումարեց և, եկեղեցականների ու իշխանների համաձայնությամբ, Զաբելին ամուսնացրեց իր որդի Հեթումի հետ: Գահակալության հարցը վերջնականորեն լուծվեց: Խաչակիր ասպետները և կաթոլիկ հոգևորականությունը, որոնք ձգտում էին ընդլայնել իրենց ազդեցությունը երկրում, պարտություն կրեցին:

Հեթում I-ի ներքին ու արտաքին քաղաքականությունը: *Հեթում I*-ի (1226-1270թթ.) գահակալությամբ սկսվեց պետության ամրապնդման նոր փուլ: Կոստանդին Գունդստաբլը պահպանեց փաստացի իշխանությունը, քանի որ մանկահասակ թագավորը դեռևս ի վիճակի չէր կառավարելու երկիրը: Կոստանդինը հռչակվեց թագավորահայր և ավագ պարոն: Հեթումի եղբայրներից Սմբատը նշանակվեց սպարապետ, բարձր պաշտոններ ստացան նաև մյուս եղբայրները: Ներքին խաղաղությունը և կայունությունը պահպանելու համար ըմբոստ իշխաններին տիրույթներ շնորհվեցին, և նրանք կապվեցին արքունիքի հետ: Երկրում տևական խաղաղություն հաստատվեց: Այդ շրջանում Կիլիկյան Հայաստանը զերծ մնաց նաև թշնամիների ներխուժումներից: Երկրի արտաքին քաղաքական դրությունը կայունացնելու նպատակով 1226թ. նոր հաշտություն կնքվեց Իկոնիայի սելջուկյան սուլթանության հետ: Այսպիսով՝ երկիրը հաղթահարեց ներքին ճգնաժամը, կանխվեց օտարերկրացիների դիրքերի ամրապնդումը Հայոց թագավորությունում: Կիլիկյան Հայաստանը կայուն ու խաղաղ զարգացման հնարավորություն ձեռք բերեց: Ստեղծվեցին տնտեսական ու մշակութային վերելքի նպաստավոր պայմաններ:

Մոնղոլները և Կիլիկյան Հայաստանը: Մոնղոլական արշավանքները ծանր խնդրի առջև դրեցին Կիլիկիայի հայերին: Անհրաժեշտ էր ճշտորեն կողմնորոշվել միջազգային բարդ իրադրության մեջ և խուսափել մոնղոլների ներխուժումից: Այդ պատճառով էլ Կիլիկյան Հայաստանը չընդառաջեց մոնղոլների դեմ պատերազմող Իկոնիայի սուլթանության օգնության խնդրանքին:

Շուտով Հայոց թագավորության և մոնղոլների միջև բարեկամական հարաբերություններ հաստատվեցին: Մոնղոլական զորքերը չմտան Կիլիկիա, և Հայոց թագավորությունը ազատվեց այդ ծանր փորձությունից: Որոշ ժամանակ անց մոնղոլների մայրաքաղաք Կարակորում ուղևորվեց Հեթում I-ի

եղբայր Սմբատ Գունդստաբլը: Նա այստեղ պայմանավորվեց, որ դաշինք կնքելու համար անձամբ Մոնղոլիա կժամանի Հայոց թագավորը: Հայերի հետ դաշնակցելու անհրաժեշտությունը գիտակցում էին նաև մոնղոլները: Նրանք ձգտում էին գրավել Կիլիկիայից հարավ ընկած Ասորիքը, հետագայում՝ նաև Եգիպտոսը, ուստի զգում էին հայերի աջակցության կարիքը:

Հեթումյան դրամներ

Որոշ հապաղումից հետո Հեթում I-ը ձեռնարկեց իր դժվարին ճանապարհորդությունը: Հայոց արքան մեկնեց Կարակորում, որտեղ Մանգու մեծ խանը մեծարանքով ընդունեց նրան և հարկերից ազատեց հայկական բոլոր եկեղեցիները: 1254թ. Հեթում թագավորի և Մանգու խանի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ Կիլիկյան Հայաստանը և մոնղոլները օգնելու էին միմյանց պատերազմների ժամանակ: Կիլիկյան Հայաստանը պահպանելու էր իր ինքնուրույնությունը: Հայ վաճառականներն իրավունք էին ստանում առևտուր կատարելու մոնղոլական վիթխարի պետության սահմաններում:

Զաբելի և Հեթում I-ի դրամ

Հայ-մոնղոլական պայմանագիրը ձեռնտու էր Կիլիկյան Հայաստանին: Զնականորեն հպատակվելով մոնղոլներին՝ երկիրը չէր կորցնում անկախությունը և ռազմական դաշնակից էր ձեռք բերում:

Հայ-մոնղոլական համագործակցությունը սկզբնական շրջանում բավականին արդյունավետ էր: Երբ մոնղոլները ձեռնարկեցին Ասորիքի նվաճումը, նրանց միացան նաև Հեթում I-ի զորքերը: Հայ-մոնղոլական բանակը սկզբում զգալի հաջողությունների հասավ, բայց շուտով մոնղոլները ջախջախվեցին, և նրանց առաջխաղացումը կանգ առավ:

Հայ-մամլուքյան հակամարտությունը: XIII դ. կեսերից Կիլիկյան Հայաստանի գլխավոր ախոյան դարձավ Եգիպտոսի սուլթանությունը: Այդ պետությունում իշխանությունը պատկանում էր մամլուքներին՝ մանուկ հասակում մահմեդականացված և ռազմական գործի մեջ հմտացած ստրուկներին: Մամլուքները սկզբից ևեթ թշնամական դիրք բռնեցին մոնղոլների և նրանց դաշնակից Կիլիկյան

Հայաստանի նկատմամբ: Նրանք մշտապես սպառնում էին Հայոց թագավորության գոյությանը:

Մամլուքները սպանում են արքայազն Թորոսին և գերի վերցնում թագաժառանգ Լևոնին:

1266թ. մամլուքները ներխուժեցին Կիլիկիա: Թվաքանակով երկու անգամ մեծ թշնամական բանակի դեմ ճակատամարտում հայերը ծանր պարտություն կրեցին: Թագավորի որդիներից Թորոսը զոհվեց, իսկ Լևոնը գերի ընկավ: Եգիպտական զորքերը մտան երկրի խորքեր, ավերեցին Սիսը և մյուս խոշոր քաղաքները: Երկու տարի հետո հայերին հաջողվեց թշնամուն վտարել երկրից և հաշտություն կնքել սուլթանի հետ: Հեթումը մամլուքներին զիջեց սահմանամերձ մի շարք ամրոցներ, իսկ նրանք ազատ արձակեցին արքայազն Լևոնին:

Հաջորդ տարիներին մամլուքների հարձակումները շարունակվեցին: Հեթում I-ի որդի ***Լևոն III*** թագավորը (1270-1289թթ.) համոզվեց, որ հայերն ի վիճակի չեն պաշտպանվելու մամլուքների հարձակումներից, և նոր հաշտություն կնքեց նրանց հետ: Այդ հաշտության պայմանները ծանր էին, բայց երկիրը կարճատև դադար ու տնտեսությունը զարգացնելու հնարավորություն ձեռք բերեց:

Հռոմկլա

Հետագայում Կիլիկյան Հայաստանի վիճակն ավելի ծանրացավ: Եգիպտոսի սուլթանությունն օրեցօր հզորանում էր, մինչդեռ մոնղոլական պետությունը ճգնաժամ էր ապրում: Ակնհայտ էր դառնում, որ հայ-մոնղոլական դաշինքը սպառել է իրեն, բայց հայերը ստիպված էին հավատարիմ մնալ 1254թ. պայմանագրին: Նման պայմաններում հայերը հույս ունենին Հռոմի պապի, արևմտաեվրոպական երկրների ու մոնղոլների ուժերով միասնական ճակատ ստեղծել Եգիպտոսի սուլթանության դեմ: Սակայն այդ հույսերը չարդարացան, ու քայլ առ քայլ երկիրը կործանման եզրին հասավ:

Սկսվեց եգիպտական արշավանքների նոր ալիք: Մամլուքները գրավեցին կաթողիկոսական նստավայր Հռոմկլա բերդաքաղաքը և գերի տարան Հայոց կաթողիկոսին: Հաջորդ կաթողիկոսները հարկադրված էին աթոռակալել Սիս մայրաքաղաքում: Դրությունը չփոխվեց նաև հաջորդ տարիներին: Եգիպտոսի սուլթանության դեմ պայքարում Հայոց թագավորությունը ստիպված էր ապավինել սեփական ուժերին: Նրան չէին օգնում ո՛չ Արևմուտքն ու Հռոմի պապը, ո՛չ էլ մոնղոլական պետությունը:

Լևոն III արքայի կինը՝ Կեռան թագուհին

Ներքին ճգնաժամի խորացումը: XIV դ. սկզբներին Կիլիկյան Հայաստանի դրությունն ավելի ծանրացավ: Երկրի ներսում պայքար բորբոքվեց տարբեր խմբավորումների միջև: Վիճակն ավելի բարդացավ, երբ Հեթում II թագավորը և իր համախոհները որոշեցին կապեր հաստատել Հռոմի պապի ու եվրոպական երկրների հետ: Հռոմի պապը Կիլիկյան Հայաստանին ռազմական օգնություն ցույց տալու դիմաց հայերից պահանջում էր ընդունել կաթոլիկ եկեղեցու դավանանքը:

Սիս և Ադանա քաղաքներում հատուկ եկեղեցական ժողովներ գումարվեցին, որոնք քննարկեցին Հայ առաքելական և կաթոլիկ եկեղեցիների միության խնդիրները: Ժողովների մասնակից հոգևորականները արքունիքի ճնշման ներքո հարկադրված հավանություն տվեցին երկու եկեղեցիների միությանը: Իրականում, սակայն, Հայոց եկեղեցին պետք է միացվեր կաթոլիկ եկեղեցուն և ենթարկվեր Հռոմի պապին: Բնակչության մեծ մասը զայրույթով ընդունեց ժողովների որոշումները: Այսուհանդերձ՝ թագավորն ու կաթողիկոսը ձգտում էին դրանք պարտադրել ժողովրդին: Շուտով բողոքի ցույցերը վերածվեցին զինված ընդհարումների: Պայքարը եկեղեցիների միության կողմնակիցների՝ ունիթորների և հակառակորդների՝ հակաունիթորների միջև համընդհանուր տարածում գտավ:

Հետագա տարիներին Հայոց արքունիքը արտաքին օգնության խնդրանքով բազմիցս դիմեց արևմտյան պետություններին ու Հռոմի պապին, բայց այդ դիմումները միշտ էլ մնացին անհետևանք: Եվրոպական երկրներն ի վիճակի չէին նոր խաչակրաց արշավանք կազմակերպելու և թեթևացնելու Կիլիկյան Հայաստանի ծանր դրությունը: Ստեղծված պայմաններում արևմտաեվրոպական պետությունները և Հռոմի պապը փաստորեն կեղծ խոստումներ էին տալիս հայերին: Փոխարենը նրանք համառորեն պահանջում էին, որ հայերը կաթոլիկություն ընդունեն և այդպիսով ավելի էին բորբոքում ունիթորների ու

հակառնիթորների միջև ծավալված բախումները: Հայերի ներքին միասնությունը խարխլվել էր, պետությունը մեծ դժվարությամբ էր կարողանում հետ մղել թշնամիների հարձակումները:

Կիլիկյան Հայաստանի թուլացումը: Եվրոպական երկրներ դեսպանություններ ուղարկելը և եկեղեցական միության շուրջը բանակցություններ վարելը թշնամանքի ալիք առաջ բերեցին Եգիպտոսում ու հարևան մահմեդական պետություններում: Նրանք հայերին սկսեցին մեղադրել նոր խաչակրաց արշավանք նախապատրաստելու մեջ և վճռական գործողությունների դիմեցին: Սամլուքները և նրանց դաշնակիցները բազմիցս ասպատակեցին ու ավերեցին Կիլիկյան Հայաստանը:

Թագավորը և իշխանները, թշնամուն դիմագրավելու փոխարեն, փակվեցին իրենց ամրոցներում: Կրոնական վեճերից ու ներքին երկպառակություններից ուժասպառ երկիրը կորցրել էր դիմադրելու կարողությունը: 1322թ. թշնամին անարգել հասավ Այաս, գրավեց ու ավերեց քաղաք-նավահանգստի երկու՝ ցամաքային ու ծովային բերդերը: Հայոց զորքն ուշքի եկավ միայն այն ժամանակ, երբ ավարով ծանրաբեռնված մամլուքները հեռանում էին Կիլիկիայից: Հայերի փոքրաթիվ ջոկատներին մի քանի անգամ հաջողվեց հանկարծակիի բերել ախոյանին և կոտորել մամլուքներից շատերին:

Եգիպտոս մեկնած հայկական պատվիրակությունը հաշտություն կնքեց Կիլիկյան Հայաստանի համար բավականաչափ ծանր պայմաններով: Ահռելի գումարից բացի՝ հայերը պարտավորվեցին ամեն տարի մամլուքներին վճարել Այաս նավահանգստից ստացված եկամուտների կեսը:

Այասի ծովային բերդը

Այս իրադարձություններից հետո էլ արքունիքն ու ունիթորները հաշվի չառան անցյալի դասերը: Արքունիքում մեծ ազդեցություն ձեռք բերեցին այն ուժերը, որոնք մեծածավալ առևտուր էին անում արևմտյան պետությունների հետ և շահագրգռված էին ամրապնդելու այդ կապերը: Իր հերթին՝ Կիլիկյան Հայաստանի նկատմամբ ավելի անզիջում դիրք բռնեց Եգիպտոսը:

Թագավորության անկումը: Արքունիքում երկպառակություններն աստիճանաբար ավելի խորացան: Հեթումյան տոհմի վերջին թագավորի մահից հետո արևմտյան կողմնորոշում ունեցող իշխանները 1343թ. գահը հանձնեցին ֆրանսիական *Լուսինյան տոհմին*, որը մայրական գծով ազգական էր Հեթումյաններին: Լուսինյանների կառավարման ընթացքում ավելի սերտ դար-

ձան արևմտյան երկրների հետ հարաբերությունները, ուժեղացան հակառնի-թորների հալածանքները: Երկիրը կործանումից փրկելու համար Լուսինյան-ների հակառակորդները կազմակերպեցին թագավորի սպանությունը:

Գահն անցավ Հեթումյանների հայ ազգականներին, որոնք զգալի ջանքեր թափեցին՝ կանխելու աղետը: Եվրոպայից օգնություն ստանալու հույսերի խորտակումից հետո հայերը եկեղեցական ժողով գումարեցին և չեղյալ հայտարարեցին եկեղեցիների միության վերաբերյալ նախորդ ժողովների որոշումները: Սակայն սահմանային բերդերը վերադարձնելու փորձերը ձախողվեցին, և Կիլիկյան Հայաստանը կրկին հայտնվեց ծանր վիճակում:

Դրությունն անելանելի դարձավ, երբ Հայոց թագավորության դեմ միաժամանակ հարձակման անցան Եգիպտոսի մամլուքները և նրանց դաշնակիցները: Սահացու օղակը սեղմվում էր, և միայն մայրաքաղաք Սիսի պաշտպանների անձնուրացությունն էր երկարաձգում թագավորության վախճանը: Սիսի մատույցներում հերոսաբար զոհվեց ***Լիպարիտ սպարապետը***:



1375թ. ապրիլին, երբ վիրավորվել էր Կիլիկյան Հայաստանի վերջին արքան՝ ***Լևոն VI Լուսինյանը***, թշնամու կողմն էին անցել ֆրանսիացի վարձկանները և սպառվել էին ռազմական պաշարները, մայրաքաղաքի միջնաբերդի պաշտպաններն անձնատուր եղան:

Սիսի անկումից հետո Լեռնային Կիլիկիայի առանձին հայ իշխաններ պահպանեցին իրենց բերդերը, բայց այդ վիճակը երկար շարունակվել չէր կարող: Կիլիկիայի բնակչության մի մասը հեռացավ օտար երկրներ, իսկ մեծ մասը շարունակեց ապրել հայրենիք դարձած այդ երկրամասում: Կիլիկյան Հայաստանի շուրջ երեքդարյա պատմությունը հայոց ազգային ոգու փայլուն դրսևորումներից է: Գտնվելով տարբեր քաղաքակրթությունների խաչաձևման շրջանում՝ Հայոց պետությունը կարևոր դեր խաղաց Արևմուտքի և Արևելքի միջև կապերի սերտացման գործում: Կիլիկիայի հայոց թագավորության վերացումով փակվեց միջնադարում հայոց պետականության վերջին նշանավոր էջը:

Լևոն VI արքայի գերեզմանը Փարիզի Սեն Դենի արքայական դամբարանում

ՀԵԹՈՒՄ Ի-Ի ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՆՂՈԼԻԱ՝ ԸՍՏ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ

«Երբ Մանգու խանը թագավորեց, մեծ թագավորահայր և զորավար Բաթուն, որն անթիվ բազմությամբ բանակել էր հյուսիսի կողմերում՝ Աթլ (Վոլգա) կոչվող մեծ ու անհուն գետի ափը, որ թափվում է Կասպից ծով, պատվիրակ ուղարկեց Հեթում թագավորի մոտ, որ գա իրեն ու Մանգու խանին տեսնելու: (Հեթումը) հասավ Բաթուի ու նրա որդի Սարթախի մոտ, որը հավատով քրիստոնյա էր, և նրանցից մեծարվեց բարձր պատվասիրությամբ: Ապա նրան ուղարկեցին Մանգու խանի մոտ երկարաձիգ ճանապարհով՝ Կասպից ծովի այն կողմը»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպես տեղի ունեցավ Հեթումյանների արքայատոհմի հաստատումը:
2. Ինչպես եք գնահատում 1254թ. հայ-մոնղոլական դաշինքի կնքումը: Նշեք այդ դաշինքի դրական ու բացասական կողմերը Կիլիկյան Հայաստանի տեսանկյունից:
3. Ինչպես ընթացավ Կիլիկիայի թագավորության և Եգիպտոսի մամլուքյան սուլթանության պայքարը:
4. Ինչո՞վ էր պայմանավորված Կիլիկյան Հայաստանի թուլացումը:
5. Ինչ նպատակներ էին հետապնդում կաթոլիկ եկեղեցին և արևմտաեվրոպական ասպետները Կիլիկիայում:
6. Ովքե՞ր էին ունիթորները և հակաունիթորները, ինչ հետևանքներ ունեցավ նրանց միջև ծավալված պայքարը:
7. Ե՞րբ կործանվեց Կիլիկիայի հայոց թագավորությունը, որո՞նք էին պետության կործանման պատճառները:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• Հեթում I արքա • Կոստանդին Գունդստաբլ (սպարապետ) • Սմբատ Գունդստաբլ • Մանգու մեծ խան • Կարակորում • Լևոն III արքա • Կեռան թագուհի • Հայ-մոնղոլական դաշինք (1254թ.) • ունիթորներ և հակաունիթորներ • Լուսինյաններ • Լիպարիտ սպարապետ • Լևոն VI Լուսինյան՝ Կիլիկյան Հայաստանի վերջին արքա

5. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ: ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Կիլիկյան Հայաստանի նավ

Գյուղատնտեսությունը: Երկրում բարձր զարգացման էր հասել գյուղատնտեսությունը: Հարթավայրերում զբաղվում էին հացահատիկի մշակությամբ, բանջարաբուծությամբ և խաղողագործությամբ: Դաշտային Կիլիկիայի տաք ու մեղմ կլիման թույլ էր տալիս զբաղվել նաև նարնջի, կիտրոնի և այլ մերձարևադարձային մրգերի մշակմամբ:

Լեռնային շրջաններում տնտեսության գերիշխող ճյուղը անասնապահությունն էր: Հատկապես մեծ եկամուտ էր բերում նուրբ բուրդ ունեցող ոչխարների բուծումը: Հռչակված էին Կիլիկիայում բուծված ձիերը, որոնք հաջողությամբ վաճառվում էին երկրի սահմաններից դուրս:

Հողը պատկանում էր աշխարհիկ և հոգևոր ավատատերերին: Խոշոր հողատերեր էին բերդատեր պարոնները, որոնց կալվածքները ժառանգաբար անցնում էին հորից որդուն (հայրենիք): Տարածված էր նաև պարգևականք կոչվող հողատիրությունը, որը տրվում էր ցմահ կամ ծառայության ժամանակաշրջանի ընթացքում:

Քաղաքները և քաղաքային կյանքը: Կիլիկիայում հնուց ի վեր գոյություն ունեին հարուստ ու զարգացած քաղաքներ: Համբավավոր քաղաքներ էին Սիսը, Տարսոնը, Ադանան, Մամեստիան: Այդ քաղաքներում արհեստագործության և առևտրի վերելքն արագացավ հայ բնակչության ստվարացումից հետո: Հայ արհեստավորները զբաղվում էին գորգերի ու տարբեր գործվածքների արտադրությամբ, գինագործությամբ, ոսկերչությամբ, կավագործությամբ և բազմաթիվ այլ արհեստներով:

Քաղաքային բնակչությունը բազմազան կազմ ուներ: Քաղաքներում ապրում էին հիմնականում արհեստավորներն ու առևտրականները, սակայն զգալի էր նաև օրավարձով աշխատողների ու չքավորների, ընչազուրկների թիվը: Քաղաքներում էր ձգտում բնակություն հաստատել նաև ավատատերերից կախվածության մեջ ընկած գյուղացիության մի մասը: Գյուղացիները հիմնականում անձնապես ազատ էին, բայց պարտավոր էին հարկեր վճարել պետությանը և հողատերերին:

Ծովային ու ցամաքային ճանապարհներով հայ վաճառականները սերտ առևտրական կապեր էին հաստատել Արևելքի ու Արևմուտքի երկրների հետ: Կտրելով Փոքր Ասիան՝ նրանք հասնում էին մինչև Սև ծովի նավահանգիստներ ու առևտուր անում Ղրիմի քաղաքների հետ: Ցամաքային ուղիները Կիլիկիան կապում էին Կասպից ծովի ափի, իսկ Դերբենդի միջոցով՝ նաև հյուսիսային երկրների հետ:

Առևտրի ծավալման մեջ մեծ դեր էին խաղում Այաս ու Կոռիկոս նավահանգիստները, որտեղ խարիսխ էին գցում Իտալիայից, Հարավային Ֆրանսիայից ու Իսպանիայից եկած նավերը:

Առևտրական եռուզեռ Այասում

Ներքին առևտուրն աշխուժացնելու նպատակով Ռուբինյանները հատում էին պղնձե դրամներ: Կիլիկյան Հայաստանում թողարկում էին նաև արծաթյա և ոսկյա դրամներ՝ հայերեն մակագրություններով: Ներքին և արտաքին առևտրում առավել տարածված էին արծաթյա դրամները: Դրամահատության կենտրոններն էին Սիս և Տարսոն քաղաքները: Միջազգային առևտուրը զգալի եկամուտ էր բերում Հայոց թագավորությանը և նպաստում երկրի տնտեսական վերելքին:

Պետական կառավարման համակարգը: Կիլիկյան Հայաստանն ավատատիրական միապետություն էր: Պետությունը գլխավորում էր թագավորը, որը մեծ իրավունքներ ուներ: Նա էր պատերազմ հայտարարում և հաշտություն կնքում, տնօրինում երկրի ներքին կյանքի գլխավոր հարցերը: Միայն նրան էր վերապահված դրամ հատելու, քաղաքներ ու ամրոցներ հիմնադրելու, պայմանագրեր կնքելու իրավունքը:

Թագավորության հռչակումից ի վեր երկիրը կառավարվում էր արքունիքի միջոցով: Այն բաղկացած էր գործակալություններից և վերին արքունի ատյանից: Այդ ատյանի նիստերին մասնակցում էին խոշոր իշխանները՝ բերդատեր պարոնները, և քննարկում էին երկրի կյանքի վերաբերյալ կարևորագույն հարցերը: Վերին արքունի ատյանը, որի նիստերը վարում էր թագավորը, խորհրդատուի իրավասություն ուներ: Արքունի գործակալությունները նման էին Արշակունյաց ու Բագրատունյաց պետությունների գործակալություններին, թեպետ որոշ պաշտոններ փոխ էին առնված Բյուզանդիայից և խաչակրաց պետություններից:

Երկրի ազդեցիկ գործակալություններից էր ***պայլությունը***: Պայլն անչափահաս զահաժառանգի կամ թագավորի դաստիարակն էր ու խնամակալը: Պայլի դերը նկատելի էր դառնում զահի թափուր մնալու և թագավորի մանկահասակության դեպքերում:

Սպարապետությունը ռազմական գործերը տնօրինող գործակալությունն էր: Սպարապետին նաև գունդստաբլ էին անվանում:

Արքունական քարտուղարությունը վարում էր օտար պետությունների հետ բանակցությունները և գրագրությունը: Այս գործակալությունը գլխավորում էր ջանցլերը: Արքունական քարտուղարությունում աշխատում էին բազմաթիվ թարգմանիչներ ու դպիրներ:

Մեղանապետության խնդիրներն էին արքունական պալատի կառավարումը, եկամուտների ու ծախսերի տնօրինումը:

Մաքսապետությունը երկրի հարկային ու ֆինանսական գերատեսչությունն էր:

Բանակը: Պետության սահմանները պաշտպանելու համար Կիլիկյան Հայաստանում ստեղծված էր մշտական բանակ: Նրա միջուկը կազմում էր

հեծելազորը, որին պատերազմների ժամանակ միանում էր հետևազորը: Հեծյալ զորքի մեջ իրենց դերով ու դիրքով առանձնանում էին ***ձիավորի*** կոչում ունեցողները: Այդ կոչումը շնորհվում էր գլխավորապես ազնվականներին, որոնք պարտավոր էին ցուցադրել իրենց հմտությունը ձիավարժության, զենքի գործածության և ընդհանրապես ռազմական արվեստի մեջ: Ձիավորներն իրենց հանդերձանքով ու սպառազինությամբ հիշեցնում էին արևմտաեվրոպական ասպետներին:

Հայ ձիավոր ասպետ

Հայոց բանակի զենքերից էին սուրը, նետն ու աղեղը, նիզակը: Պաշտպանության համար օգտվում էին սաղավարտից ու վահանից:

Բանակի թիվը զգալիորեն աճում էր օրհասական պահերին, երբ զորքին էր միանում քաղաքների ու գյուղերի բնակչությունից հավաքված աշխարհազորը: Պատերազմի ժամանակ հայոց բանակի թիվն անցնում էր 60 հազարից:

ԻՏԱԼԱՑԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ ՄԱՐԿՈ ՊՈԼՈՆ՝ ԱՅԱՍ ՆԱՎԱՀԱՆԳՍՏԻ ՄԱՍԻՆ

«Նրանք (հայերը) ունեն մի քաղաք ծովի վրա, որը կոչվում է Լայաս (Այաս), որտեղ նրանք մեծ առևտուր են կատարում: Որովհետև դուք պետք է իմանաք, թե բոլոր համեմատությունները և մետաքսյա ու արծաթյա կերպասները և արժեքավոր անոթները, որոնք գալիս են ներքին գավառներից, բերվում են այս քաղաքը: Եվ Վենետիկի, Ջենովայի և ուրիշ երկրների վաճառականներն այստեղ են գալիս՝ վաճառելու իրենց ապրանքները և կամ գնելու՝ ինչ որ իրենք պետք ունեն»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Նկարագրեք Կիլիկիայի հայոց թագավորության պետական կարգը: Համեմատեք Արշակունյաց և Բագրատունյաց Հայաստանի պետական կարգի հետ:
2. Տնտեսության ո՞ր ճյուղերն էին զարգացած Կիլիկիայում:
3. Ի՞նչ զորատեսակներից էր կազմված կիլիկյան բանակը, որքա՞ն էր նրա թվաքանակը:
4. Ինչպե՞ս է նկարագրում Այաս նավահանգիստը Մարկո Պոլոն:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• մերձարևադարձային մրգերի մշակում • Ղրիմ • Դերբենդ • պայլ • արքունական քարտուղարություն • սեղանապետություն • մաքսապետություն • ձիավոր (ասպետ, կիլիկյան հեծելազորի բարձրաստիճան ներկայացուցիչ)

8-րդ թեմայի ամփոփում

1. Հայերը Կիլիկիայում հաստատվել էին հնագույն ժամանակներում, նրանց թիվն աճեց Ք. ա. I դարում: Հայերի հոծ զանգվածներ հաստատվում են Կիլիկիայում Բյուզանդիայի անհեռատես քաղաքականության և սելջուկ-թյուրքերի ավերիչ արշավանքների հետևանքով: 1080թ. Լեռնային Կիլիկիայում առաջանում է Ռուբինյան իշխանությունը:
2. Օգտվելով Բյուզանդիայի թուլացումից, սելջուկ-թյուրքերի և խաչակիրների միջև առկա հակամարտությունից՝ Ռուբինյան իշխաններն ամրապնդեցին իրենց դիրքերը, գրավեցին Դաշտային Կիլիկիան և հող նախապատրաստեցին թագավորության հռչակման համար:
3. Ականավոր քաղաքական-պետական գործիչ և զորավար Լևոն II-ը 1198թ. Տարսոն քաղաքում հռչակվեց Կիլիկիայի թագավոր՝ հիմք դնելով Ռուբինյան թագավորությանը: Հետագա տարիներին շարունակվում էր Հայոց թագավորության տնտեսական ու քաղաքական աննախընթաց հզորացումը:
4. 1226թ. Կիլիկիայում գահ բարձրացավ Հեթումյան արքայատոհմի հիմնադիր Հեթում I-ը, որի օրոք շարունակվում էր Հայոց թագավորության հզորացումը: Երկիրը զերծ մնաց թշնամիների ներխուժումներից, պետության ներսում խաղաղություն հաստատվեց: Ճշտորեն կողմնորոշվելով միջազգային բարդ իրադրության մեջ՝ Հեթում թագավորը 1254թ. դաշինք կնքեց մոնղոլների հետ: Դրա շնորհիվ ոչ միայն կանխվեց մոնղոլների ներխուժումը Կիլիկիա, այլև ապահովվեց նրանց աջակցությունը սելջուկ-թյուրքերի դեմ պայքարում:
5. XIII դ. երկրորդ կեսին Կիլիկյան Հայաստանը կենաց ու մահու պայքար էր մղում եգիպտոսի մամլուքների դեմ: XIV դարում մահմեդական պետություններով շրջապատված Կիլիկիան գնալով ավելի և ավելի էր թուլանում: Ներքին երկպառակությունները և արտաքին հարձակումները 1375թ. հանգեցրին Կիլիկիայի հայոց պետության կործանմանը:
6. Կիլիկյան Հայաստանն ավատատիրական պետություն էր, որը կառավարվում էր թագավորի և արքունի գործակալությունների կողմից: Պետությունն ուներ հզոր բանակ, որի թիվը պատերազմի ժամանակ հասնում էր 60 հազարի:
7. Բնակլիմայական նպաստավոր պայմանները հնարավորություն էին տալիս զարգացնելու տնտեսությունը: Գտնվելով առևտրական ճանապարհների խաչմերուկում՝ Կիլիկիան միջազգային առևտրի խոշոր կենտրոն էր դարձել:

ԹԵՄԱ 9 ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ X-XIV ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ: ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Մշակութային վերելքի պայմանները: Արաբների քաղաքական գերիշխանության ժամանակաշրջանում հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի զարգացումը խիստ դանդաղել էր: Հայոց պետականության վերականգնումը, անկախ թագավորության ամրապնդումը, երկրի ընդհանուր տնտեսական վերելքն ու առաջադիմությունը նախադրյալներ ստեղծեցին կրթական գործի, գիտության, գրականության և արվեստի վերելքի համար: X-XIV դարերում հայկական մշակույթը բուռն վերելք ապրեց, զարգացման բարձր մակարդակի հասան նյութական և հոգևոր մշակույթի բոլոր բնագավառները: Երկրում տևական խաղաղություն էր հաստատվել, բարգավաճում էր տնտեսությունը: Հայ թագավորները դպրոցական գործի, գիտության և արվեստի հովանավորներ էին: Մշակութային վերելքը պայմանավորված էր նաև քաղաքային կյանքի վերածնունդով: Միջնադարյան քաղաքներն առաջ էին քաշում աշխարհիկ կրթություն ստացած, ճշգրիտ և բնական գիտություններին, իրավագիտությանն ու բժշկագիտությանը քաջատեղյակ մարդկանց մեծ պահանջ: Քաղաքներում ապրող մեծահարուստները հանդես էին գալիս որպես բարձրարվեստ գործերի պատվիրատուներ: Մշակութային առաջընթացի կարևոր նախադրյալ էր նաև հարևան երկրների հետ բազմազան շփումների աշխուժացումը:

Գրակալ Անիից (XIII դար)

Սելջուկ-թյուրքերի ու մոնղոլների արշավանքները մեծապես խոչընդոտեցին հայ մշակույթի հետագա առաջընթացին, բայց ի վիճակի չէին կանգնեցնելու այն: Զաքարյան իշխանների գլխավորությամբ տեղի ունեցած հայկական տարածքների ազատագրումը և տնտեսական կյանքի աշխուժացումը

նոր վերելք առաջ բերեցին մշակութային ասպարեզում: Ինքնատիպ մշակութային կյանքով էր ապրում Կիլիկյան Հայաստանը, որի առնչությունները չափազանց սերտ էին թե՛ բուն Հայաստանի, թե՛ Բյուզանդիայի ու արևմտաեվրոպական երկրների հետ:

Գրիգոր Մագիստրոսի ճեմարանը (Սանահին, XI դար)

Կրթական գործը: X-XIV դարերում աճեց դպրոցների քանակը, ընդլայնվեց դասավանդվող առարկաների թիվը: Նախնական ուսուցումը կատարվում էր տարրական դպրոցներում, որոնք գործում էին խոշոր գյուղերում, վանքերում և քաղաքներում: Այդ դպրոցները սովորաբար պահվում էին եկեղեցու և պետության հաշվին: Կային նաև մասնավոր դպրոցներ, որտեղ ուսուցումը վճարովի էր: Տարրական դպրոցներում աշակերտներին սովորեցնում էին գրել, կարդալ, հաշվել և երգել եկեղեցում: Երեխաներն այդ դպրոցներն էին ընդունվում 12-13 տարեկան հասակում և սովորում շուրջ 3 տարի:

Նախնական կրթություն ստացածները հետագա ուսումնառությունը շարունակում էին բարձրագույն տիպի դպրոցներում՝ վարդապետարաններում: Դրանցում դասընթացի տևողությունը 7-8 տարի էր: Դասընթացը հաջողությամբ յուրացնելուց հետո սաները ստանում էին վարդապետի աստիճան և ուսուցչությամբ զբաղվելու իրավունք: Վարդապետարանները հայտնի էին իրենց մատենադարաններում պահվող թանկարժեք գրչագրերով: Գրքերը ձեռագիր էին, չափազանց բարձր գին ունեին և փոխանցվում էին սերնդից սերունդ:

XI-XII դարերում հայտնի էր Անիի վարդապետարանը, որտեղ գործունեություն էր ծավալել *Հովհաննես Իմաստասերը*: Նրա ուսուցչապետության տարիներին Անիի վարդապետարանը տվեց բազում շրջանավարտներ, որոնք գործում էին Հայաստանի տարբեր վայրերում: Կրթական գործում կարևոր նորություն էր Հովհաննես Իմաստասերի մշակած ուսումնական ծրագիրը:

Կիլիկյան Հայաստանի կրթական կենտրոններից մեծ հռչակ էր վայելում Սիս մայրաքաղաքի վարդապետարանը:

Հայկական վարդապետարաններից ամենանշանավորը Գլաձորի համալսարանն էր, որը 1280-ական թթ. հիմնադրեց *Ներսես Մշեցին*: Համալսարանի գործունեությունը հովանավորում էին Պռոշյան և Օրբելյան իշխանները: *Եսայի Նշեցու* ուսուցչապետության տարիներին այստեղ սովորելու էին գալիս

հարյուրավոր երիտասարդներ: Գլաձորում դասավանդում էին ժամանակի եվրոպական համալսարաններում ուսումնասիրվող գիտությունները: Երբ քաղաքական ու տնտեսական ծանր պայմանները հարկադրեցին դադարեցնել Գլաձորի համալսարանի գործունեությունը, նրա սաները տեղափոխվեցին Տաթև: Այստեղ դասավանդում էին նշանավոր գիտնականներ ***Հովհան Որոտնեցին*** և ***Գրիգոր Տաթևացին***: Գլաձորի ու Տաթևի համալսարաններում մեծ ուշադրություն էին դարձնում փիլիսոփայական կրթությանը: Տաթևի համալսարանը գործեց մինչև 1412թ.:

Եսայի Նչեցին և իր աշակերտները

2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Պատմագրությունը: Բագրատունյաց Հայաստանի քաղաքական ու տնտեսական վերելքը նաև գիտության զարգացման պայմաններ ստեղծեց: Բուռն ծաղկում ապրեց պատմագրությունը: Հայ պատմիչները հենվում էին հատկապես Մովսես Խորենացու մշակած սկզբունքների և ստեղծագործական եղանակների վրա: Նախ՝ շարունակվեց «Հայոց պատմություն»-ների շարադրումը: Դրանց հեղինակներն իրենց բուն աշխատությունը սկսում էին այնտեղից, որտեղ կանգ էր առել նախորդ պատմիչը: Այդպես շարադրվեց կաթողիկոս ու քաղաքական գործիչ ***Հովհաննես Դրասխանակերտցու*** «Հայոց պատմությունը»: Նա հիանալի կրթություն է ստացել, ձեռքի տակ ունեցել է հարուստ ու հավաստի նյութեր: Առանձնապես արժեքավոր է Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմության» եզրափակիչ մասը, որտեղ հեղինակը հանդես է գալիս իբրև իրադարձությունների ականատես ու մասնակից (IX դ. վերջ–X դ. առաջին քառորդ): Հայաստանի XI դ. պատմությանն է նվիրել իր աշխատությունը ***Արիստակես Լաստիվերցին***, իսկ ***Կիրակոս Գանձակեցին*** շարադրել է երկրի պատմությունը՝ հայոց դարձից մինչև իր օրերը՝ XIII դ. 60-ական թվականները:

Պատմիչների հաջորդ խումբը գրի էր առնում նաև հարևան երկրների պատմությունը՝ ստեղծելով «տիեզերական» պատմություններ: Այդ հեղինակներն իրենց առջև նպատակ էին դրել ստեղծել այնպիսի պատմություններ, որոնք ամփոփ պատկերացում կտային աշխարհի պատմության ու զարգացման ընթացքի մասին: «Տիեզերական» պատմությունների շարքը սկսվում է ***Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի*** աշխատությամբ (XI դ. սկիզբ): Ընդհանուր պատմության շարադրման երկրորդ փորձը XIII դ. ձեռնարկել է ***Վարդան Արևելցին***:

Պատմիչների երրորդ խումբը ձգտում էր գրի առնել տեղական նշանավոր տոհմերի պատմությունը: Այդ պատմիչները փորձում էին հիմնավորել ու արդարացնել ենթակա թագավորությունների հանդես գալը: ***Թովմա Արծրունին*** գրեց Վասպուրականի թագավորության պատմությունը: Այս աշխատությունը տոհմական պատմություն է՝ Վասպուրականին վերաբերող հարուստ փաստերով: Առավել նշանավոր էր ***Ստեփանոս Օրբելյանի*** «Սիսական նահանգի պատմությունը» մեծարժեք աշխատությունը: Այս երկը ևս տեղական թագավորության պատմություն է, բայց նրա նշանակությունը դուրս է գալիս Սյունիքի շրջանակներից:

Այս ժամանակաշրջանում հայ պատմագրության մեջ սկիզբ առան նոր ուղղություններ: Պատմիչները սկսեցին գրել ժամանակագրություններ և տարեգրություններ: Դրանց հեղինակները, ըստ տարիների, համառոտ շարադրում էին իրենց ժամանակաշրջանի իրադարձությունները: Հայ ժամանակագիրների շարքում առաջնակարգ տեղ են գրավում ***Մատթեոս Ուռհայեցին*** և ***Սամվել Անեցին***: Կիլիկյան Հայաստանի պատմիչներից ամենանշանավորը ***Սմբատ Գունդստաբլն*** է, որի «Տարեգիրքն» ավանդում է Ռուբինյանների և Հեթումյանների ժամանակաշրջանի կարևոր դեպքերը:

Իրավագիտությունը: Մեծ Հայքում և Կիլիկիայում քաղաքային կյանքի ծաղկումն ու տնտեսական զարգացման ընթացքը բարդ իրավահարաբերություններ էին առաջ բերել: Քրիստոնեական եկեղեցու մշակած իրավունքի հիման վրա այլևս անհնար էր դրանք կարգավորել: Ուստի հայ իրավագիտությունն աննախընթաց զարգացում ապրեց: XII դ. առաջին կեսին գրված ***Դավիթ Ալավկաորդու*** «Կանոնները» կարգավորում էին ընտանեկան ու կենցաղային հարցերը: Նա իր «Կանոններում» մասամբ էր անդրադառնում աշխարհիկ կյանքի առաջադրած խնդիրներին:

XII դ. երկրորդ կեսին պատկերը փոխվում է: ***Մխիթար Գոշը*** ստեղծում է հայ միջնադարյան իրավունքի գլուխգործոց «Դատաստանագիրքը»: Այն կոչված էր կարգավորելու կյանքի բոլոր բնագավառները՝ հասարակական-տնտեսական հարաբերությունները, ունեցվածքային վեճերը, բարքերն ու սովորությունները: Դեռևս միջնադարում Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» թարգմանվել է լատիներեն, լեհերեն ու վրացերեն, կիրառվել հայկական գաղթավայրերում:

Քաղաքացիական օրենքների բացակայությունը զգալի էր նաև Կիլիկյան Հայաստանում: Այդ բացը լրացնելու նպատակով խոշոր հասարակական-հոգևոր գործիչ ***Ներսես Լամբրոնացին*** XII դ. երկրորդ կեսին թարգմանում է բյուզանդական ու ասորական քաղաքացիական և զինվորական օրենքներ: Դրանք նպաստել են ազգային օրենսդրության զարգացմանը: Հայերեն են թարգմանվել նաև ***«Անտիոքի ասիզները»***, որոնք գործող օրենքներ էին հարևան Անտիոքի դքսությունում: Ուշագրավ է, որ «Անտիոքի ասիզների» հին ֆրանսերեն բնագիրը կորած է, և այդ ժողովածուն այսօր մատչելի է միայն հայերեն թարգմանությամբ:

Մխիթար Գոշի աշխատության հիման վրա հաջորդ դարում իր «Դատաստանագիրքն» է շարադրել ***Սմբատ Գունդստաբլը***: Նրա աշխատությունը հարմարեցված էր Կիլիկյան Հայաստանի առանձնահատուկ պայմաններին, իսկ նյութերի շարադրանքը տրված է Կիլիկիայի հայերեն խոսվածքով:

Բնագիտությունը: Ժամանակի առաջադրված պահանջներով էր պայմանավորված նաև բնական գիտությունների վերելքը: Ականավոր գիտնական ***Հովհաննես Իմաստասերը*** հարստացրեց ժամանակի մաթեմատիկական գիտությունը, ուսումնասիրեց և բարեփոխեց հայկական օրացույցը: Մաթեմատիկայի ասպարեզում կարևոր աշխատանք է կատարել նաև ***Գրիգոր Մագիստրոս Պահլավունին***: Նա է առաջին անգամ հայերեն թարգմանել Էվկլիդեսի «Երկրաչափությունը»: Դարաշրջանի հայ գիտնականներն զբաղվել են նաև կենդանաբանության և բժշկագիտության հարցերով: Հայ բժիշկներից ամենահռչակավորը ***Մխիթար Հերացին*** էր: Նրա «Ջերմանց մխիթարություն» աշխատությունը շարադրված է ժամանակի խոսակցական լեզվով, որպեսզի բոլորը «կարդան և օգուտ քաղեն»:

Հայ բժիշկները հիվանդություններն ուսումնասիրելու նպատակով նույնիսկ դիահերձումներ էին կատարում, որն արգելված էր եվրոպական երկրներում:

3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդական բանահյուսությունը: X-XIV դարերում շարունակում էր զարգանալ ժողովրդական բանահյուսությունը: Ժողովուրդը շարունակում էր ստեղծել նոր երգեր, հարսանեկան, սիրային խաղիկներ: Դրանք հորինվում էին ժամանակի խոսակցական լեզվով, ունեին իրենց երաժշտական եղանակը և երգվում էին ժողովրդի մեջ: Ժողովրդական երգերի մեջ արտացոլված են աշխատավոր մարդկանց երազանքներն ու զգացմունքները: IX-X դարերում լրացվեց և հարստացավ «Սասնա ծռեր» դյուցազնավեպը: Վեպի գլխավոր հերոս Սասունցի Դավիթն ազատության համար պայքարի ելած հայ ժողովրդի իղձերի մարմնացումն է: Դյուցազնավեպի չորս ճյուղերն արտացոլում են ազատության համար մարտնչող ժողովրդի ձգտումները, հաղթանակի հավատը:

Գրիգոր Նարեկացի

Գեղարվեստական գրականությունը: Հայ գրականության մեջ նոր երևույթ էին աշխարհիկ թեմաներով ստեղծագործությունները: Դարաշրջանի ամենամեծ բանաստեղծ ***Գրիգոր Նարեկացու*** տաղերով սկիզբ է դրվում հայ աշխարհիկ բանաստեղծությանը: Նրա տա-

ղերը հորինված են պարզ լեզվով և գովերգում են բնությունը, մարդուն, սերը: Համաշխարհային հռչակ է վայելում Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը, որը գրված է բանաստեղծական բարձր արվեստով և ճոխ լեզվով: Այն ժողովրդի մեջ տարածում է ստացել «Նարեկ» անունով:

Անիի գրական դպրոցի ականավոր ներկայացուցիչներից էին ***Գրիգոր Մագիստրոս Պահլավունին*** և ***Հովհաննես Իմաստասերը***: Առաջինը հայտնի է իր «Թղթերով»՝ նամակներով, որոնք գեղարվեստական արձակի արժեքավոր նմուշներ են: Դրանք շարադրված են գեղեցիկ, բայց բարդ լեզվով: Նոր հայացքների կնիքն է կրում ***Հովհաննես Իմաստասերի*** դրամատիկական պոեմը: Հեղինակը մերժում է վանական հին մտածողությունը և հիմնավորում է բնության առաջնային լինելու գաղափարը:

Ներսես Շնորհալի

Ազգային խոշոր գործիչ և բանաստեղծ էր ***Ներսես Շնորհալին***: Նրա գրական ժառանգության մեջ առանձնանում են հայ հասարակությանն ուղղված «Թուղթ ընդհանրական» կաթողիկոսական շրջաբերականը, «Ողբ Եդեսիոյ» և այլ պոեմներ, գողտրիկ հանելուկները:

Ֆրիկի բանաստեղծությունների մեծ մասը բողոք է աշխարհի անարդարությունների և օտարների բռնությունների դեմ: Ֆրիկը գրել է ժողովրդի համար հասկանալի խոսակցական լեզվով:

Հայ գրականության խոշոր նվաճումներից էին առակագրության ձևավորումն ու զարգացումը: Ժողովրդական ստեղծագործությունների մեջ առակը միշտ էլ կարևոր տեղ է զբաղեցրել, բայց առակների դերն ավելի աճեց XII-XIII դարերում: Առակները հաճախ վերցվում էին ժողովրդից և, մշակվելով, նոր որակ ձեռք բերում: ***Մխիթար Գոշը*** դարձավ գեղարվեստական գրականության նոր ճյուղի՝ առակագրության հիմնադիրը: Գոշը ձգտել է առակների միջոցով դաստիարակել ժողովրդին, համախմբել ազգային եկեղեցու շուրջը: Նրա առակները հայ աշխարհիկ գրականության առաջին էջերից են:

Առակները հատուկ տեղ են գրավում ***Վարդան Այգեկցու*** գրական ժառանգության մեջ: Նա միջնադարի ամենանշանավոր հայ առակագիրն է: Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու կազմած առակագրքերը լայն տարածում ձեռք բերեցին և անգերազանցելի մնացին հայ գրականության պատմության մեջ: Հայկական որոշ առակներ դեռևս միջնադարում թարգմանվել են այլ լեզուներով:

XIII–XIV դարերում ***Հովհաննես*** ու ***Կոստանդին Երզնկացիները*** և ***Հովհաննես Թլկուրանցին*** նոր շունչ հաղորդեցին հայ գրականության զարգացմանը, նպաստեցին ազգային մշակույթի առաջընթացին:

4. ԱՐՎԵՍՏԸ

Քանդակագործությունը: Քանդակագործության ծաղկումը սերտորեն կապված էր ճարտարապետության զարգացման հետ: Նորակառույցները հաճախ զարդարում էին ճոխ քանդակներով: Եկեղեցիների ճակատային մասում սովորաբար տեղադրում էին տաճարի պատվիրատու իշխանի քանդակը: Նրա դերն ընդգծելու համար պատկերում էին ամբողջ հասակով, եկեղեցու մանրակերտը բռնած: Մեծ ուշադրություն էին դարձնում նաև շենքերի շքամուտքերը և աչքի ընկնող մասերը քանդակներով զարդարելուն:

Ամբողջությամբ քանդակներով էին պատված Աղթամարի տաճարի զարդագոտին և ճակատների հարթությունները: Քանդակներում պատկերված են Արծրունի տոհմի նշանավոր ներկայացուցիչները, այդ թվում՝ Գագիկ թագավորը: Հանգամանորեն ներկայացված են իշխանական կենցաղը, փառաբանված անձանց քաջագործությունները: Հիացմունք են առաջացնում շինականների առօրյա կյանքից վերցված տեսարանները՝ այգու մշակումը, բերքահավաքը, գինու պատրաստումը և այլն:

Խաչքարագործություն: Խաչքարերը հայ միջնադարյան մշակույթի ինքնատիպության խորհրդանիշն են: Խաչքարային արվեստը նոր երևույթ էր հայ քանդակագործության մեջ և ձևավորվել էր IX-X դարերում: Խաչքարերի քանդակազարդման արվեստը կատարելության հասավ XII–XIV դարերում, երբ կերտվեցին ավելի ճոխ ու բազմապիսի հուշարձաններ:

Խաչքարը քարե սալ է, որի կենտրոնական մասում պատկերվում է քրիստոնեության խորհրդանիշ խաչը: Երբեմն խաչի վրա քանդակվում է նաև Քրիստոսի պատկերը: Այդպիսի խաչքարը կրում է «Ամենափրկիչ» անվանումը: Խաչը շրջապատվում է նուրբ զարդաքանդակներով:

Խաչքարերի վրա փորագրված արձանագրությունները հաղորդում են քարագործ վարպետի անունը և հուշարձանը կանգնեցնելու ժամանակը: Խաչքարերի մեծ մասը

Պողոսի կերտած խաչքարը Գոշավանքում

դրվել է մահացած մարդկանց հիշատակին: Հաճախ խաչքար է կանգնեցվել նաև որևէ պատմական դեպքի, աղբյուր կառուցելու կապակցությամբ և այլ առիթներով: Խաչքարեր են կերտել հազարավոր քարագործ վարպետներ: Կատարելությամբ առանձնանում են ***Պողոսի*** (Գոշավանք) և ***Սոմիկի*** (Նորավանք) կերտած խաչքարերը:

Սոմիկի քանդակներից (Նորավանք)

Որմնանկարչությունը: Ճարտարապետության նվաճումների արդյունք էր նաև որմնանկարչության առաջընթացը: Տաճարների ու ապարանքների ներքին պատերը զարդարում էին շքեղ որմնանկարներով: Պատկերազարդումն արվում էր պատերի թաց ծեփի և քարերի հղկված մակերեսի վրա: Երբեմն պատկերազարդում էին նաև հին կառույցները: Տաճարների որմնանկարները ներկայացնում էին Քրիստոսին, հրեշտակների և սրբերի: Տիգրան Հոնենցի եկեղեցում (Անի) պատկերված են Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ III թագավորը: Աշխարհիկ կառույցները զարդարվում էին հեծյալների, որսի և զվարճության տեսարաններով:

Ավետարանի փղոսկրյա կազմ (VI դ.)

Մանրանկարչությունը: Բուռն ծաղկում ապրեց մանրանկարչությունը՝ ձեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը: Գեղեցիկ նկարներով զարդարում էին մատյանների առաջին էջերը, լուսանցքները և կարևոր հատվածները: Մեծ ուշադրություն էր դարձվում Քրիստոսի և սրբերի կյանքից վերցված դեպքերի պատկերմանը: Մանրանկարներն արտացոլում են նաև իրական կյանքը: Մանրանկարիչները պատկերել են աշխատանքային գործիքներ, արհեստավորների և գյուղացիների, ժողովրդական հանդեսներ և այլն: Ձեռագրերում երբեմն նկարում էին մատյանների պատվիրատուներին և նրանց ընտանիքի անդամներին: Հայկական մանրանկարներն աչքի են ընկնում զարդերի գեղեցկությամբ և վառ գույներով:

Ձեռագրերի պատկերազարդումը IX և հաջորդ դարերում դարձել էր սովորական երևույթ: Նկարազարդ ձեռագրերը սովորականից թանկ արժեին և մատչելի էին միայն շատ հարուստ մարդկանց: Հաճախ այդ մատյանների համար պատվիրում էին կաշվից և արծաթից պատրաստված, թանկարժեք քարերով զարդարված կազմեր: Մանրանկարչությունը զարգացման բարձր մակարդակի հասավ Կիլիկյան Հայաստանում: Կիլիկյան մանրանկարիչներից ամենահայտնիներն են ***Թորոս Ռոսլինը*** և ***Սարգիս Պիծակը***: Ռոսլինը բարձր վարպետությամբ է պատկերել մարդկանց ապրումներն ու բնավորությունը: Նա ձեռագրեր է նկարազարդել Հայոց կաթողիկոսի և Հեթումյան թագավորների համար:

Մանրանկարիչ Սարգիս Պիծակ

Երաժշտությունը: Զարգացման ավելի բարձր մակարդակի է հասնում երաժշտությունը: Առաջին հերթին հարստացավ կենցաղային երաժշտությունը, ստեղծվեցին նոր գեղջկական երգեր:

Գուսանական երգն ու երաժշտությունն աշխարհիկ բնույթ ունեին և արտահայտում էին հասարակ մարդկանց զգացումները: Գուսանների երգն ու նվագը զարդարում էին ժողովրդական հանդեսները:

Առաջադիմեց նաև հայ եկեղեցական երաժշտությունը: Հոգևոր երգերը՝ շարականները, աչքի էին ընկնում պարզությամբ ու մեղեդիների գեղեցկությամբ: Եկեղեցական երաժշտությունը հիմնված էր ժողովրդական երգի ու նվագի վրա և հասկանալի ու սիրելի էր հասարակ մարդկանց:

Այս ժամանակաշրջանում է, որ լայն տարածում ստացան խազերը: Այդ հատուկ նշանագրերի միջոցով գրի էին առնում երգերն ու մեղեդիները: Ցավոք, այսօր խազերն ընթեռնելի չեն, և դրանց վերծանման աշխատանքները դեռևս արդյունավետ չեն:

Թորոս Ռոսլինի մանրանկարներից

Ճարտարապետությունը: Արաբական տիրապետության ժամանակաշրջանում ընդհատված շինարարական աշխատանքները վերսկսվեցին անկախության վերականգնումից հետո: Հայ ճարտարապետությունը կրկին բռնեց վերելքի ուղին: Սկսվեց միջնադարյան Հայաստանի առավել հայտնի վանական համալիրների կառուցումը: Դրանք ընդգրկում էին մի շարք աշխարհիկ և եկեղեցական շենքեր, աչքի էին ընկնում բնության ու վանական կառույցների ներդաշնակությամբ:

Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին

Տաղանդավոր ***Մանվել*** ճարտարապետն Աղթամար կղզում կառուցեց Սուրբ Խաչ հռչակավոր եկեղեցին, որը բովանդակ հայ ճարտարապետության գլուխգործոցներից է: Տաճարի պատերը զարդարված են հիանալի քանդակներով, իսկ ներսում գտնվում են ճոխ որմնանկարներ: Աղթամարում Գագիկ թագավորի հրամանով կառուցվեց հանդիսավոր արարողությունների դահլիճ և սկսվեց նավահանգստի շինարարությունը:

Անիի ամենանշանավոր կառույցը Սայր տաճարն էր՝ Կաթողիկեն, որի ճարտարապետն էր հռչակավոր ***Տրդատը***: Գագիկ Ի-ի հրամանով նա կառուցեց նաև Անիի զվարթնոցատիպ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Եկեղեցիները զարդարում էին Անիի բոլոր արվարձանները և թաղամասերը: Հայ ճարտարապետությունը հարստացրին նաև ենթակա թագավորություններում ստեղծագործող ճարտարապետները:

Գագիկ Ի-ի կնոջ՝ Կատրանիդե թագուհու արձանագրությունը Անիի Կաթողիկե Սայր տաճարի պատին (1000թ.)

Սելջուկ-թյուրքերի արշավանքների և տիրապետության ժամանակաշրջանում շինարարական աշխատանքները դանդաղեցին, բայց Զաքարյանների օրոք նոր վերելք ապրեցին: Շարունակվեց վանական համալիրների շինարարությունը: Դրանք լրացվեցին արհեստանոցներով, աղբյուրներով ու մառաններով: Ճարտարապետական արվեստի հրաշալիք են Այրիվանքի (Գեղարդավանք) և Գանձասարի վանական համալիրները:

X-XIV դարերի հոգևոր ու նյութական մշակույթը մեր ժողովրդի արժեքավոր ձեռքբերումներից է: Այդ ժամանակաշրջանի հայ մշակույթն աչքի ընկնող ներդրում է համաշխարհային գիտության, գրականության և արվեստի գանձարանում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն էր նորը X-XIV դարերի գիտության մեջ: Ըստ ձեզ՝ ինչն էր նպաստում գիտության զարգացմանը միջնադարյան Հայաստանում: Ինչո՞ւ այն անկում ապրեց հետագա դարերում:
2. Բնութագրեք X-XIV դարերի հայ գրականությունը: Ինչո՞վ էր պայմանավորված նրա վերելքը: Ինչ էր պատմվում «Սասնա ծռեր» դյուցազնավեպում:
3. X-XIV դարերում ինչ նշանավոր ճարտարապետական կոթողներ էին ստեղծվել Հայաստանում: Ինչ հայտնի ճարտարապետների գիտեք:
4. Ինչ է մանրանկարչությունը: Որտեղ այն առավել զարգացում ապրեց: Նշանավոր ինչ մանրանկարիչների գիտեք: Միջնադարյան հայ արվեստի ինչ հուշարձաններ են հասել մեզ:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• մատենադարան • գրչագիր (ձեռագիր մատյան) • խաչքար • որմնանկարչություն • մանրանկարչություն (ձեռագիր մատյանների պատկերազարդման արվեստ) • շարական (հոգևոր երգ) • խազեր (երգերի ու մեղեդիների նշանագրեր) • Անիի վարդապետարան • Հովհաննես Դրասխանակերտցի • Արիստակես Լաստիվերցի • Կիրակոս Գանձակեցի • Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ • Վարդան Արևելցի • «տիեզերական պատմություն» • Թովմա Արծրունի • Ստեփանոս Օրբելյան • Մատթեոս Ուռհայեցի • Սամվել Անեցի • Դավիթ Ալավկաորդի • Մխիթար Գոշ • «Դատաստանագիրք» • Ներսես Լամբրոնացի • «Անտիոքի ասիզներ» • Գրիգոր Նարեկացի • Գրիգոր Մագիստրոս Պահլավունի • Ներսես Շնորհալի • Վարդան Այգեկցի • Մխիթար Հերացի • Պողոս • Մոմիկ • Թորոս Ռոսլին • Սարգիս Պիծակ • Մանվել • Տրդատ

9-րդ թեմայի ամփոփում

1. Պետականության վերականգնումը և տնտեսության վերելքը մշակույթի զարգացման բարենպաստ նախադրյալներ ստեղծեցին: Պետության և եկեղեցու ջանքերով սկսեց զարգանալ կրթական գործը: Տարրական դպրոց-

ներ էին հիմնվել քաղաքներում, վանքերում և խոշոր գյուղերում: Առաջացան նաև բարձրագույն ուսումնական հաստատություններ (վարդապետարաններ), որոնցից առավել նշանավորներն էին Գլաձորի, Տաթևի համալսարանները: Դրանք գիտության և մշակույթի խոշոր կենտրոններ էին:

2. Կրթության զարգացումը հիմք դարձավ նաև գիտության զարգացման համար: Ծաղկում ապրեցին պատմագրությունը, իրավագիտությունը, բժշկագիտությունը և այլն: Ժամանակի հայտնի գիտնականներից էին Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Իմաստասերը, Սմբատ Գունդստաբլը, Մխիթար Հերացին և ուրիշներ:
3. X-XIV դարերի հայ գրականությունը հարստացավ «Սասնա ծռեր» անմահ էպոսով, Գրիգոր Նարեկացու և Ֆրիկի մեծարժեք ստեղծագործություններով: Առաջացավ գրականության նոր ճյուղ՝ առակագրությունը:
4. X-XIV դարերում ճարտարապետական հիասքանչ կոթողներ էին ստեղծվել Անիում, Սանահինում, Հաղպատում, Աղթամարում և այլուր: Զարգացավ նաև քաղաքաշինությունը: Հայտնի ճարտարապետներ էին Մանվելը և Տրդատը:
5. Ճարտարապետության հետ զարգացան որմնանկարչությունը և քանդակագործությունը: Նորություն էր խաչքարային արվեստը: Մանրանկարչությունը բարձր զարգացման հասավ հատկապես Կիլիկյան Հայաստանում (Թորոս Ռոսլին, Սարգիս Պիծակ): Միջնադարյան Հայաստանում երգերն ու մեղեդիները գրի էին առնվում հատուկ նշանագրերի՝ խազերի միջոցով, որոնք այժմյան նոտաների նախաձևերն էին:



ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ XV ԴԱՐՈՒՄ

1. ՀԱՅԱՍՏԱՆԸ XV ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Հայաստանի քաղաքական ու տնտեսական կացությունը: Լենկթեմուրի մահվան լուրը ցնծությամբ է ընդունվում նվաճված ժողովուրդների կողմից: Այդ բռնակալի ստեղծած անծայրածիր պետությունը նրա մահից հետո սկսեց արագորեն քայքայվել: Նրա ժառանգների միջև ծայր առան գահակալական արյունալի կռիվներ, որոնցից օգտվեցին ***կարա-կոյունլու*** և ***ակ-կոյունլու*** թուրքմենական ցեղերի առաջնորդները:

Լինելով քոչվոր անասնապահ ցեղեր՝ նրանք ժամանակին օգտվում էին մոնղոլ տիրակալների հովանավորությունից և իրենց ոչխարների հոտերով շրջում էին նրանց տերության արևմտյան երկրամասերում: Միաժամանակ, նրանց զինված ջոկատներն զբաղվում էին նվաճված ժողովուրդներին թալանելով և ահաբեկելով:

Շուտով կարա-կոյունլուների և ակ-կոյունլուների միջև մրցակցություն սկսվեց Հայաստանին և նրա հարևան երկրներին տիրելու համար: Այդ պայքարում հաղթանակեց կարա-կոյունլու ցեղի առաջնորդ ***Կարա Յուսուֆը***, որի օրոք նրա իշխանությունը վերածվեց ուժեղ տերության: Վերջինիս մայրաքաղաքն էր Թավրիզը: Այդ տերության կազմի մեջ էին մտնում Պարսկաստանը, Ատրպատականը, Հայաստանը և Վրաստանը:

XV դ. 20–30-ական թթ. պարբերաբար կրկնվող պատերազմների, գաղթերի ու տեղահանությունների, գերեվարության, ինչպես նաև բնական աղետների ու հաճախակի կրկնվող սովի հետևանքով Հայաստանի մի շարք գավառների բազմաթիվ բնակավայրեր լքվեցին: Նվազեց բնակչության թիվը: Թուրքական և քրդական մի շարք ցեղեր հաստատվեցին Հայաստանի՝ արոտավայրերով հարուստ լեռնային շրջաններում: Փոփոխվեց երկրի բնակչության էթնիկ կազմը: Այդուհանդերձ՝ Հայաստանի բնակչության գերակշիռ մասը կազմում էին հայերը: Դրանով պետք է, անշուշտ, բացատրել, որ կարա-կոյունլու գահակալները երբեմն հենվում էին հայերի վրա և անգամ իրենց կոչում էին Հայաստանի թագավորներ ***(շահ-ի Արման)***: Նրանք հաճախ պետական բարձր պաշտոնների էին նշանակում հայ իշխանների, իսկ բանակում՝ ներգրավում հայ զորականների: Այս առումով աչքի էր ընկնում Ջհանշահը (1437–1467թթ.), որը կարճ ժամանակում ճնշեց ըմբոստ ցեղապետներին ու ամրապնդեց իր իշխանությունը տերության ամբողջ տարածքում: Նրա իշխանության տարի-

ներին երկիրը խաղաղվեց, և ժողովուրդն ազատ շունչ քաշեց անընդմեջ կռիվներից ու ասպատակություններից: Առևտրական կապեր հաստատվեցին միջինասիական և Արևմուտքի երկրների հետ: Կարգի բերվեց կառավարման համակարգը: Փորձ արվեց տնտեսության աշխուժացման նպաստավոր պայմաններ ստեղծելու:

Երևանը՝ Արևելյան Հայաստանի վարչական կենտրոն: Հայ իշխանական տների դրությունը: Ջհանշահը Արևելյան Հայաստանից և այսրկովկասյան երկրներից կազմեց առանձին կուսակալություն, որն իր հերթին բաժանվեց մի քանի վարչական շրջանների: Հյուսիսարևելյան Հայաստանի վարչական կենտրոն դարձավ ***Երևանը***: Դրա շնորհիվ, XV դ. 40-ական թվականներից սկսած, Երևանը դառնում է Արարատյան դաշտի և ամբողջ Արևելյան Հայաստանի, այդ թվում՝ Արցախի, տնտեսական և մշակութային կենտրոն:



Երևանը՝ ըստ ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենի (1671թ.)

Ջհանշահի օրոք Գեղամա երկրի, Վայոց ձորի, Սյունիքի, Արցախի, Գուգարքի և մի քանի այլ վայրերի իշխանական տները կարողացան վերականգնել իրենց իրավունքները՝ ստանալով ***մելիք*** տիտղոսը: Շարունակվեց Երևանի տնտեսական վերելքը: Հայության համակրանքը շահելու նպատակով կարակոյունլուները բարյացակամ քաղաքականություն որդեգրեցին Հայոց եկեղեցու նկատմամբ: Նրանք ոչ միայն նպաստում էին եկեղեցիների կառուցմանը, այլև պայմաններ ստեղծում այլ շինարարական աշխատանքների համար: Նշանա-

կալից դեր սկսեցին խաղալ Աղթամարի ***Զաքարիա*** և ***Ստեփանոս կաթողիկոսները***: Աղթամարի զահակալներն ունեին իրենց զինական ուժերը, որոնցով հաջողությամբ պաշտպանում էին Աղթամարի վանքի տիրույթները և կանխում հարևան մահմեդական իշխողների ոտնձգությունները: Մասնավորապես՝ Զաքարիա կաթողիկոսը վայելում էր Ջհանշահի հովանավորությունը: Երբեմն էլ Զաքարիան հանդես էր գալիս միմյանց դեմ կռվող մահմեդական իշխողներին հաշտեցնողի դերում: Արևմտյան Հայաստանում շարունակում էին գոյատևել ***Համշենի, Սասունի, Խութի, Տարոնի, Մոկսի, Զեյթունի, Շապուխի*** և մի քանի այլ հայկական իշխանություններ:

Ջհանշահի իշխանության տարիների հարաբերական խաղաղ շրջանը երկար չտևեց: Նրա մահից հետո ակ-կոյունլու ***Ուզուն-Հասան*** սուլթանը պատերազմ սկսեց կարա-կոյունլուների դեմ և, հաղթելով, տիրացավ նրանց տերությանը:

Հիմք դրվեց ***ակ-կոյունլուների*** ընդարձակ պետությանը (1468-1502թթ.), որի մեջ մտավ նաև Հայաստանը: Ակ-կոյունլուների հաղթանակում կարևոր նշանակություն ունեցավ նրանց նկատմամբ հայերի դրական վերաբերմունքը: Հայերը, նպաստելով նրանց հաղթանակին, հույս ունեին բարելավել իրենց վիճակը: Համենայն դեպս, Ուզուն-Հասանը հովանավորում էր հայ հոգևորականությանը, սիրաշահում հայ իշխանական տներին՝ ճանաչելով նրանց կիսանկախ վիճակը: Հարկահավաքման տեղական պաշտոնները վստահվեցին հիմնականում հայերին: Սակայն Ուզուն-Հասանից հետո վիճակը ծանրացավ: Ներքին հակասություններից ծվատվող ակ-կոյունլուների պետությունն անկում ապրեց՝ իր տեղը զիջելով ***Սեֆյան Պարսկաստանին***:

Քոչվոր ցեղերի բիրտ տիրապետության ընթացքում հայ ժողովրդի նշանակալից հատվածներ գերվեցին ու ստրկության վաճառվեցին Արևելքի շուկաներում: Շատերը բռնեցին արտագաղթի ճանապարհը: Անկում ապրեցին երբեմնի ծաղկուն քաղաքները, արհեստն ու առևտուրը, խոպանի ու արոտավայրերի վերածվեցին մշակելի հողերն ու այգիները: Ծայրահեղ աղքատության մատնվեցին թե՛ հասարակ ժողովուրդը, թե՛ իշխանավորները: Թովմա Մեծոփեցու խոսքերով՝ մի քաղաք և մի քանի գյուղ միասին այնքան նյութական հնարավորություն չունեին, որ թշնամուց հետ գնեին գոնե մեկ գերի:

Հայաստանում հաստատված քոչվոր ցեղերին անհրաժեշտ էին ընդարձակ արոտավայրեր, ուստի նրանք քիչ էին ուշադրություն դարձնում տնտեսության զարգացմանը: Սակայն, ժամանակի ընթացքում ազդվելով հայերից, նրանք աստիճանաբար սկսեցին անցնել նստակյաց կյանքի: Քոչվորները հայ բնակչությանը դուրս էին մղում հարթավայրային շրջաններից: Հայերը հիմնականում կենտրոնացան նախալեռնային և լեռնային շրջաններում՝ ապաստանելով երկրի թեկուզ և ոչ բերրի, սակայն դժվարամատչելի վայրերում:

XV դարը հայոց պատմության ամենամռայլ և մղձավանջային էջերից է: Բայց հայ ժողովուրդը և գոյությունը պահպանած իշխանական տների շա-

ռավիղներն իրենց հույսը չէին կորցրել՝ նպաստավոր պայմաններ լինելու դեպքում վերականգնելու հայոց պետականությունն ու անկախությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպիսին էր Հայաստանի դրությունը Լենկթեմուրի արշավանքներից հետո:
2. Թուրքմենական որ ցեղերի տիրապետությունը հաստատվեց Հայաստանում XV դարում:
3. Երևանը ե՞րբ դարձավ Արևելյան Հայաստանի վարչական կենտրոն: Ինչ գիտեք Երևանի պատմության մասին:
4. Որտե՞ղ էին պահպանվել հայկական մանր իշխանությունները XV դարում: Թվարկեք դրանք:
5. Ինչո՞ւ անկում ապրեց հայ ժողովրդի տնտեսական կյանքը, ավերվեցին գյուղերն ու քաղաքները:
6. Ինչո՞ւ հայ ժողովուրդը հարթավայրերից հեռացավ դեպի նախալեռնային ու լեռնային անբերրի տարածքներ:
7. Ինչո՞ւ փոխվեց երկրի բնակչության ազգային կազմը:
8. Ինչ հետևանքներ ունեցան Լենկթեմուրի և թուրքմենական ցեղերի արշավանքները հայ ժողովրդի համար:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ինչպե՞ս եք գնահատում Արևելյան Հայաստանի իրավիճակը Ջհանշահի կառավարման շրջանում: Համեմատեք այդ մահմեդական տիրակալի քաղաքականությունն օտարազգի այլ իշխողների գործունեության հետ:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• Լենկթեմուր • Կարա Յուսուֆ՝ շահ-ի Արման («Հայաստանի թագավոր») • Ջհանշահ • Վայոց ձորի, Սյունիքի, Արցախի, Գուգարքի իշխանություններ (մելիքություններ) • Համշենի, Տարոնի, Սասունի, Խութի, Մոկսի, Զեյթունի ու Շատախի իշխանություններ • Աղթամարի Զաքարիա և Ստեփանոս կաթողիկոսներ • Ուզուն-Հասան

2. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

XV դ. առաջին կեսին, երբ արդեն չկար Կիլիկիայի հայկական թագավորությունը, Սիս քաղաքում գտնվող Հայոց կաթողիկոսությունը հայտնվել էր անպաշտպան վիճակում: Վերջինիս դրությունն ավելի ծանրացավ, երբ 1426թ.

Լեռնային Կիլիկիայի Կոստանդին իշխանն իր հազարավոր հպատակներով ստիպված Կիլիկիայից տեղափոխվեց Կիպրոս: Ստեղծված պայմաններում հայ բնակչության և հոգևորականության մեծ մասի մեջ առաջացավ ***Ամենայն հայոց կաթողիկոսությունը*** կրկին ***Սուրբ Էջմիածին*** տեղափոխելու խնդիրը: Երևանը դարձել էր Արևելյան Հայաստանի քաղաքական ու վարչական կենտրոնը՝ դրանով իսկ հնարավոր դարձնելով կաթողիկոսության վերահաստատումն Էջմիածնում:

Էջմիածնում «թագավորական աթոռն ու կաթողիկոսական գավազանը» վերականգնելու խնդիրը բարձրացվել էր դեռևս XIII դ. վերջում պատմիչ ***Ստեփանոս Օրբելյանի*** կողմից: Նման ծրագիր են ունեցել նաև ***Հովհան Որոտնեցին*** և ***Գրիգոր Տաթևացին***: Պատճառն այն էր, որ Կիլիկիայի հոգևոր գործիչների մեծ մասը տրամադիր էր միաբանվելու Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետ՝ ակնկալելով նրա օժանդակությունը: Նրանք սին հույսեր էին փայփայում, որ կաթոլիկ Եվրոպան հայերին կպաշտպանի մահմեդականների բռնաճնշումներից: Սիսի կաթողիկոսության արևմտամետ վարքագիծը ոչ միայն հարվածի տակ էր դնում Հայոց եկեղեցու ինքնուրույնությունը, այլև նրա և հայության պառակտման նախադրյալներ էր ստեղծում: Այդ պայմաններում հատկապես բուն Հայաստանի հոգևորականությունը հանդես եկավ Ամենայն հայոց կաթողիկոսությունը Սիսից Էջմիածին տեղափոխելու պահանջով: Կաթողիկոսության տեղափոխման գործը կազմակերպեցին ժամանակի եկեղեցական-մշակութային նշանավոր գործիչներ ***Թովմա Մեծոփեցին*** և ***Հովհաննես Հերմոնեցին***:

Նրանք ստացան հայ աշխարհիկ և հոգևոր գործիչների, այդ թվում նաև Աղթամարի կաթողիկոսի, ինչպես նաև Կիլիկիայի հոգևորականների մեծ մասի համաձայնությունը: 1440թ. ***Գրիգոր Մակվեցի*** կաթողիկոսին առաջարկվեց Սիսից տեղափոխվել Էջմիածին: Մերժում ստանալով՝ Թովմա Մեծոփեցին և Հովհաննես Հերմոնեցին 1441թ. հայ բարձրաստիճան հոգևորականների և աշխարհիկ իշխանների մասնակցությամբ, շուրջ 300 մարդ, Էջմիածնում ժողով հրավիրեցին՝ կաթողիկոսական ընտրություններ կազմակերպելու համար: Նրանք նախօրոք ստացել էին Այրարատյան նահանգի կուսակալ Յաղուբ բեկի համաձայնությունը: Ժողովը որոշեց Ամենայն հայոց կաթողիկոս ընտրել ***Կիրակոս Վիրապեցուն***: Շուրջ 1000 տարվա ընդմիջումից հետո Սուրբ Էջմիածնում վերահաստատվեց ***Ամենայն հայոց կաթողիկոսությունը***:

Այս իրադարձությունը ոչ թե սոսկ կրոնական-եկեղեցական բնույթ ուներ, այլ ձեռք էր բերում քաղաքական կարևոր նշանակություն: Նպատակը նաև պապականության և եվրոպական քաղաքական ազդեցությունից հայերին հեռու պահելն էր:

Էջմիածնում Ամենայն հայոց կաթողիկոսության վերահաստատումը ունեցավ մեկ այլ կարևոր նշանակություն. դարձավ աշխարհով մեկ սփռված հայությանը հայրենիքի հետ կապելու հզոր միջոց:

Գանձասարի վանքը

Հայոց եկեղեցու թեմերն ու աթոռները: Ամենայն հայոց կաթողիկոսության կարևոր կառույցներից էր ***Գանձասարի*** կաթողիկոսությունը, որի հոգևոր առաջնորդության ներքո էր Արցախի, Ուտիքի ու Արևելյան Այսրկովկասի հայությունը: Կաթողիկոսի նստավայրն էր ***Արցախի Գանձասարի վանքը***, որն ընդարձակ կալվածքներ ուներ: Գանձասարի կաթողիկոսությունը գոյատևեց մինչև XIX դ. սկզբները:

Հայոց եկեղեցու համակարգում կարևոր դեր ուներ ***Աղթամարի կաթողիկոսությունը*** (գտնվում էր Աղթամար կղզում): Վասպուրականի վանքերը վաղուց ի վեր հայտնի էին որպես գրի և գրչության խոշոր կենտրոններ: Այնտեղ պահվում էին հազարավոր ձեռագրեր: Աղթամարի կաթողիկոսությունն իր գոյությունը պահպանեց մինչև XIX դ. վերջերը:

Հայոց եկեղեցու պատմության մեջ կարևոր դեր է խաղացել ***Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությունը***, որը հիմնվեց 1461թ., քաղաքը թուրքերի կողմից գրավելուց շատ չանցած: Պատրիարքի հոգևոր իշխանությանն էին ենթարկվում Օսմանյան Թուրքիայի տարածքում ապրող հայերը: Պատրիարքության ստեղծման նպատակներից մեկը թուրքերի կողմից հայերին սիրաշահելն էր: Պատրիարքությունը գործում է մինչև օրս: Նա Թուրքիայի տարածքում ապրող հայերի շահերի պաշտպանն է պետության առջև և հայապահպանության երաշխիքն իր ուսումնագիտական, մշակութային և կրոնական գործունեությամբ:

Մեծ հեղինակություն ուներ ***Երուսաղեմի հայոց պատրիարքությունը***, որը տնօրինում էր Երուսաղեմի և նրա շրջավայրի հայության հոգևոր գործերը, հայոց եկեղեցիներն ու վանքերը, Քրիստոսի անվան հետ կապված սրբավայրերի մի զգալի մասը:

Ամենայն հայոց կաթողիկոսության՝ Էջմիածնում հաստատվելուց հետո իր անկախ գոյությունը սկսեց Կիլիկիայի կաթողիկոսական աթոռը՝ ***Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն*** անունով: Շատ չանցած՝ Կիլիկիո կաթողիկոսներն ընդունեցին Ամենայն հայոց կաթողիկոսի գերագահությունը:

ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑԻՆ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԸ ԷՋՄԻԱԾԻՆ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԿԻՐԱԿՈՍ ՎԻՐԱՊԵՑՈՒ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ապա մեծ ուրախությամբ գնացինք Դարոյնք գավառը և Մապացուրն՝ Ակոռի: Եվ այնտեղից մտանք... Խոր վիրապ, իսկ այնտեղից՝ Գեղարդ, այնուհետև եկանք Երևան գյուղաքաղաքը:

Այստեղ տեսնել էր պետք մեր ամբողջ ազգի ուրախությունն ու ցնծությունը. զանգակների փողն էր հնչում, երիտասարդները գոչում էին, ծերերն աղաղակում էին և ցնծությամբ օրհնում Աստծուն, մանուկները խայտում էին, կանայք երկրպագությամբ ու լալով բոլորին զարհուրանք էին պատճառում, իսկ անօրենները նայելով զարմանում էին:

...Իսկ մյուս օրը Աղուպ բեկ կոչված բռնապետից հրաման եկավ, և գնացինք նրա մոտ, և նա որպես քրիստոնյաների թագավոր սիրով ու պատվով ընդունեց մեզ: Մյուս օրը վերցրեց իր զորքը և մեզ բոլորիս, փող ու թմբուկով և զուռնայով, բարձր գոչյունով մտանք Սուրբ Վաղարշապատ քաղաքը: Եվ Քրիստոսի հավատացյալներն ու հավատարիմ ժողովուրդը, և՛ անհավատները, ընդառաջ ելնելով՝ զարմանում էին:

...Եվ բռնապետը հրամայեց կաթողիկոս օրհնել առանց հակառակության: Եվ եղբայրներից (հոգևորականներից) շատերս առաջ կանչվեցինք գալու Թորգոմյան գահի առաջնորդության, և չէինք ցանկանում մտնել բարձրագույն աստիճանի դառն ծանրության տակ:

...Եվ դարձյալ նույն օրը Սուրբ Ավետարանով ձեռնադրության օրհնության վիճակ գցեցին, և վիճակվեց Կիրակոս հայրապետին: Եվ նա առանց հակառակության եկավ կանգնեց ահեղ ատյանի մեջ: Եվ մենք հիացած զարմացանք Աստծո այրի հնազանդությանը և իր կամքից հրաժարվելուն, որովհետև խիստ անհնազանդ էր բարքով և ատում էր երկրային փառքը»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձեր կարծիքով՝ ինչ դեր ունի Հայոց եկեղեցին մեր ժողովրդի կյանքում:
2. XV դ. ինչ կաթողիկոսական ու պատրիարքական աթոռներ ուներ Հայոց եկեղեցին: Նշեք, թե դրանցից որոնք են շարունակում գործել մինչ օրս:
3. Փորձեք գնահատել Ամենայն հայոց կաթողիկոսությունն Էջմիածնում վերահաստատելու պատմական նշանակությունը: Ինչ գրավոր վկայություններ կան այդ մասին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• **Թովմա Մեծոփեցի • Հովհաննես Հերմոնեցի • Յաղուբ բեկ • Հայոց կաթողիկոս Կիրակոս Վիրապեցի • Գանձասարի կաթողիկոսություն, Աղթամարի կաթողիկոսություն, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն • Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն • Երուսաղեմի հայոց պատրիարքություն**

10-րդ թեմայի ամփոփում

1. XV դ. Հայաստանը գտնվում էր թուրքմեն կարա-կոյունլուների և ակ-կոյունլուների տիրապետության տակ: Նրանց հաճախակի պատերազմների հետևանքով Հայաստանը տնտեսապես ավելի էր քայքայվում: Ժողովուրդը գտնվում էր ծայրահեղ անապահով վիճակում: Կողոպուտը, թալանը և գերեվարությունը սովորական երևույթ էին:
2. Թուրքմեն տիրակալներից ոմանք իրենց համար սոցիալական հենարան ապահովելու նպատակով որոշ իրավունքներ ու արտոնություններ էին շնորհում հայ իշխանական տների շառավիղներին: Հաճախ սիրաշահում էին նաև Հայոց եկեղեցուն՝ նրա կալվածքները հարկերից ու տուրքերից ազատ հայտարարելով:
3. Օտարի տիրապետության պայմաններում, երբ բացակայում էր հայոց պետականությունը, ավելի էր կարևորվում Հայոց եկեղեցու ազգապահպան դերը: Այս առումով մեծ նշանակություն ունեցավ 1441թ. Ամենայն հայոց կաթողիկոսական աթոռն Էջմիածնում վերահաստատելը:
4. Ակ-կոյունլուների սուլթան Ուզուն-Հասանը, 1468թ. հաստատելով իր տիրապետությունը Հայաստանում և Պարսկաստանում, փորձ արեց կանխելու երկրի տնտեսական անկումը: Նա մի շարք բարեփոխումներ կատարեց՝ աշխուժացնելու տնտեսությունը, որոշ չափով թեթևացնելու հպատակ ժողովուրդների ծանր վիճակը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹՈՒՐՔ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋԵՎ

Քաղաքական դրությունը Մերձավոր Արևելքում XVI դարում: XV դ. վերջում և XVI դ. սկզբում տարածաշրջանի քաղաքական ասպարեզում հայտնվեցին նոր ռազմաքաղաքական ուժեր: Դրանցից մեկը Սեֆյան Պարսկաստանն էր, իսկ մյուսը՝ Օսմանյան Թուրքիան:

XV դ. վերջում ակ-կոյունլուների պետությունը խիստ թուլացավ, որից օգտվեցին Ատրպատականի Արդաբիլ քաղաքում ու շրջակա տարածքում իշխող Սեֆյանները: Սեֆյանների հենարանը *ղզլբաշական (կարմրագդակների)*[1] քոչվոր ցեղերն էին: Սրանք պայքար սկսեցին ակ-կոյունլուների դեմ՝ հենվելով բնակչության լայն օժանդակության վրա: Սեֆյանների առաջնորդ *Իսմայիլին* հաջողվեց 1502թ. *Շարուրի դաշտի* վճռական ճակատամարտում հաղթանակ տանել ակ-կոյունլուների դեմ: Իսմայիլը Թավրիզում իրեն հռչակեց պարսից շահ: Այս նոր պետության մեջ մտան Պարսկաստանը, Միջագետքը, Ատրպատականը, Հայաստանն ու Վրաստանը:

Դեռևս XIII դ. վերջում Փոքր Ասիայի արևմուտքում ձևավորվել էր *Օսմանյան Թուրքիան*, որը հիմնադրել էր Միջին Ասիայից գաղթած և Փոքր Ասիայում հաստատված թուրքական մի ցեղախումբ: Նրա առաջնորդներից *Օսմանը*, օգտվելով քաղաքական նպաստավոր պայմաններից, 1299թ. իրեն անկախ հայտարարեց և հիմք դրեց *Օսմանյան պետությանը*: Ավելի ուշ նրա հետնորդները նվաճեցին Բալկանյան թերակղզու մեծ մասը, ապա՝ Փոքր Ասիան:

1453թ. թուրքերը գրավեցին *Կոստանդնուպոլիսը* և վերջ տվեցին Բյուզանդական կայսրության գոյությանը: Նրանք շուտով տեր դարձան կայսրության տարածքներին, այդ թվում՝ Սև ու Միջերկրական ծովերի նավահանգստային խոշոր քաղաքներին: Սեֆյան Պարսկաստանի հետ Թուրքիայի բախումը դարձավ անխուսափելի:

1514թ. օսմանյան սուլթան *Սելիմ Ահեղը* սկսեց իր արշավանքը Սեֆյան պետության դեմ: Նրա զորքն անցավ Եփրատ գետը և շարժվեց դեպի Հայաստանի խորքեր: Շահ Իսմայիլը խուսափում էր վճռական ճակատամարտից, սակայն թուրքերը ստիպեցին պարսիկներին՝ Ուրմիո լճից ոչ հեռու, Չալդրան կոչվող վայրում, ճակատամարտ տալ: Թուրքերի հաղթանակը կատարյալ էր: Նրանք տեր դարձան Հայաստանի մեծ մասին, իսկ շուտով՝ նաև Սիրիային, Միջագետքին և Եգիպտոսին: Հայաստանի արևելյան գավառները մնացին Սեֆյանների պետության կազմում:

1. Անունը ծագում է այդ ցեղերում ընդունված կարմիր գդակ կրելու սովորությունից:

Հետագայում պատերազմը, փոփոխակի հաջողությամբ, հիմնականում ընթանում էր Հայաստանի տարածքում: Կռիվներից մեծապես տուժեց հայ ժողովուրդը: Ավերվում էին Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, քայքայվում էր տնտեսությունը, գերեվարվում էր հայ բնակչությունը: Օգտվելով ստեղծված վիճակից՝ Հայաստան թափանցեցին քրդական նոր ցեղեր, որոնք բնակվեցին բերրի ու արոտավայրերով հարուստ տարածքներում:

1555թ. Ամասիայի հաշտությունը և Հայաստանի բաժանումը: 1550թ. պարսիկները մեծ բանակով հակահարձակման անցան: Վերջապես, 1555թ. Ամասիա քաղաքում կողմերը հաշտություն կնքեցին: Պայմանագրի համաձայն՝ Օսմանյան Թուրքիային անցան Փոքր Հայքը, Բարձր Հայքը, Ծոփքը, Աղձնիքը, Տուրուբերանը և մի շարք այլ երկրամասեր: Պարսկաստանին մնացին Այրարատը, Գուգարքը, Վասպուրականը, Սյունիքը, Արցախը և Ուտիքը: Այս բաժանմամբ Օսմանյան Թուրքիային անցավ ***Արևմտյան Հայաստանը***, իսկ պարսիկներին՝ ***Արևելյան Հայաստանը:***

1578թ., օգտագործելով Պարսկաստանում սկիզբ առած գահակալական կռիվները, թուրքերը վերսկսեցին պատերազմը և ***Չղդիր լճի*** մոտ պարտության մատնեցին պարսիկներին: Պատերազմը շարունակվեց նաև հետագա տարիներին և ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի համար: Դրան գումարվեց նաև սովը, որին զոհ գնացին մեծ թվով մարդիկ:

Թուրքերը 1590թ. պարսիկներին հարկադրեցին հաշտություն կնքել, որով Հայաստանն ամբողջությամբ և Այսրկովկասն ու Ատրպատականի մեծ մասը՝ Թավրիզ քաղաքով, անցան Օսմանյան տերությանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպիսին էր քաղաքական դրությունն Առաջավոր Ասիայում XVI դ. սկզբում: Պատմե՛ք Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի ձևավորման մասին:
2. Օսմանյան Թուրքիան ե՞րբ պատերազմ սկսեց Հայաստանին տիրելու համար:
3. Ե՞րբ տեղի ունեցավ Հայաստանի առաջին բաժանումը Պարսկաստանի և Թուրքիայի միջև:
4. Ամասիայի պայմանագրով ի՞նչ նահանգներ անցան Օսմանյան կայսրությանը, և որո՞նք մնացին Պարսկաստանին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• **Սեֆյան Պարսկաստան, Օսմանյան Թուրքիա • Ղզլբաշներ (կարմրագդակներ) • շահ Իսմայիլ • Օսման • Սելիմ Ահեղ • Չալդրան • Չղդիր լիճ • Ամասիայի հաշտություն**

2. ՀԱՅԱՍՏԱՆԸ XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ԹՈՒՐՔ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Շահ Աբասի արշավանքները: Պարսկաստանում գահ բարձրացած շահ ***Աբաս I-ը*** (1587–1629թթ.) 1590թ. հաշտությունն օգտագործեց իր բանակը վերակազմավորելու համար: Նա կարողացավ կարճ ժամանակում վերջ տալ ներքին հուզումներին և ուժեղացնել կենտրոնական իշխանությունը:

Շահը հատուկ ուշադրություն դարձրեց պետության տնտեսական զարգացմանը՝ խրախուսելով ներքին ու արտաքին առևտուրը: Մետաքսի վաճառքը հայտարարվեց պետական մենաշնորհ:

Շահ Աբաս I

Շահ Աբասը անգլիացիների օգնությամբ վերակազմեց պարսից բանակը: Եվրոպականի նմանությամբ ստեղծվեց նոր, մշտական բանակ: Սկսեցին օգտագործել հրետանի: Մտցվեց զինվորական հատուկ ուսուցում: Այդ բոլորը նպաստեցին Պարսկաստանի ռազմական հզորացմանը:

Դրան հակառակ՝ XVI դ. 90-ական թթ. Օսմանյան Թուրքիայի արևելյան նահանգներում՝ Անատոլիայում, բռնկվեցին խռովություններ: Տեղի էին ունենում գյուղացիական ապստամբություններ: Օսմանյան պետությունը երկար ժամանակ ի վիճակի չէր ճնշելու այդ խռովությունները: XVII դ. սկզբում գահակալական կռիվներ սկսվեցին, որոնցից Օսմանյան պետությունը խիստ թուլացավ:

Ստեղծված վիճակից օգտվեց շահ Աբասը: 1603թ. սկսվեց թուրք-պարսկական հերթական պատերազմը: Պարսկական բանակը հեշտությամբ գրավեց Թավրիզը, ապա, անցնելով Երասխը, շարժվեց դեպի Նախիջևան: 1604թ. գարնանը պարսիկները գրավեցին Ջուղան, Նախիջևանը և պաշարեցին Երևանը: Ճանապարհին շահը մտավ ***Ջուղա***, որի բնակիչները նրան ճոխ ընդունելության արժանացրին:

Երևանի պաշարումը տևեց ինն ամիս: Թուրքերը համառորեն դիմադրում էին: Հայերը շահագրգռված չէին թուրքերի համար կռվելու պարսիկների դեմ, հանգամանք, որը շահավետ եղավ պաշարողներին: Վերջապես Երևանի բերդը հանձնվեց:

Հայերի բռնագաղթը Պարսկաստան: 1604թ. ամռանը օսմանյան բանակն անցավ հակահարձակման: Թուրքերն Էրզրումից (Կարին) շարժվեցին դեպի Կարս և Շիրակ: Շահ Աբասը որոշեց ճակատամարտ չտալ և նահանջել: Նա վճռեց թշնամու բանակի հարձակման ուղղությամբ ամայացնել երկիրը, իսկ

հայ բնակչությանը բռնագաղթեցնել Պարսկաստան: Դրանով շահ Աբասը զրկում էր թշնամուն պարենավորվելուց, ինչի հետևանքով թուրքերի առաջխաղացումը կդժվարանար: Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթը նաև նպատակ ուներ, հայ բնակչությանը տանելով Պարսկաստան, զարկ տալ իր երկրի տնտեսական զարգացմանը: Հայ առևտրականները, որոնք հատկապես աչքի էին ընկնում մետաքսի առևտրում, մեծ եկամուտ կբերեին պարսից գանձարանին:

Պարսկական բանակը նահանջում էր Արարատյան դաշտով, Երասխի հոսանքի ուղղությամբ: Առջևից նրանք Պարսկաստան էին քշում Արարատյան դաշտում իրենց կուտակած ամբողջ բնակչությանը: Պարսից զինվորները Կարսից մինչև Ջուղա ընկած տարածքում այրում էին ամեն ինչ, ոչնչացնում տեղահանված բնակչության տները, ունեցվածքը, պարենը, անասնակերը, որպեսզի դրանք թուրքերի ձեռքը չընկնեն: Հայաստանը վերածվեց անապատի: Բռնագաղթից ազատվեց միայն Սյունիքի և Արցախ-Ուտիքի հայությունը, որը հեռու էր ռազմաճակատի գծից:

Հայ առևտրական

Պարսկական բանակը, հետապնդվելով թուրքերից, շտապում էր ժողովրդին օր առաջ անցկացնել Երասխի մյուս ափը: Ի վերջո, մեծ կորուստների գնով Ջուղա հասած ժողովուրդը պարսկական բանակի հետ անցավ Երասխը: Դրանից հետո թուրքական բանակը մտավ Նախիջևան:

Գաղթող բնակչության համար ամենադժվար վիճակն ստեղծվեց Երասխն անցնելիս: Եղած կամուրջներն ու մյուս միջոցները գետանցի համար բավարար չէին: Շահի հրամանով զորքը ստիպում է ժողովրդին լցվել գետը և լողալով անցնել մյուս ափ: Մարդիկ լցվում են ջուրը: Ով կարողանում է լողալ, հասնում է մյուս ափ: Իսկ մյուսները, հատկապես ծերերն ու երեխաները, կանայք ու հիվանդները, խեղդվում են գետի ջրերում:

Գաղթեցվեցին նաև ***Ջուղայի*** բնակիչները, որոնք փառահեղ ընդունելություն էին ցույց տվել շահ Աբասին: Ինչքան էլ պարսիկները ջանային տեղահանել ամբողջ բնակչությանը, այնուամենայնիվ շատերին հաջողվեց խուսափել՝ թաքնվելով լեռներում, անտառներում, քարայրերում և այլուր:

Գաղթականների մի մասին, հիմնականում գյուղացիներին, տեղափոխեցին Սպահան քաղաքի շրջակա գավառներ, իսկ Ջուղայի առևտրականներին շահի հրամանով թույլատրեցին բնակվել ***Սպահանում:*** Նրանք կառուցեցին իրենց առանձին թաղամասը և անվանեցին ***Նոր Ջուղա***:

Շահ Աբասի կատարած բռնագաղթը հայ ժողովրդի գլխին եկած մեծագույն չարիքներից էր: Հայաստանից տեղահանվեցին և Պարսկաստան քշվեցին ավելի քան 300 հազար հայեր:

Հայաստանի նոր բաժանումը: 1605թ. պատերազմական գործողություններն Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև շարունակվում էին: Վճռական ճակատամարտում թուրքական բանակը պարտվեց: Բայց դրանով պատերազմը չավարտվեց ու շարունակվեց ևս շուրջ 30 տարի: Հաջողությունն ուղեկցում էր մերթ պարսիկներին, մերթ՝ թուրքերին: Երկու դեպքում էլ գործողությունների թատերաբեմը հիմնականում Հայաստանն էր, իսկ տուժողն ու թալանվողը՝ հայ ժողովուրդը:

Երբ թուրքերին հաջողվեց 1638թ. գրավել Բաղդադը, պարսիկները հաշտություն առաջարկեցին: 1639թ. Դիարբեքիրի մոտ՝ Կասրե-Շիրինում նրանց միջև հաշտություն կնքվեց: Շուրջ 80 տարի խաղաղություն հաստատվեց: Պայմանագրով Հայաստանը կրկին վերաբաժանվեց Օսմանյան Թուրքիայի և Պարսկաստանի միջև: Այս անգամ սահմանն անցնում էր ***Սիսուրյան գետով մինչև Երասխ, ուղիղ գծով շարունակվում մինչև Հայկական Պարի բարձունքներ, Մեծ ու Փոքր Մասիսների միջով թեքվում դեպի հարավ և, Վասպուրականը բաժանելով երկու մասի, հասնում Միջագետք՝ Վանը թողնելով թուրքերին***:

Պարսկաստանին անցած Արևելյան Հայաստանի մեջ մնացին Գուգարքը, Շիրակը, Արարատյան դաշտը, Սյունիքը, Արցախը, Ուտիքը, Պարսկահայքը և Վասպուրականի մի մասը: Իսկ թուրքերին անցան դրանցից արևմուտք ընկած հայկական տարածքները՝ Կարս, Վան, Էրզրում (Կարին) նշանավոր քաղաքներով: Հիշյալ սահմանագիծը պահպանվեց մինչև XIX դ. սկզբները:

Հայկական իշխանությունները ուշ միջնադարում: Հայաստանին տիրած բոլոր նվաճողներն էլ աշխատել են ոչնչացնել հայ իշխանական դասն ու հայկական իշխանությունները: Չնայած դրան՝ նրանց մի մասին հաջողվել է գոյությունը պահպանել Հայաստանի լեռնային անառիկ շրջաններում և գոյատևել մինչև XIX դ. սկզբները:

Հայ ավատատերերից ոմանք հպատակվել են նվաճողներին և պահպանել իրենց գոյությունը: Իսկ մյուսները, չդիմանալով նվաճողների ճնշումներին, արտագաղթել են երկրից: Հայ իշխանավորներից ոմանք էլ իրենց սեփական տիրույթները փրկելու համար դրանք կամովին հանձնել են եկեղեցուն, իսկ իրենք ընդունել հոգևոր աստիճան: Նրանք հայտնի են ***պարոնտեր*** անունով:

Հայ իշխաններից ոմանք էլ, թեև ընդունել են նվաճողների գերիշխանությունը՝ հպատակվելով նրանց, աշխատել են ամեն գնով պահպանել իրենց ինքնավարությունը: Այդպիսի իշխանություններից էին Սյունիքի, Արցախի և Գեղարքունիքի ***մելիքությունները***, որոնց գլուխ կանգնած էին ***մելիքները:*** Դեռևս XVI դ. հայտնի են եղել Խաչենի և Վարանդայի մելիքությունները: Ավելի ուշ մելիքություններ են կազմակերպվել Գյուլիստանում, Ջրաբերդում,

Դիզակում ու Սյունիքի գավառներում: Մելիքներն Արցախի և Սյունիքի նախկին հայ իշխանական տների ժառանգներն էին, որոնց իրավունքներն ընդունեցին պարսից շահերը: Նրանք անմիջապես ենթարկվում էին շահին՝ նրան ճանաչելով որպես իրենց գերագույն իշխողի: Մելիքներն ունեին իրենց ամրոցը, զորքը և պաշտոնյաները: Մելիքի պաշտոնը ժառանգական էր, բայց մահացած մելիքի պաշտոնի ժառանգումը պիտի հաստատվեր շահի կողմից: Մելիքներն էին նշանակում և հավաքում հարկերն ու տուրքերը, ինքնակամ լուծում դատական բոլոր վեճերը: Գործում էր սովորութային իրավունքը, քանի որ դատավարության համար հստակ գրավոր օրենքներ չկային: Գյուղերում մելիքների իշխանությունն իրագործում էր ***կանուկները:*** Մելիքները պարտավոր էին շահական գանձարանին մուծել տարեկան նշանակված հարկի չափը, որը սահմանվում էր շահի կողմից: Նրանք ունեին ընդարձակ հողատարածքներ, որից ստացված եկամուտը միայն իրենք էին տնօրինում: Մելիքները հաճախ խառնվում էին նաև հոգևոր գործերին, միջամտում վանական հաստատությունների կամ նույնիսկ բարձրաստիճան հոգևորականների ներքին գործերին:

Արևմտյան Հայաստանում հայկական իշխանություններ էին պահպանվել Շատախում, Մոկսում, Սասունում, Զեյթունում, Համշենում և այլուր: Հայ ժողովրդի պատմության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Զեյթունը, որը գտնվում էր Կիլիկիայի դժվարամատչելի լեռնային մի վայրում: Այստեղ բնակվում էին 20-30 հազար հայեր: Մինչև XVII դ. նրանք չէին ենթարկվում Օսմանյան պետությանը: Միայն երկար պայքարից հետո զեյթունցիները համաձայնեցին Օսմանյան պետությանը հարկ վճարել՝ իրենց ներքին անկախությունը պահելու պայմանով: Ազատության այս կենտրոնն իր կիսանկախությունը պահպանեց մինչև XIX դ. 60-ական թվականները:

Հայկական ինքնավար այդ իշխանությունները հետագայում խոշոր նշանակություն ունեցան Արևելյան և Արևմտյան Հայաստանում՝ թուրքական և պարսկական տիրապետության դեմ մղած ազատագրական պայքարում: Դրանք դարձան հայ ազատագրական պայքարի զարթոնքի ու կազմակերպման կենտրոններ: Այդ իշխանությունները հայկական պետականության վերջին բեկորներն էին: Կնշանակի՝ ուշ միջնադարում հայոց պետականությունը վերջնականապես չէր վերացել: Այն հանդես էր գալիս կիսանկախ իշխանությունների, մելիքությունների ու սահմանափակ իրավունքներով օժտված լեռնային համայնքների ձևերով:

ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑԻՆ՝ ՇԱՀ ԱԲԱՍԻՆ ՑՈՒՅՑ ՏՐՎԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Զուղայի բոլոր բնակիչները... եկան շահին ընդառաջ, ինչպես վայել է թագավորին... Գեղեգրից մինչև խոջա Խաչիկի ապարանքը թագավորի ուղքերի տակ փռել էին գորգեր, թանկարժեք, մեծահարգի ու վայելուչ կերպասներ, որոնց

վրայով թագավորը անցավ գնաց խոջա Խաչիկի տուն: Իսկ այնտեղ՝ տանը, խոջա Խաչիկը, ոսկե սկուտեղը ոսկով լցրած տված իր որդու ձեռքը մատուցեց թագավորին. նույնպես և Ջուղայի բոլոր մեծամեծները ընծաներ մատուցեցին, ինչպես վայել է թագավորին: Շահը այնտեղ մնաց երեք օր, իսկ ջուղայեցիները պատվեցին նրան համադամ կերակուրներով ու ծաղկահամ գինիով»:

ԲՌՆԱԳԱՂԹԵՑՎԱԾ ՀԱՅԵՐԻ ԳԵՏԱՆՑԸ՝ ԸՍՏ ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ

«Պարսից անողորմ զորքերը ժողովրդին քշելով բերին հասցրեցին Արաքսի ափը և լցրեցին գետը: Սրանցից ոմանք բռնելով նավերի, ոմանք արկղերի եզրերից, ոմանք ձիերի, եզների ու գոմեշների պոչերից, ոմանք էլ ինքնուրույն լողալով անցնում էին գետը: Իսկ նրանք, որոնք լողալ չգիտեին կամ ուժ չունեին՝ ծերեր, պառավներ, մատղաշ մանուկներ՝ տղաներ, աղջիկներ, լցված էին ջրի երեսը, և գետը քշած տանում էր նրանց իբրև չոր ճյուղ գարնան ժամանակ: Գետափար մարդկանցով ծածկված էր գետի երեսը, թեպետ անցնողները անցան, բայց շատերը նրանք էին, որ ջրում խեղդվելով մեռան»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Թուրք-պարսկական պատերազմները ինչպես անդրադարձան հայ ժողովրդի վրա:
2. Ինչ հետևանքներ ունեցան շահ Աբաս I-ի արշավանքները: Ինչ նպատակով էր շահ Աբասը տեղահանում հայ բնակչությանը:
3. Երբ տեղի ունեցավ Հայաստանի երկրորդ բաժանումը:
4. Ինչու՞ էին օտար նվաճողները ձգտում ոչնչացնել հայ իշխանական տները:
5. XVI–XVII դդ. որտե՞ղ էին պահպանվել հայ իշխանական տները:
6. Մինչև ե՞րբ պահպանվեց Զեյթունի կիսանկախ վիճակը: Ինչո՞ւմ էր արտահայտվում այդ կարգավիճակը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• շահ Աբաս I • բռնագաղթ • Նոր Ջուղա • Կասրե-Շիրինի հաշտության պայմանագիր • մելիք • պարոնտեր • Խաչենի, Վարանդայի, Գյուլիստանի, Զրաբերդի, Դիզակի մելիքություններ • Զեյթունի հայկական իշխանություն

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Կարո՞ղ ենք ասել, որ ուշ միջնադարում հայոց պետականությունը վերջնականապես չէր վերացել: Ինչպե՞ս էր դա արտահայտվում: Բերե՞ք համապատասխան օրինակներ՝ հիմնավորելու ձեր տեսակետը:

3. ՊԱՅՔԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ XV–XVI ԴԱՐԵՐՈՒՄ

Հայկական պետականության վերականգնման փորձ XV դարում: Հայոց թագավորության անկումից հետո հայ ժողովուրդը երբեք չդադարեցրեց իր պայքարն անկախության վերականգնման համար: Այդ պայքարը երբեմն ընթացել է դիվանագիտական բանակցությունների ու քաղաքական երկխոսությունների միջոցով: Փորձեր են կատարվել դիմելու եվրոպական պետությունների օգնությանը: Անգամ փորձ կատարվեց դիմելու կարա-կոյունլու Ջհանշահին: Վերջինս մեղմ քաղաքականություն էր վարում քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ՝ ցանկանալով նրանց օգնությամբ վերականգնել երկրի ավերված տնտեսությունը, զարկ տալ առևտրին ու արհեստագործությանը: Ահա թե ինչու նա մինչև անգամ ընդառաջում է Աղթամարի կաթողիկոս Զաքարիա Սեֆեդինյան Աղթամարցու խնդրանքին՝ վերականգնելու ***Վասպուրականի թագավորությունը***: Աղթամարի կաթողիկոսներն իրենց սերված էին համարում Արծրունիների թագավորական ընտանիքից, քանզի Սեֆեդինյանները հեռավոր ազգակցական կապ ունեին Արծրունիների հետ: Ուստի պատահական չէր, որ ժամանակագիրը Զաքարիա կաթողիկոսին համարում էր «Գագիկ Արծրունի մեծ թագավորի արմատից և ցեղից»:

Սմբատ Սեֆեդինյանի թագադրությունը, 1465թ.

Զաքարիա Աղթամարցին որպես Հայոց թագավորի թեկնածուի առաջադրում է իր եղբորորդի ***Սմբատին***: Ջհանշահը տալիս է իր համաձայնությունը: 1465թ. սկզբներին Աղթամարի նոր կաթողիկոս Ստեփանոս Տղան Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում, հայոց մեծամեծների ներկայությամբ, հանդիսավորությամբ Սմբատին օծում է Հայոց թագավոր: Ժամանակակիցները մեծ ոգևորությամբ են արձագանքել այս իրողությանը. «***Եվ այնժամ պարոն Սմբատին օծեցին Հայոց թագավոր՝ իր նախնի Գագիկի օրինակով: Եվ թո՛ղ Ասպված զորացնի նրա թագավորությունը, բարձրացնի նրա աթոռը, բանզի վաղուց Հայոց ազգը թագավոր չէր տեսել***»: Անշուշտ, Սմբատի թագավորությունը ոչ միայն համահայկական չէր, այլև հեռու էր իսկական պետություն լինելուց: Նրա տարածքը սահմանափակվում էր միայն Աղթամար կղզու և Վանա լճի առափնյա որոշ տարածքով:

Որպես Հայոց թագավոր Սմբատ Սեֆեդինյանը հիշատակվում է մինչև 1471 թվականը:

Հայ վաճառական (նկ. Լեոնարդո դա Վինչիի, շուրջ 1487թ.)

Սմբատի թագավորությունը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հայ ազատագրական մտքի պատմության տեսակետից և ցույց է տալիս, որ հայկական պետականության վերականգնման գաղափարը մշտապես կենսունակ է եղել:

Հայ ազատագրական շարժումը XVI դարում: Հայ ազատագրական շարժման գործիչները համոզված էին, որ միայն սեփական ուժերով հնարավոր չէ ազատագրվել թուրք-պարսկական տիրապետությունից: Այն գաղափարն էր արմատացել, թե իբր մի եվրոպական հզոր քրիստոնյա պետություն պետք է ազատագրի հայ ժողովրդին: Սակայն հաճախ հստակ չէր, թե որն էր լինելու այդ ուժը, և ինչ ճանապարհներով էր Հայաստանն ազատագրվելու: Ազատագրական շարժման ղեկն իրենց ձեռքն են վերցնում հայ հոգևորականության լավագույն ներկայացուցիչները: Նրանք էլ Հայաստանի ազատագրության խնդրի վերաբերյալ հրավիրում են խորհրդաժողովներ:

Առաջին խորհրդաժողովը 1547թ. կազմակերպել է Հայոց կաթողիկոս ***Ստեփանոս Սալմաստեցին*** Էջմիածնում: Ժողովին մասնակցել են արևելահայ հոգևոր և աշխարհիկ բարձրաստիճան գործիչներ: Ժողովը որոշում է դիմել Հռոմի պապին, որը, ժողովականների համոզմամբ, պետք է կազմակերպեր Հայաստանի ազատագրումը: Կաթողիկոսի գլխավորությամբ կազմվեց պատվիրակություն, որը խնդրագիրը պետք է տաներ Եվրոպա՝ ներկայացնելու Վենետիկի հանրապետությանը և Հռոմի պապին: 1548թ. պատվիրակությունը բանակցություններ է վարում Վենետիկում, իսկ 1549թ.՝ Հռոմի պապի հետ: Բանակցությունները մեծ հետաքրքրություն են առաջացնում Հռոմում: Պապական արքունիքում հայերին հասկացրին, որ նրանք նախ պետք է հրաժարվեն հայոց դավանանքից և ընդունեն կաթոլիկություն, որից հետո միայն կարող է խոսք լինել Հայաստանի ազատագրության գործին օգնելու մասին: Հայոց կաթողիկոսը բանակցություններ է վարել նաև Գերմանիայի կայսեր, Պրուսիայի և Լեհաստանի թագավորների հետ, սակայն շոշափելի արդյունքի չի հասել: Ստեփանոս Սալմաստեցին Լեհաստանի, Արևմտյան Ուկրաինայի և Ղրիմի հայկական գաղթավայրերն այցելելուց հետո՝ 1552թ. ձեռնունայն վերադարձել է Հայաստան:

1562թ. Հայոց նոր կաթողիկոս ***Միքայել Սեբաստացին*** Սեբաստիայում հրավիրում է մեկ այլ գաղտնի ժողով, որի քննարկման առարկան դարձյալ Հայաստանի ազատագրության խնդիրն էր: Ժողովականները գտնում էին, որ պետք է նոր խնդրագիր ուղարկել Հռոմի պապին ու Վենետիկի հանրա-

պետությանը: Անհրաժեշտ էր նրանց համոզել, որ ձեռնամուխ լինեն Հայաստանի ազատագրության գործին:

Խնդրագիրը Եվրոպա տարավ բանիմաց և աշխարհ տեսած մի մարդ՝ ***Աբգար դպիր Եվդոկացին***: 1563թ. Աբգարը տեսակցել է Վենետիկի հանրապետության ղեկավարության, իսկ 1564թ.՝ Հռոմի պապի հետ: Հակառակ հայերի ակնկալիքներին՝ Հռոմի պապն այս անգամ էլ ոչ մի գործնական քայլ չձեռնարկեց Հայաստանի ազատագրության ուղղությամբ՝ պահանջելով միայն դավանաբանական զիջումներ: Կաթոլիկ Արևմուտքը պատրաստ չէր քաղաքական լուրջ երկխոսության. նրան առաջին հերթին հետաքրքրում էին դավանաբանական խնդիրները, Հայոց եկեղեցին Հռոմին ենթարկելը: Իսկ հայկական կողմն էլ Հայաստանի ազատագրության գործում, հույսը դնելով միայն եվրոպական օգնության վրա, թերագնահատում էր սեփական ուժերը:

Աբգար դպիր Եվդոկացի

Հայ ազատագրական շարժման այս առաջին քայլերը թեև ավարտվեցին անարդյունք, սակայն ճանապարհ բացեցին հայ-արևմտաեվրոպական հետագա բանակցությունների համար:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. XV դարում ինչ փորձ կատարվեց Հայոց թագավորությունը վերականգնելու:
2. Ձեր կարծիքով՝ ինչու էին հայ ազատագրական շարժման ղեկավարները փորձում Հայաստանն ազատագրել թուրք-պարսկական տիրապետությունից արևմտաեվրոպական պետությունների օգնությամբ:
3. Ինչու հայ ազատագրական շարժման ղեկավարությունն իր ձեռքը վերցրեց Հայոց եկեղեցին:
4. Ինչ որոշումներ ընդունեց Էջմիածնի 1547թ. խորհրդաժողովը, և Ստեփանոս Սալմաստեցու պատվիրակությունը ինչ բանակցություններ վարեց Եվրոպայում:
5. Ինչ արդյունքներ ունեցավ Միքայել Սեբաստացի կաթողիկոսի ուղարկած պատվիրակությունը Եվրոպայում:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• Սմբատ Սեֆեդինյան՝ Հայոց թագավոր • Ամենայն հայոց կաթողիկոսներ Ստեփանոս Սալմաստեցի, Միքայել Սեբաստացի • Աբգար Եվդոկացի • Վենետիկի հանրապետություն

11-րդ թեմայի ամփոփում

1. XVI դ. սկզբում Հայաստանը դարձավ թուրք-պարսկական պատերազմների թատերաբեմ: Պատերազմական գործողություններն ընթանում էին փոփոխական հաջողությամբ: 1555թ. կնքվեց Ամասիայի հաշտության պայմանագիրը, որով Հայաստանն առաջին անգամ բաժանվեց Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև: Հայաստանի արևմտյան մասն անցավ Օսմանյան Թուրքիային, իսկ արևելյանը մնաց Պարսկաստանին: 1639թ. Հայաստանը երկրորդ անգամ բաժանվեց հիշյալ տերությունների միջև:
2. Թուրք-պարսկական պատերազմներն աղետալի հետևանքներ ունեցան հայ ժողովրդի համար: Ավերվում և կողոպտվում էին հայկական բնակավայրերը, վանքերը, ոտնատակ էին արվում դաշտերն ու այգիները: Բնակչությունը բռնությամբ տեղահանվում և քշվում էր Պարսկաստանի ու Օսմանյան Թուրքիայի խորքերը:
3. Չնայած ծանր կացությանը՝ Հայաստանի լեռնային շրջաններում (Արցախ, Սյունիք, Շատախ, Մոկս, Սասուն, Զեյթուն) հայերը պահպանել էին իրենց ինքնավար իշխանությունները: Դրանց մեջ առանձնանում էր Զեյթունի իշխանությունը: Այդ ինքնավար իշխանությունները նշանակալից դեր խաղացին հայ ազատագրական պայքարում:
4. Հայոց թագավորության անկումից հետո հայ ժողովուրդը երբեք չդադարեցրեց իր պայքարը անկախության վերականգնման համար: Օգնության համար անգամ դիմել են կարա-կոյունլու Ջհանշահին: 1465թ. Ջհանշահի համաձայնությամբ Աղթամարի կաթողիկոս Ստեփանոս Տղան Հայոց թագավոր օծեց Սմբատ Սեֆեդինյանին:
5. XVI դ. Հայոց կաթողիկոսներ Ստեփանոս Սալմաստեցին և Միքայել Սեբաստացին գաղտնի ժողովներ գումարեցին. առաջինը՝ Էջմիածնում 1547թ., երկրորդը՝ Սեբաստիայում 1562թ.: Հայերը հույս ունեին պարսկա-թուրքական տիրապետությունից ազատագրվել Հռոմի պապի և Վենետիկի հանրապետության օգնությամբ: Եվրոպա ուղարկվեցին պատվիրակություններ, սակայն գործնական օգնություն այդպես էլ չստացվեց: Հռոմի պապը հայերից լոկ դավանաբանական զիջումներ էր պահանջում: Բանակցություններն ավարտվեցին անարդյունք, սակայն դրանք հող նախապատրաստեցին հայ ազատագրական պայքարի հետագա վերելքի համար:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/vvsh/

ԹԵՄԱ 12 ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ (XV Դ.–XVII Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

1. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ: ԴՊՐՈՑԸ: ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական մշակույթի զարգացման պայմանները: XV դարից մինչև XVII դ. կեսերը օտար տիրապետության և նվաճողական ավերիչ պատերազմների հետևանքով հայ ժողովրդի վիճակը խիստ ծանրացել էր: Տնտեսական հարստահարումները, կյանքի ու գույքի անապահովությունը և կրոնական հալածանքները շատերին ստիպում էին լքել երկիրը: Դրանց գումարվեց շահ Աբաս I-ի կազմակերպած բռնագաղթը: Այս ամենը խիստ բացասաբար էր անդրադառնում հայկական մշակույթի վրա: Պետականության ու խոշոր իշխանական տների բացակայության հետևանքով այն զրկվել էր զարգացման կարևոր պայմաններից: Պատահական չէ, որ այս շրջանում Հայաստանում որևէ բարձրարժեք ճարտարապետական կոթող չկառուցվեց:

Հայկական մշակույթի՝ արդեն XIV դ. սկսված հետընթացը խորացավ XV դ. և շարունակվեց մինչև XVII դ. սկզբները: Այդուհանդերձ՝ մշակութային հարուստ ավանդույթներ ունեցող հայ ժողովուրդը չդադարեց արարելուց: Մշակութային մնայուն արժեքներ ստեղծվեցին ինչպես բուն երկրում, այնպես էլ հայկական գաղթավայրերում: Ընդ որում, մշակույթը գաղթավայրերում նպաստավոր պայմանների շնորհիվ ավելի անկաշկանդ ու արգասավոր էր առաջադիմում:

Գրիգոր Տաթևացի

Դպրոցը: Մշակութային կյանքի անկումն առաջին հերթին անդրադարձավ դպրոցի վրա: Նախորդ շրջանում բեղուն գործունեություն ծավալած դպրոցները գրեթե մարեցին: Այդուհանդերձ՝ Տաթևի համալսարանն ուսուցչապետ Գրիգոր Տաթևացու շնորհիվ գոյատևում էր: Այն ուներ մասնագիտական երեք բաժիններ: Սաների թիվը մոտ 100 էր: Նրանք 6–7 տարի ուսանում էին ամենատարբեր առարկաներ: Վերջում պաշտպանում էին ավարտաճառեր ու ստանում վարդապետի գիտական կոչում: Գրիգոր Տաթևացու մահվանից (1409թ.) քիչ անց այս համալսարանի գործունեությունը դադարեց:

Շարունակում էր գործել նաև Մեծոփի դպրոցը Թովմա Մեծոփեցու գլխավորությամբ: Այնտեղ

87 von 98 12.02.2021, 11:04

ուսումնասիրվում էին գրականության, արվեստի ու գիտության գրեթե բոլոր ճյուղերը: Իր ուսուցչապետի մահվանից (1446թ.) որոշ ժամանակ անց այս դպրոցը ևս մարեց:

XV դ. գործում էին նաև Հերմոնի, Այրիվանքի, Հավուց թառի, Կապոսի վանքի դպրոցներն ու այլ ուսումնական հաստատություններ: Հայկական գաղթավայրերում XV դ. առավել հայտնի էր Ղրիմի Անտոնի վանքի հայկական դպրոցը: Այս դպրոցում մեծ ուշադրություն էր դարձվում փիլիսոփայության, տոմարագիտության, թվաբանության ու աստղաբաշխության ուսուցմանը:

XV դ. երկրորդ կեսից մինչև XVII դ. սկիզբը կրթական կյանքը խիստ հետադիմում է: Այն սկսում է աշխուժանալ XVII դ. սկզբներից: Բաղեշի Ամիրդոլու վանքին կից XVI դ. վերջին տասնամյակում բացվում է դպրոց: Այն արդյունաշատ գործունեություն է ծավալում: XVII դ. սկզբներին բացվում է Սյունյաց Մեծ անապատի դպրոցը: Նրա սաներն ուսումնառությունն ավարտելուց հետո կրթական հաստատություններ են հիմնում Հայաստանի տարբեր վայրերում: 1620-ական թթ. ստեղծվում է Հովհաննավանքի դպրոցը: Որոշ ժամանակ անց Փիլիպոս Ա Աղբակեցի կաթողիկոսն այն տեղափոխում է Էջմիածին: Սակայն Հովհաննավանքում կրթական գործը չի մարում:

Գաղթավայրերի դպրոցներից առավել աչքի ընկավ 1630-ական թթ. Նոր Ջուղայում բացված կրթական հաստատությունը: Ավելի քան կես դար գործած այս դպրոցը հիմնականում պատրաստում էր առևտրական ասպարեզին պիտանի կադրեր: Պատահական չէ, որ դպրոցի ուսուցիչ Կոստանդ Ջուղայեցին կազմել է թվաբանության դասագիրք՝ վաճառականներին ուղղված հաշվապահական խորհուրդներով: Բոլոր դպրոցներն ունեցել են մատենադարաններ: Շատերն էլ եղել են գիտության, մշակույթի ու գրչության կենտրոններ: Դրանցում ստեղծվել են բազմաթիվ տարաբնույթ երկեր, ընդօրինակվելով՝ փրկվել կամ բազմացվել են շատ ու շատ ձեռագրեր: Հայաստանում ու գաղթավայրերում գործում էին նաև տարրական նախակրթարաններ: Դրանցից մի քանիսը երկսեռ էին:


Ուրբաթ
Ուրբաթաւր. կամ հորէ շա
բթի. տանին զհինանդնիդ ուռ
նեկէղեցոյս: Եւ ասէ զհարցի
հաղորդանամ ինչ և ի գործ ն: Եւ
ապայասէ նոտասու Էրկու տրո
ղրմեայ. և ասէ զաղաւնեա.
արդամ քառքէզհայ
ր տամերոյ յի քի. տոր
զաւրունեանց. որը
զգալանկապէցէր:
և զդիւացի խանունեի հադատ
ապարտեցեր: Մ Էշեսդուտր.
և ամպատուս յուսացէլոցսիքէզ
Ը զկալզաղաչանաժույիցքոց.
և զաղաչանայից. Էս ոստոգանի
ա. բ.

«Ուրբաթագիրք»

Տպագրությունը. Հակոբ Մեղապարտ: Հայկական գիտամշակութային կյանքում տպագրական գործի սկզբնավորման դերը խիստ մեծ է: Հայկական տպագրական գործի հիմնադիրը Հակոբ Մեղապարտն է: Նա Վենետիկում հիմնում է տպարան և 1512թ. լույս ընծայում հայերեն առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը»: Այնուհետև Հակոբ Մեղապարտը տպագրում է ևս մի քանի գրքեր, որոնցից չորսն են մեզ հասել:

Ավելի քան կես դար անց Հակոբ Մեղապարտի գործը շարունակում է Աբգար Եվդոկացին: Նա իր որդի Սուլթանշահի օգնությամբ, նույնպես Վենետիկում, 1565-1566թթ. տպագրում է երկու գիրք: Ապա Աբգար Եվդոկացին տպարանը փոխադրում է Կոստանդնուպոլիս, որտեղ հրատարակում է մի քանի գիրք:

XVII դ. առաջին կեսին հայ տպագրությունը զգալի վերելք ապրեց: Տպագրության կենտրոններ դարձան Լվովը, Լիվոռնոն ու Նոր Ջուղան:

Խաչատուր Կեսարացու ղեկավարությամբ 1638թ. Նոր Ջուղայում հիմնվում է հայկական տպարան: Այն առաջինն էր Պարսկաստանում Ընդ որում, տպագրական սարքերը պատրաստել էին տեղի հայ վարպետները: Այդ ժամանակաշրջանում Հայաստանում, պայմանների բացակայության պատճառով, տպարան չստեղծվեց:

2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ

Գիտությունը: Չնայած խիստ անբարենպաստ պայմաններին՝ գիտական կյանքը չմարեց: Այն հարատևեց հատկապես շնորհիվ Տաթևի համալսարանի և Մեծոփի, Ամիրդոլու վանքի ու Սյունյաց Մեծ անապատի բարձրագույն դպրոցների: Ի հայտ եկան նշանավոր մտածողներ, որոնք հարստացրին հայկական գիտական միտքը: Հաջողությունները զգալի էին հատկապես փիլիսոփայության, բնագիտության, բժշկագիտության, տոմարագիտության ու պատմագրության բնագավառներում:

Գրիգոր Տաթևացին իր հանրագիտարանային բնույթի երկհատոր «Հարցմանց գրքում» զարգացրեց միջնադարյան հայ բնափիլիսոփայությունը: ***Մատթեոս Ջուղայեցին*** ընդլայնեց բնական երևույթների մասին եղած պատկերացումները: ***Հակոբ Դրիմեցին*** իր աշխատություններում մատչելի լեզվով քննել է բնագիտական բազմաթիվ հարցեր: Այդ պատճառով էլ դրանք իբրև բարձրագույն դպրոցների դասագիրք էին ծառայում:

Ամիրդովլաթ Ամասիացին նշանավոր բժշկագետ ու կենսաբան էր: Նա բազմակողմանի զարգացած էր և տիրապետում էր մի քանի լեզուների: Ամիրդովլաթ Ամասիացին օսմանյան սուլթանի անձնական բժիշկն էր: Նա ժամանակի խոսակցական լեզվով հեղինակել է շուրջ մեկ տասնյակ գիտական աշխատություններ: Դրանցից հատկապես արժեքավոր է «Օգուտ

բժշկության» գիրքը: Ամիրդովլաթ Ամասիացին նաև նկարագրել է իր օգտագործած դեղանյութերի ու բույսերի հատկությունները: Նշանավոր կենսաբան էր ***Արրահամ Պոլսեցին***:

Պատմագրության բնագավառում աչքի ընկան Թովմա Մեծոփեցին, Գրիգոր Դարանաղցին և Առաքել Դավրիժեցին: ***Թովմա Մեծոփեցին*** իր «Պատմության» մեջ նկարագրել է Լենկթեմուրի արշավանքները և Հայաստանի ու հարևան երկրների պատմությունը: ***Գրիգոր Դարանաղցու*** «Ժամանակագրությունը» կարևոր տեղեկություններ է հաղորդում Հայաստանի, Թուրքիայի և հայկական գաղթավայրերի պատմության մասին: Առավել ականավոր պատմիչ էր ***Առաքել Դավրիժեցին***: Նրա «Պատմության» հիմնական նյութը Հայաստանի և հարևան երկրների XVII դ. առաջին կեսի պատմությունն է:

Արվեստը: Տնտեսական ու քաղաքական ծանր պայմանները խիստ բացասաբար էին ազդում նաև արվեստի վրա: Հարատևում ու զարգանում էին արվեստի այն ճյուղերը, որոնք նյութական մեծ միջոցներ չէին պահանջում:

Դրանցից էր մանրանկարչությունը: Ճիշտ է, այն չպահպանեց նախորդ շրջանի մակարդակը: Ստեղծվեցին գեղարվեստական մեծարժեք մանրանկարներ նաև աշխարհիկ թեմաներով: Մանրանկարիչները հաճախ պատկերում էին ձեռագրի պատվիրատուին, իրենց կամ էլ պատմական նշանավոր դեմքերի (Գրիգոր Լուսավորիչ, Գրիգոր Նարեկացի և ուրիշներ): Մանրանկարչության ակնառու դեմքեր էին Գրիգոր Տաթևացին և հատկապես վերջին խոշոր հայ մանրանկարիչ ***Հակոբ Ջուղայեցին***: Հայ գրատպության զարգացմանը զուգընթաց մանրանկարչական արվեստը խամրեց:

Բարձրաշխարհիկ հայուհի (ըստ Չեզարե Վիչելլիոյի, 1590թ.)

Շարունակում էր առաջադիմել գորգագործական արվեստը: Հատկապես հռչակված էին վիշապագորգերը, որոնք արտահանվում էին ինչպես շրջակա, այնպես էլ հեռավոր երկրներ: Վերելք էր ապրում նաև ասեղնագործությունը:

Զարգանում է նաև փայտի գեղարվեստական փորագրությունը: Այդ արվեստի բարձր մակարդակի վկայությունն է Սևանի Առաքելոց վանքի համար 1486թ. պատրաստված դուռը:

XV դ. անկում ապրած խաչքարագործությունը XVI դ. սկզբներից բռնեց վերելքի ուղին: Խաչքարերն այժմ արդեն գերազանցապես օգտագործվում էին իբրև տապանաքարեր: Բարձրարվեստ խաչքարերով հայտնի էին Նորատուսի և Հին Ջուղայի գերեզմանոցները: Տաղանդավոր խաչքարագործ էր Նորատուսում ստեղծագործած *Քերամը*:

Ջուղայի խաչքարերից

Այսպիսով՝ չնայած Հայաստանում տիրող տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններին, հայկական մշակույթը ոչ միայն հարատևեց, այլև, մեծ դժվարություններ հաղթահարելով, մնայուն արժեքներ կերտեց:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպիսին էին հայ մշակույթի զարգացման պայմանները XV դ. - XVII դ. կեսերին:
2. Գաղթավայրերի դպրոցներից առավել բեղուն գործունեությամբ ո՞րն աչքի ընկավ:
3. Հակոբ Մեղապարտի գործն ո՞վ շարունակեց:
4. Գիտությունը ո՞ր բարձրագույն դպրոցների շնորհիվ հարատևեց:
5. Հայաստանում արվեստի հատկապես ո՞ր ճյուղերն էին զարգանում:
6. XV դ. - XVII դ. կեսերին գիտության ու արվեստի ի՞նչ ներկայացուցիչներ են հայտնի:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Տետրում գծեք աղյուսակ և լրացրեք՝ մի կողմում գրելով պատմագրի անունը, իսկ մյուս կողմում՝ նրա հեղինակած երկի վերնագիրը

Անուն	Վերնագիր

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐ

• **Մեծոփի, Հերմոնի, Այրիվանքի, Հավուց թառի, Անտոնի վանքի, Սյունյաց Մեծ անապատի, Ամիրդոլու վանքի, Հովհաննավանքի, Կապոսի վանքի, Նոր Ջուղայի դպրոցներ • Հակոբ Մեղապարտ •**

Աբգար Եվդոկացի • Սուլթանշահ • Խաչատուր Կեսարացի • Մատթեոս Ջուղայեցի • Հակոբ Ղրիմեցի • Ամիրդովլաթ Ամասիացի • Թովմա Մեծոփեցի • Փիլիպոս Ա Աղբակեցի • Գրիգոր Դարանաղցի • Առաքել Դավրիժեցի • Աբրահամ Պոլսեցի • Հակոբ Ջուղայեցի • վիշապագորգ • Լվով • Լիվոռնո • Քերամ

12-րդ թեմայի ամփոփում

1. XV դ. – XVII դ. կեսերն ընկած ժամանակահատվածում պատերազմների, օտար տիրապետության և տնտեսական հարստահարումների հետևանքով հայկական մշակույթը հետընթաց ապրեց: Այդուհանդերձ՝ մշակութային դարավոր ավանդույթներ ունեցող հայ ժողովուրդը չդադարեց արարելուց:
2. Մշակութային մնայուն արժեքներ ստեղծվեցին ինչպես բուն երկրում, այնպես էլ հայկական գաղթավայրերում: Ընդ որում, համեմատաբար նպաստավոր պայմանների շնորհիվ հայկական մշակույթը գաղթավայրերում ավելի անկաշկանդ ու բեղուն էր զարգանում:
3. Այս պատմաշրջանի հայկական մշակույթի կարևոր նվաճումը 1512թ. Վենետիկում Հակոբ Մեղապարտի կողմից հայկական տպագրության սկզբնավորումն էր: Վանքերին կից գործող ուսումնական հաստատություններում զարգանում էին գիտության ու արվեստի որոշ ճյուղեր: Նվաճումները զգալի էին հատկապես փիլիսոփայության, բնագիտության, տոմարագիտության, պատմագրության, մանրանկարչության, գորգագործության և խաչքարագործության բնագավառներում:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1042-1045թթ.	Գագիկ II:
1045թ.	Բագրատունյաց թագավորության անկումը:
1047թ.	Սելջուկ-թյուրքերի առաջին արշավանքը:
1048թ.	Սելջուկ-թյուրքերի երկրորդ արշավանքը:
1054թ.	Սելջուկ-թյուրքերի երրորդ արշավանքը:
1064թ.	Սելջուկ-թյուրքերի գլխավոր արշավանքը Հայաստան և Վրաստան:
1071թ.	Մանազկերտի ճակատամարտը:
1080թ.	Ռուբինյանների իշխանության հիմնադրումը Լեռնային Կիլիկիայում:
1080-1095թթ.	Ռուբեն Ի՝ Կիլիկիայի հայոց իշխան:
1095-1100թթ.	Կոստանդին I:
1100-1129թթ.	Թորոս I:
1129-1137թթ.	Լևոն I:
1143-1169թթ.	Թորոս II:
1169-1175թթ.	Սլեհ Ռուբինյան՝ Կիլիկիայի հայոց իշխան:
1187-1219թթ.	Լևոն II Մեծագործ (Ռուբինյան իշխան, 1198 թվականից՝ թագավոր Հայոց):
1198թ. հունվարի 6	Լևոն II-ի հռչակումը Հայոց թագավոր:
1199թ.	Անիի ազատագրումը Զաքարյանների կողմից:
1203թ.	Դվինի ազատագրումը Զաքարյանների կողմից:
1220թ.	Մոնղոլական առաջին արշավանքը Հայաստան:
1226-1270թթ.	Հեթում I:
1236թ.	Մոնղոլների գլխավոր արշավանքը Հայաստան:
1242-1244թթ.	Հայաստանի արևմտյան շրջանների գրավումը մոնղոլների կողմից:
1244թ.	Հարավային Հայաստանի գրավումը մոնղոլների կողմից:
1254թ.	Հայ-մոնղոլական պայմանագրի կնքումը:
1259-1261թթ.	Հակամոնղոլական ապստամբությունը:
1270-1289թթ.	Լևոն III:

1292-1441թթ.	Սիսը՝ Ամենայն հայոց կաթողիկոսության նստավայր:
1375թ.	Կիլիկիայի հայկական թագավորության անկումը:
1441թ.	Ամենայն հայոց կաթողիկոսության վերահաստատումը Էջմիածնում:
1465-1471թթ.	Սմբատ Սեֆեդինյանը՝ «Հայոց թագավոր»:
1512թ.	Հայկական տպագրության հիմնադրումը Վենետիկում:
1547թ.	Էջմիածնի խորհրդաժողովը:
1555թ.	Ամասիայի հաշտության պայմանագիրը Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև: Հայաստանի առաջին բաժանումը:
1562թ.	Սեբաստիայի խորհրդաժողովը:
1567թ..	Աբգար Եվդոկացին հիմնադրում է Կոստանդնուպոլսի հայկական առաջին տպարանը:
1604թ.	Հայերի բռնագաղթը շահ Աբաս Ի-ի կողմից:
1638թ.	Պարսկական տպագրության հիմնադրումը (Նոր Ջուղա) Խաչատուր Կեսարացու կողմից:
1639թ.	Հայաստանի երկրորդ բաժանումը Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

4. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՄՆԱՏՈՒՄԸ 97
5. ԱՆԻԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ 100
6. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ: ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ 103

ԹԵՄԱ 7. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՋԱՎԹԻՉՆԵՐԻ ԴԵՄ: ՋԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 111
1. ՍԵԼՋՈՒԿ-ԹՅՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ 111
2. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՋԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ 115
3. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՄՈՆՂՈԼՆԵՐԸ 118

ԹԵՄԱ 8. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ 123
1. ՀԱՅԵՐԸ ԿԻԼԻԿԱՅՈՒՄ 123
2. ՌՈՒԲԻՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ 126
3. ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ: ԼԵՎՈՆ ՄԵԾԱԳՈՐԾ 131
4. ՀԵԹՈՒՄՅԱՆ ԱՐՔԱՅԱՏՈՀՄԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ: ՀԵԹՈՒՄ I : ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՑՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ 136
5. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ: ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ 144

ԹԵՄԱ 9. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ X-XIV ԴԱՐԵՐՈՒՄ 149
1. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ: ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ..... 149
2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 151
3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 153
4. ԱՐՎԵՍՏԸ 155

ԲԱԺԻՆ III
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԹԵՄԱ 10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ XV ԴԱՐՈՒՄ 161

1. ՀԱՅԱՍՏԱՆԸ XV ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 161

2. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ 164

**ԹԵՄԱ 11. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹՈՒՐՔ-ՊԱՐՍԿԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ** 169

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՎ
ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋԵՎ 169
2. ՀԱՅԱՍՏԱՆԸ XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ
ԹՈՒՐՔ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 171
3. ՊԱՅՔԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
XV-XVI ԴԱՐԵՐՈՒՄ 176

ԹԵՄԱ 12. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ (XVԴ. - XVIIԴ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍ) 180

1. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:
ԴՊՐՈՑԸ: ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 180
2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ 182

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 186

Բաբկեն Հարությունյան, Հայրապետ Մարգարյան,
Արտաշես Շահնազարյան, Վլադիմիր Բարխուդարյան,
Իգիթ Ղարիբյան, Պետրոս Հովհաննիսյան

Հայոց պատմություն

Միջին դարեր

7-րդ դասարանի դասագիրք

Մաս 2

Շապիկի ձևավորումը՝ Միքայել Աբրահամյանի

Համակարգչային էջկապը՝ Միքայել Աբրահամյանի

Սրբագրիչ՝ Պարույր Հակոբյան

«ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ
Ղ. Փարպեցի 9, բն. 7, հեռ. 53-79-82, 53-79-83
E-mail: manmar@manmar.am
www.manmar.am